Զեկույց

«Քաղաքացիական հասարակության կողմից ՀԸԳՀ իրականացման մոնիթորինգի ուժեղացում (ՀԸԳՀ 52-րդ հոդվածի «a» և «b» կետերի, 54-րդ հոդվածի «b», «c», «d», «e» և «f» կետերի մշտադիտարկում)»

Հեղինակ՝ Վիկտորյա Բուռնազյան

Երևան 2025

Սույն հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակության պատասխանատվությունը կրում է բացառապես հեղինակը՝ Վիկտորյա Բուռնազյանը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԿՓ	կլիմայի փոփոխություն
ՀԸԳՀ	Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից, և Եվրոպական միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր
ՓԲԸ	փակ բաժնետիրական ընկերություն
ԵՄ	Եվրոպական միություն
ՀՆԱ	համախառն ներքին արդյունք
ՋԳ	ջերմոցային գազ
ՀԷԿ	Հիդրոէլեկտրակայան
ՋԳ-	Ջերմոցային գազերի ցածր արտանետումներով զարգացման
ՑԱԶԵՌ	երկարաժամկետ ռազմավարություն
ՉՀՀ	չափողականության, հաշվետվայնության և հավաստագրման համակարգ
ԱՍԳ	ազգային մակարդակով սահմանված գործողություններ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՎԿ	Վիճակագրական կոմիտե
ԲՀՊՏ	բնության հատուկ պահպանվող տարածք
ՏԿԵ	տարածքային կառավարում և ենթակառուցվածքներ
ԿՄԿ	կեղտաջրերի մաքրման կայան

Բովանդակություն

ԱՄՓՈՓԱԳԻՐ 4

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 9

ՀԸԳՀ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԵՎ ՀԸԳՀ ԿԻՐԱՐԿՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 12

ՀՀ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՂՄՄԱՆ ԵՎ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 19

ՀԱՄԱՅՆՔՆԵՐ 41

ԸՆԴՈՒՆՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 44

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 50

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 52

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ուսումնասիրության շրջանակում գնահատվել է ՀԸԳՀ-ի[1] ԿՓ մեղմման և հարմարվողականության վերաբերյալ դրույթների, մասնավորապես՝ ՀԸԳՀ-ի 52-րդ հոդվածի «a» և «b» կետերի, 54-րդ հոդվածի (b), (c), (d), (e), և (f) կետերի, ինչպես նաև ՀԸԳՀ-ի կիրարկման ճանապարհային քարտեզի 121-րդ, 122-րդ, 123-րդ և 130-րդ միջոցառումների կատարումը[2] 2021-2024 թվականների ընթացքում: Ուսումնասիրվել է «Անտառ», «Գյուղատնտեսություն», «Էներգետիկա» և «Թափոն» ոլորտներում Հայաստանի ԿՓ մեղմման և հարմարվողականության քաղաքականության իրականացումը, բացահայտվել են խնդիրները և բացթողումները, և համապատասխան մարմինների համար մշակվել են առաջարկություններ:

ԿՓ մեղմման և հարմարվողականության տեսանկյունից ուսումնասիրվել են 4 խոշորացված համայնքի զարգացման և սուբվենցիոն ծրագրերը: Արդյունքների հիման վրա բացահայտվել են համայնքներում ԿՓ մեղմման և հարմարվողականության քաղաքականությունների տեղայնացման խնդիրները, և մշակվել են ազգային կլիմայական քաղաքականությունը համայնքների մակարդակում տեղայանացնելու առաջարկություններ:

Ուսումնասիրվել են կլիմայի ոլորտը կարգավորող իրավական ակտերը: 14 ակտում հայտնաբերվել են բացթողումներ և մշակվել են այդ բացթողումները լրացնելու առաջարկություններ:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Հայաստանում 2021-2024 թվականների ընթացքում ԿՓ մեղմման և հարմարվողականության վերաբերյալ ՀԸԳՀ հոդվածների շրջանակում ընդունվել է 3 օրենք, ՀՀ կառավարության 7 որոշում, ՀՀ վարչապետի 1 որոշում և 4 նորմատիվ ակտ: Մշակվել են ԿՓ հարմարվողականության ծրագրերի նախագծեր ՀՀ 4 մարզի համար (Տավուշ, Շիրակ, Գեղարքունիք, Սյունիք), ինչպես նաև ԿՓ

[1]Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից, և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր, https://www.mfa.am/filemanager/eu/ՀԸԳՀ_ENG_1.pdf

[2]«Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի թիվ 666-Լ որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=153164

հարմարվողականության ծրագրի նախագիծ ՀՀ 1 ԲՀՊՑ-ի համար, հաշվետվություններ և ուղեցույցներ:

Մասնակիորեն իրականացվել են ՀԸԳՀ ճանապարհային քարտեզի 121-րդ, 123-րդ և 130-րդ միջոցառումները: 122-րդ միջոցառման իրականացումը կարելի է համարել մեկնարկած:

ԿՓ մեղմման և հարմարվողականության քաղաքականության իրականացման ուսումնասիրությունը ցույց է տվել, որ.

- «Անտառ» ոլորտում երկիրը չի կարող հասնել սահմանված թիրախներին՝ անտառածածկ տարածքների շարունակական կրճատման պատճառով: Անտառային ծածկույթի վերականգնման և նոր տնկված անտառների տարածքները փոքր են: Անտառային հրդեհներից այրվում է ավելի մեծ անտառային տարածք, քան վերականգնվում է: Մինչև 2030 թվականը ԱՍԳ-ով նախատեսված 50,000 հեկտար նոր անտառից 2021-2024թթ. տնկվել է ընդամենը 1,64%-ը:
- «Գյուղատնտեսություն» ոլորտում ԿՓ նկատմամբ դիմակայունության ապահովման համակարգերը, ինչպիսիք են հակակարկտային պաշտպանությունը, ապահովագրությունը և ոռոգումը, բավարար չափով զարգացած չեն: Կան ոռոգման ջրի սակավության և հասանելիության խնդիրներ: Գյուղատնտեսական նշանակության հողատարածքների մակերեսը նվազում է:
- «Էներգետիկա» ոլորտում երկիրը կարող է հասնել էներգետիկ հաշվեկշռում վերականգնվող էներգետիկայի մասնաբաժնի կրկնապատկման ԱՍԳ թիրախին, քանի որ փոքր ՀԷԿ-երի և արևային էլեկտրակայանների կողմից արտադրված էլեկտրաէներգիայի մասնաբաժինը 2021-2024 թվականների ընթացքում 8.57%-ից հասել է 19.4%:
- Հայաստանի տնային տնտեսությունների 58.6%-ը չի կարողանում ցուրտ ամիսներին բավարար չափով ջեռուցել իր տները: Եվրոստատի սահմանման համաձայն՝ նրանք կարող են համարվել էներգետիկ աղքատ: ՀԸԳՀ-ով սահմանված դիրեկտիվներում էներգետիկ աղքատության վերաբերյալ հատուկ կարգավորումներ չկան:

- ՀԸԳՀ հավելված 3-ի «Թափոնների կառավարում» բաժնի պահանջների մեծ մասը չի կատարվել: Հայաստանում ջրառի մեծ մասը չի մտնում կոյուղու համակարգ: Կեղտաջրերով շրջակա միջավայրի աղտոտման ծավալները և կեղտաջրերից առաջացած ՋԳ արտանետումները չեն գնահատվում: Կեղտաջրերի մաքրման կայաններից կենսագազ չի հավաքվում, ինչը հանգեցնում է ՋԳ արտանետումների աճի: 580 բնակավայրում բացակայում են կոյուղու համակարգերը: Հայաստանը չունի կեղտաջրերի կառավարման ոլորտի զարգացման ծրագիր:

Համայնքներում ԿՓ մեղմման և հարմարվողականության քաղաքականության տեղայնացման ուսումնասիրությամբ բացահայտվել է հետևյալը.

- Չնայած որոշ համայնքների սուբվենցիոն և զարգացման ծրագրերն ունեն կլիմայական ուղղվածություն, այս ծրագրերի ԿՓ ազդեցությունը չի գնահատվում:
- Սուբվենցիոն ծրագրերը չեն դիտարկվում, գնահատվում կամ պլանավորվում ՋԳ արտանետումների կրճատման տեսանկյունից: Համայնքները կամավոր կերպով նման պարտավորություններ չեն ստանձնել:
- Համայնքները կլիմայական ռիսկերի գնահատում չեն իրականացրել և ԿՓ մեղմման և հարմարվողականության ծրագիր/ռազմավարություն չեն մշակել:
- Համայնքները չունեն ԿՓ մեղմման, հարմարվողականության և էներգետիկ անցման վերաբերյալ ծրագրեր մշակելու կարողություններ և մասնագետներ:
- Համայնքների սահմանափակ բյուջեն բավարար չէ նոր նախաձեռնությունները ֆինանսավորելու համար:

ՀԸԳՀ շրջանակում ընդունված իրավական ակտերի ուսումնասիրությունը ցույց է տվել հետևյալը.

- Օրենսդրական դաշտում առկա թերությունները, մասնավորապես, գործիքակազմի, հասկացությունների, դրույթների պակասը, այլ իրավական ակտերի հետ հակասությունները, խոչընդոտում են կլիմայական թիրախներին հասնելուն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունն իրականացվել է «Աջակցություն ՀԸԳՀ-ի մոնիթորինգին, իրականացմանը և հաղորդակցությանը» ENI/2023/442-873 ծրագրի 3.1.9 բաղադրիչի («Քաղաքացիական հասարակության կողմից ՀԸԳՀ-ի իրականացման մոնիթորինգի ուժեղացում») շրջանակում: Ծրագիրն իրականացվում է GOPA Partners in Action for Change and Engagement կազմակերպության կողմից:

Ուսումնասիրությունն ուղղված է ԿՓ մեղմման և հարմարվողականության վերաբերյալ ՀԸԳՀ[3] հոդվածների դրույթների իրականացման մշտադիտարկմանը՝ ինչպես ազգային, այնպես էլ տեղական մակարդակներում:

Ուսումնասիրության նպատակներն են՝

• Մշտադիտարկել ՀԸԳՀ 52-րդ հոդվածի «a» և «b» կետերի և 54-րդ հոդվածի (b), (c), (d), (e), և (f) կետերի պահանջների կատարումը, ինչպես նաև ՀԸԳՀ-ի կիրարկման 2019 թվականի ճանապարհային քարտեզի 121-րդ, 122-րդ, 123-րդ և 130-րդ միջոցառումների իրականացումը, որոնք ապահովում են վերը նշված հոդվածների պահանջների կատարումը 2021-2024թթ. ժամանակահատվածում: (2021 թվականի մայիսի 31-ին ընդունվել է ՀՀ վարչապետի՝ ՀԸԳՀ ճանապարհային քարտեզում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին թիվ 587-Լ որոշումը[4]: Փաստաթղթում ԿՓ-ի վերաբերյալ որևէ փոփոխություն կամ լրացում չի կատարվել):

• Բացահայտել ԿՓ մեղմման և հարմարվողականության վերաբերյալ օրենսդրական և ինստիտուցիոնալ բացերը, ինչպես նաև համապատասխան քաղաքականությունների տեղայնացման մարտահրավերները:

• Ներկայացնել ԿՓ մեղմման և հարմարվողականության քաղաքականության բարելավման նպատակային առաջարկություններ:

Հայաստանում ԿՓ մեղմման և հարմարվողականության վերաբերյալ անցկացված ուսումնասիրությունների շարքում այս ուսումնասիրությունն առանձնանում է ՀԸԳՀ շրջանակում Հայաստանի օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի համապարփակ ուսումնասիրությամբ, ոլորտային կլիմայական թիրախների գնահատմամբ, բացթողումների բացահայտմամբ և առաջարկությունների ներկայացմամբ, ինչպես նաև տեղական մակարդակում կլիմայական քաղաքականության տեղայնացման խնդիրների և լուծումների ներկայացմամբ:

Ուսումնասիրությունը բաղկացած է հետևյալ գլուխներից՝ «ՀԸԳՀ հոդվածների և ՀԸԳՀ կիրարկման ճանապարհային քարտեզի միջոցառումների իրականացման համապատասխանության և կատարողականի վերլուծություն», «ՀՀ ԿՓ մեղմման և հարմարվողականության ոլորտային քաղաքականությունների իրականացման

[3]Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից, և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր, https://www.mfa.am/filemanager/eu/ՀԸԳՀ_ENG_1.pdf

[4]«Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի թիվ 666-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ վարչապետի 2021 թվականի մայիսի 31-ի թիվ 587-Լ որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=153159

վերլուծություն», «Համայնքներ», «Ընդունված իրավական և նորմատիվ ակտերի վերլուծություն», «Եզրակացություն», «Առաջարկություններ»:

«ՀԸԳՀ հոդվածների և ՀԸԳՀ կիրարկման ճանապարհային քարտեզի միջոցառումների իրականացման համապատասխանության և կատարողականի վերլուծություն» գլուխը ներկայացնում է ՀԸԳՀ 52-րդ հոդվածի «a» և «b» կետերի, 54-րդ հոդվածի (b), (c), (d), (e), և (f) կետերի, ինչպես նաև ՀԸԳՀ կիրարկման ճանապարհային քարտեզի 121-րդ, 122-րդ, 123-րդ և 130-րդ միջոցառումների իրականացման համեմատական վերլուծությունը:

«ՀՀ կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության ոլորտային քաղաքականությունների իրականացման վերլուծություն» գլուխը ներկայացնում է «Անտառ, «Գյուղատնտեսություն», «Էներգետիկա» և «Թափոն» ոլորտներում ԿՓ մեղմման և հարմարվողականության քաղաքականության իրականացման ներկայիս վիճակը: Գլխում բացահայտվում են խնդիրները/բացթողումները, և նպատակային առաջարկություններ են ներկայացվում համապատասխան մարմիններին:

«Համայնքներ» գլխում ներկայացված են ԿՓ հարմարվողականության և մեղմման քաղաքականության տեղայնացման խնդիրները 4 խոշորացված համայնքներում իրականացված ուսումնասիրության օրինակով և քաղաքականությունը տեղայնացնելու վերաբերյալ առաջարկություններ:

«Ընդունված իրավական և նորմատիվ ակտերի վերլուծություն» գլխում բացահայտվում են կլիմայի ոլորտը կարգավորող 14 իրավական ակտերի բացթողումները և ներկայացվում են դրանց լրացման առաջարկություններ:

«Եզրակացություն» գլխում ամփոփված են հետազոտության հիմնական եզրահանգումները:

«Առաջարկություններ» գլխում ներկայացված են հետազոտության շրջանակում մշակված առաջարկությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունը կատարվել է ԿՓ մեղմման և հարմարվողականության վերաբերյալ ՀԸԳՀ հոդվածների (հոդվածներ 52«a», «բ», 54 (b), (c), (d), (e), և (f)), ինչպես նաև ՀԸԳՀ կիրարկման ճանապարհային քարտեզի համապատասխան միջոցառումների (121-րդ, 122-րդ, 123-րդ և 130-րդ) իրականացման գնահատման շրջանակում:

Ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են վիճակագրական վերլուծության, թեմատիկ վերլուծության և համեմատական վերլուծության մեթոդներ հետևյալ կառուցվածքով.

Վերլուծության համար օգտագործված մեթոդները ներառում են հետևյալը.

1. Իրավական և ռազմավարական փաստաթղթերի վերլուծություն

Ուսումնասիրության շրջանակում ուսումնասիրվել են 2021-2024 թվականներին Հայաստանում ընդունված այն իրավական ակտերը, որոնք ուղղված են ԿՓ մեղմման և հարմարվողականության վերաբերյալ ՀԸԳՀ պահանջների ապահովմանը:

- ՀՀ օրենքներ, ՀՀ կառավարության և վարչապետի որոշումներ
- Պետական մարմինների կողմից ընդունված ենթաօրենսդրական ակտեր
- ԿՓ հարմարվողականության ծրագրեր, ինչպես նաև համայնքների հնգամյա զարգացման և սուբվենցիոն ծրագրեր
- Միջազգային կլիմայական ծրագրերի շրջանակում մշակված փաստաթղթեր

2. Նամակագրություն պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ, քննարկումներ ոլորտային պետական մարմինների ներկայացուցիչների և անկախ փորձագետների հետ

- Հարցումներ են ուղարկվել ՀՀ շրջակա միջավայրի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, էկոնոմիկայի և ներքին գործերի նախարարություններ, ինչպես նաև 4 տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին:
- Ոլորտային պետական մարմինների ներկայացուցիչների և անկախ փորձագետների մասնակցությամբ անցկացվել է քննարկում՝ գործնական խոչընդոտները բացահայտելու համար:

3. Վիճակագրական վերլուծություն, թեմատիկ վերլուծություն և համեմատական գնահատում

- **Վիճակագրական վերլուծություն՝** վերլուծվել են 2021-2024 թվականների ընթացքում ձեռնարկված ՀԸԳՀ-ի կլիմայական հոդվածների պահանջների կատարման գործողությունները և դրանց քանակական տվյալները:
- **Թեմատիկ վերլուծություն՝** վերլուծվել են տեղական ինքնակառավարման մարմինների, ոլորտային պետական մարմինների և փորձագետների հետ նամակագրության և քննարկումների արդյունքում ստացված որակական

տվյալները՝ ԿՓ մեղմման և հարմարվողականության քաղաքականության իրականացման մարտահրավերները, կարողությունների բացերը և ոլորտային կարիքները բացահայտելու համար:

- **Համեմատական գնահատում՝** ՀԸԳՀ ճանապարհային քարտեզի միջոցառումները համեմատվել են Հայաստանում փաստացի իրականացվող քաղաքականությունների, ծրագրերի և գործողությունների հետ:

4. Ցուցիչներ

Մոնիթորինգն իրականացվել է՝ օգտագործելով հետևյալ ցուցիչները.

1. **Ընդունված իրավական ակտերի քանակը և դրանց գործնական կիրառելիությունը**

2. **Ոլորտային քաղաքականությունները**

Ա) «Անտառ» ոլորտ

- «Անտառ» ոլորտի համար ԿՓ հարմարվողականության ծրագրի առկայությունը
- Անտառային հողերի և անտառածածկ տարածքների փոփոխությունների դինամիկան
- Անտառվերականգման և անտառապատման աշխատանքների ընդհանուր մակերեսը
- Անտառային հրդեհներից տուժած անտառային հողերի ընդհանուր մակերեսը
- Ապօրինի հատված ծառերի քանակը

Բ) «Գյուղատնտեսություն» ոլորտ

- «Գյուղատնտեսություն» ոլորտի համար ԿՓ հարմարվողականության ծրագրի առկայությունը
- Գյուղատնտեսական արտադրանքի մասնաբաժինը ՀՆԱ-ում
- Գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսի փոփոխությունների դինամիկան
- Նորատունկ ինտենսիվ պտղատու այգիների և կարկտապաշտպան ցանցերով ծածկված այգիների տարածքի հարաբերակցությունը
- Ոռոգման համակարգում ջրակորստների դինամիկան
- Ոռոգման առաջադեմ տեխնոլոգիաների կիրառմամբ ոռոգվող գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսը
- Գյուղատնտեսական ապահովագրության մեխանիզմների զարգացման միտումները
- Գյուղատնտեսական հարմարվողականության ծրագրերի՝ այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների կողմից աջակցություն ստացած ծրագրերի քանակը
- Գյուղատնտեսական նշանակության հողերի չօգտագործման և մասնատվածության մակարդակի նվազմանն ուղղված միջոցառումների արդյունքում կոնսոլիդացված հողերի մակերեսը

Գ) «Էներգետիկա» ոլորտ

- «Էներգետիկա» ոլորտի համար հարմարվողականության ծրագրի առկայությունը
- Վերականգնվող էներգիայի աղբյուրներից արտադրված էլեկտրաէներգիայի մասնաբաժնի դինամիկան էներգետիկ հաշվեկշռում
- 2022-2024 թվականների ընթացքում Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի կողմից իրականացված էներգախնայողության միջոցառումների քանակը

Դ) «Թափոն» ոլորտ (պինդ թափոնների կառավարում, կեղտաջրեր)

- 2021-2024 թվականների ընթացքում Հայաստանում սանիտարական նորմերին համապատասխան ստեղծված աղբավայրերի քանակը
- թափոնների վերամշակման գործող ձեռնարկությունների քանակը
- վտանգավոր թափոնների չեզոքացման, կիզման գործող ձեռնարկությունների թիվը և նրանց ընդհանուր արտադրական ծավալը
- «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից կառավարվող կոյուղու ցանցի երկարությունը, կեղտաջրերի մեխանիկական մաքրման կայանների քանակը և ջրահեռացման համակարգում պոմպակայանների քանակը
- Ջրառի, արտադրված կեղտաջրերի և մաքրված կեղտաջրերի ծավալները Հայաստանում 2021-2023 թվականների ընթացքում

5. Շահագրգիռ կողմեր

Ուսումնասիրության համար ընտրված շահագրգիռ կողմերն են՝ պետական մարմինները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, տեղական ինքնակառավարման մարմինները և ԵՄ-ն:

ՀԸԳՀ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԵՎ ՀԸԳՀ ԿԻՐԱՐԿՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԸԳՀ 52-րդ հոդվածի «a» և «b» կետեր

Համաձայնագրի 52-րդ հոդվածով սահմանված է, որ համագործակցությունը պետք է խթանի ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակով ձեռնարկվող միջոցառումները, կապված՝ «a» ԿՓ մեղմման և «b» ԿՓ հարմարվողականության հետ: 52-րդ հոդվածի «a» և «b» կետերի պահանջների կատարումը նախատեսված է ՀԸԳՀ ճանապարհային քարտեզի 121-րդ և 130-րդ միջոցառումներով:

- **121-րդ միջոցառում, իրականացման վերջնաժամկետը՝ 2026 թվականի 1-ին եռամսյակ (52-րդ հոդվածի «a» և «b» կետեր, 54-րդ հոդվածի «b» կետ)**

ԿՓ-ին առնչվող ՋԳ արտանետումների (ներառյալ ավիացիոն արտանետումները) գույքագրման ազգային համակարգի ստեղծում, քաղաքականությունների, միջոցառումների և կանխատեսումների ներպետական համակարգի ստեղծում և համապատասխան ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում ((280/2004/ԵՄ որոշումն ուժը կորցրած ճանաչող 525/2013/ԵՄ Կանոնակարգի հոդվածներ 5 և 12)):

Կատարողական

Ընդունվել է 4 իրավական ակտ[5,6,7,8]:

Բացթողումներ

- Շրջակա միջավայրի նախարարությունից ստացված թիվ 3/18.15/618 պատասխանի համաձայն[9]՝ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը ԿՓ-ին առնչվող ՋԳ արտանետումների (ներառյալ ավիացիոն արտանետումները) գույքագրման ազգային համակարգի ստեղծման, քաղաքականությունների, միջոցառումների և կանխատեսումների ներպետական համակարգի ստեղծման և համապատասխան ինստիտուցիոնալ կարողությունների հզորացման նպատակով 2021-2024 թվականներին տեխնիկական աջակցություն չի ստացել:

- Կանխատեսումների ազգային համակարգը դեռևս չի ստեղծվել (վերջնաժամկետը 2026 թվականի առաջին եռամսյակն է): Շրջակա միջավայրի նախարարությունից

[5] «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (ՀՕ-522-Ն, 2022 թվականի դեկտեմբերի 7) ՀՀ օրենք, https://www.arlis.am/documentview.aspx?docid=172207

[6] ՀՀ ջերմոցային գազերի ազգային կադաստրի 1990-2019թթ. հաշվետվություն, http://env.am/storage/files/nir-2019-eng.pdf

[7] «Ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2024 թվականի հունվարի 11-ի թիվ 54-ն որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=188713

[8] «Կլիմայական կանխատեսումների և վաղ ազդարարման համակարգի բարելավմանն ուղղված միջոցառումների ծրագրի հաստատման և իրականացման ժամկետների մասին» «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի 2022 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 1176-Լ հրաման

[9] Տե՛ս Հավելված 1

ստացված թիվ 5/07.3/1741 պատասխանի համաձայն[10]՝ «Վտանգավոր հիդրոօդերևութաբանական երևույթների կանխատեսման և վաղօրոք նախազգուշացման համակարգի հիմնում» ծրագիրը ներառված է նախարարության 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի հայտում:

Եզրակացություն

Միջոցառումը կատարվել է մասնակիորեն:

- **130-րդ միջոցառում, իրականացման վերջնաժամկետը՝ 2021 թվականի 1-ին եռամսյակ (52-րդ հոդվածի «b» կետ, 54-րդ հոդվածի «c» և «d» կետեր)**

ԿՓ նկատմամբ հարմարվողականության հայեցակարգի ու ազգային գործողությունների ծրագրի մշակում՝ ուղղված գյուղատնտեսական, տնտեսական և կլիմայի վրա հնարավոր ազդեցություն ունեցող այլ ոլորտներում կլիմայական փոփոխությունների մեղմացման, նվազեցման և կանխարգելման պահանջներին և միջոցառումներին համահունչ գործունեության պլանավորմանը և իրականացմանը:

Կատարողական

130-րդ միջոցառման շրջանակում ընդունվել և մշակվել է հարմարվողականության ուղղված

[10] Տե՛ս Հավելված 2

2 օրենք[11,12], ՀՀ կառավարության 6 որոշում[13,14,15,16,17,18], 1 հրաման[19], ոլորտային և մարզային հարմարվողականության 6 նախագիծ[20,21,22,23,24,25], 1 ռազմավարություն[26], 2

[11] «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 2023 թվականի մայիսի 3-ի թիվ ՀՕ-150-Ն օրենք, https://www.arlis.am/documentview.aspx?docid=178443

[12] «ՀՀ ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ 2022 թվականի հուլիսի 7-ի թիվ ՀՕ-316-Ն օրենք, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=166206

[13] «Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2023-2030 թվականների ազգային մակարդակով սահմանված գործողությունների իրականացման ծրագիրը, ֆինանսավորման ռազմավարությունն ու ներդրումային պլանը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ (2023թ.), https://www.e-draft.am/projects/5672/about

[14] «Ջրային ռեսուրսների ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության 2022-2026 թվականների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2022 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 1692-Լ որոշում, https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/GV1E-287B-6173-DAB9/1692.1.pdf

[15] «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 1886-Լ որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 20-ի որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=180654

[16] «Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգի 2023-2026 թվականների զարգացման ռազմավարությունը և դրանից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի թիվ 174-Լ որոշում, https://www.arlis.am/documentview.aspx?docid=174219

[17] «Միավորված ազգերի կազմակերպության «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհուրդ ստեղծելու, դրա կազմը և աշխատակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2012 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 955-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ վարչապետի 2021 թվականի հուլիսի 6-ի թիվ 719-Ա որոշում, https://www.e-gov.am/decrees/item/23576/

[18] «Պետական փորձաքննական դրական եզրակացություն ստացած հիմնադրութային փաստաթղթերում չներառված՝ բնության հատուկ պահպանվող տարածքներում կամ անտառային հողերում կամ բնակավայրերի կանաչ գոտիներում կամ պատմամշակութային հուշարձանների սահմաններում կամ բնապահպանական հողերում գնահատման և փորձաքննության ենթակա գործունեության տեսակները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 2-ի թիվ 638-Ն որոշում, https://e-gov.am/gov-decrees/item/42558/

[19] «ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2011 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 167-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 2024 թվականի հունվարի 15-ի թիվ 03-Ն հրաման, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=188846

[20] «Ջերմոցային գազերի արտանետումների մեղմման քաղաքականությունների և միջոցառումների չափման, մշտադիտարկման, գնահատման և հաշվետվողականության մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, https://drive.google.com/file/d/14m14CjW_mG0lyZjVe8Bw82Ahk5ulPuDw/view

[21] «Կլիմայի փոփոխության գործոնների ինտեգրում «Սևան» ազգային պարկի կառավարման պլանում և հարմարվողականության միջոցառումների իրականացում»: Փաստաթուղթը մշակվել է «EU4Sevan» ծրագրի շրջանակում (պաշտոնապես հրապարակված չէ):

[22] Տավուշի մարզի կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրի նախագիծ, https://drive.google.com/drive/folders/1Jp-IoBfzr2UJXcvPbBF5YhvhjwQojC7e

[23] Շիրակի մարզի կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրի նախագիծ, https://drive.google.com/drive/folders/1Jp-IoBfzr2UJXcvPbBF5YhvhjwQojC7e

[24] Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրերի նախագծերը մշակվել են ՄԱԶԾ JSB-2 ծրագրի շրջանակում (պաշտոնապես հրապարակված չեն)

[25] «Ռազմավարական էկոլոգիական գնահատման և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ուղեցույցները հաստատելու մասին» Շրջակա միջավայրի նախարարի հրամանի նախագիծ, https://www.e-draft.am/index.php/projects/7464/about

[26] «Հարմարվողականության ազգային ծրագրի հաղորդակցման ռազմավարություն», https://drive.google.com/file/d/1UVqT5ECZrnzoCjLcnBjVHQ2mjjbIpjFJ/view

ճանապարհային քարտեզ[27,28], 1 ուղեցույց[29] և 2 մարզի համար կլիմայի փոփոխության ռիսկերի ատլաս[30]:
130-րդ միջոցառման շրջանակում (համաձայն ՀԸԳՀ 54-րդ հոդվածի «c» կետի, որը վերաբերում է ԿՓ մեղմմանը), ընդունվել է ՀՀ կառավարության 2 որոշում[31,32]:

Բացթողումներ

- ՀԸԳՀ կիրարկման ճանապարհային քարտեզով նախատեսված ԿՓ հարմարվողականության ազգային ծրագիրն ընդունվել է ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի թիվ 749-Լ որոշմամբ, սակայն ծրագրով նախատեսված ոչ բոլոր միջոցառումներն են իրականացվել: Մասնավորապես, որոշման գործողությունների ծրագրով նախատեսված ոլորտային և մարզային հարմարվողականության ծրագրերը (բացառությամբ ջրային ոլորտի) չեն ընդունվել: ՀՀ փոխվարչապետի 2023 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 02.1/03.8/31094 հանձնարարականի և ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի 2022 թվականի դեկտեմբերի 26-ի նիստի թիվ ԿԱ/382 արձանագրության համաձայն՝ ոլորտային հարմարվողականության ծրագրերը պետք է ներառվեն համապատասխան ոլորտների զարգացման ռազմավարություններում: Արդյունքում թիվ 749-Լ որոշման պահանջները չեն կատարվել, ինչը նեղացնում է հարմարվողականության միջոցառումների շրջանակը:

- **Մշակվել, բայց դեռևս չի ընդունվել՝**

- «Ջերմոցային գազերի արտանետումների մեղմման քաղաքականությունների և միջոցառումների չափման, մշտադիտարկման, գնահատման և հաշվետվողականության մասին» ՀՀ կառավարության որոշում

- **Դեռևս չեն մշակվել՝**
- ԿՓ մեղմման քաղաքականությունների և գործողությունների վերաբերյալ տվյալների շտեմարանը
- ԿՓ նկատմամբ խոցելիությունների ու հարմարվողականության տվյալների շտեմարանը

[27] Հայաստանի հարմարվողականության մոնիթորինգի և գնահատման շրջանակը և ճանապարհային քարտեզ, https://drive.google.com/file/d/1cRTTlptByYG_3dnP3kJzRBX7erhyhPpy/view

[28] «Հայաստանի համար ջերմոցային գազերի ազգային արտանետումների գույքագրման գործուն ազգային համակարգի և մոնիթորինգի, հաշվետվությունների ներկայացման և ստուգման համակարգի մշակման ճանապարհային քարտեզ», https://drive.google.com/file/d/1SeZ8l7HmFFNjbS1x7BX13VX5hyzGUv7f/view

[29] «Բնակավայրերի համար կլիմայի փոփոխության և հարմարվողականության ծրագրերի մշակման մեթոդական ուղեցույց», https://api.mtad.am/storage/pages/files/2022/11/pdf/07_12-01-sc796-6368bb5f3eccc.pdf

[30] «Կլիմայի փոփոխության ռիսկերի ատլաս. Լոռու և Շիրակի մարզեր», https://drive.usercontent.google.com/download?id=1mvxjcP83hdYIZW5jkWxfeHafr3KeCodD&export=download&authuser=0

[31] «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 24-ի թիվ 398 որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=161408

[32] «Հայաստանի Հանրապետության ջերմոցային գազերի ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ ռազմավարությունը (մինչև 2050 թվական) հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 2318-Լ որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=188021

- ԿՓ դիմակայման համար ստացված ֆինանսական աջակցության վերաբերյալ տվյալների շտեմարանը:

Եզրակացություն

Միջոցառումը կատարվել է մասնակիորեն:

ՀԸԳՀ 54-րդ հոդվածի «b», «c», «d», «e» և «f» կետերը

Ըստ ՀԸԳՀ-ի 54-րդ հոդվածի՝ համագործակցությունը պետք է ներառի հետևյալ նպատակները՝

«b» կլիմայի փոփոխությանն առնչվող արդյունավետ գործողություններ ձեռնարկելու նպատակով կարողությունների շրջանակի ընդլայնմանն ուղղված միջոցառումներ
«c» կլիմայի փոփոխության երկարաժամկետ մեղմացման և դրան հարմարեցման համար կլիմային առնչվող ընդհանուր ռազմավարության և գործողությունների պլանի մշակում
«d» խոցելիության և հարմարվողականության գնահատումների մշակում
«e» ցածր ածխածնային զարգացման ծրագրի մշակում
«f» կլիմայի փոփոխության մեղմացմանն ուղղված երկարաժամկետ միջոցառումների մշակումն ու իրականացումը՝ ջերմոցային գազերի արտանետումների քվոտաների հարցին անդրադառնալու միջոցով:

ՀԸԳՀ-ի 54-րդ հոդվածի «b», «c», «d», «e» և «f» կետերի պահանջների կատարումը նախատեսված է ՀԸԳՀ ճանապարհային քարտեզի 122-րդ, 123-րդ և 130-րդ միջոցառումներով:

- **122-րդ միջոցառում, իրականացման վերջնաժամկետ՝ 2026 թվականի 1-ին եռամսյակ** (54-րդ հոդվածի «e», «f» կետեր; 2003/87/ԵՀ հրահանգ; 600/2012 կանոնակարգ)

Ջերմոցային գազերի մարդածին արտանետումների ազգային գույքագրման, ազգային հաղորդագրությունների և երկամյա զեկույցների պարբերական մշակում:

Կատարողական

Իր պարտավորությունների շրջանակում Հայաստանը մշակել և ներկայացրել է ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի դրույթների իրականացման վերաբերյալ 4 ազգային հաղորդագրություն[33, 34, 35, 36]:

[33] Կլիմայի փոփոխության վերաբերյալ առաջին ազգային հաղորդագրություն, http://env.am/storage/files/fnc-of-armenia-eng.pdf
[34] Կլիմայի փոփոխության վերաբերյալ երկրորդ ազգային հաղորդագրություն, http://env.am/storage/files/snc-final-eng-0109101.pdf
[35] Կլիմայի փոփոխության վերաբերյալ երրորդ ազգային հաղորդագրություն, http://env.am/storage/files/1armenias-tnc-2015-eng.pdf
[36] Կլիմայի փոփոխության վերաբերյալ չորրորդ ազգային հաղորդագրություն, http://env.am/storage/files/fnc-eng.pdf

Մշակման փուլում է Կլիմայի փոփոխության վերաբերյալ հինգերորդ ազգային հաղորդագրությունը: Մշակվել է երկամյա առաջընթացի 3 զեկույց[37,38,39]: 2023 թվականին ընդունվել է 1990-2019թթ. համար ՀՀ ջերմոցային գազերի արտանետումների ազգային կադաստրի հաշվետվությունը[40]: Ընդունվել է նաև ՀՀ կառավարության 2 որոշում[41,42]:

Եզրակացություն

122-րդ միջոցառումը չի անդրադառնում ՀԸԳՀ 54-րդ հոդվածի «e» (ցածր ածխածնային զարգացման ծրագրի մշակում) և «f» կետերին (կլիմայի փոփոխության մեղմացմանն ուղղված երկարաժամկետ միջոցառումների մշակումն ու իրականացումը՝ ջերմոցային գազերի արտանետումների քվոտաների հարցին անդրադառնալու միջոցով): Այս կետերի կատարումն ապահովվել է 2023 թվականի դեկտեմբերի 28-ին ՋԳ-ՑԱՋԵՌ-ի մասին թիվ 2318-Լ որոշման ընդունմամբ: ՋԳ-ՑԱՋԵՌ-ի իրականացման միջոցառումները ներառում են նաև ՋԳ արտանետումների քվոտաներ տալու մշակույթի ներառում, ինչպես նաև ներքին և արտաքին վճարներ և տուգանքներ որոշ արտանետումների սահմանաչափերի գերազանցման համար: Որոշումը ներառում է նաև ածխածնի գնագոյացման գործիքների ընտրողաբար ներդնում (արտանետումների առևտրի համակարգ, ածխածնի հարկ, հաշվանցման մեխանիզմներ և արդյունքների վրա հիմնված ածխածնային ֆինանսավորում): Այս հարցին անդրադարձ է կատարվել նաև «Կլիմայի մասին» ՀՀ օրենքի նախագծում: Օրենքի ընդունմամբ կստեղծվեն իրավական (ինստիտուցիոնալ) հիմքեր ածխածնի առևտրի համակարգի ներդնման համար:

122-րդ միջոցառման իրականացումը կարելի է համարել մեկնարկած:

- **123-րդ միջոցառում, իրականացման վերջնաժամկետը՝ 2026 թվականի 1-ին եռամսյակ** (54-րդ հոդվածի «d» կետ, կանոնակարգ 525/2013):

ՉՀՀ համակարգի հիմնում, ԿՓ խնդիրների լուծմանն ուղղված տեխնոլոգիաների զարգացման և փոխանցման գործընթացի ձևավորում և հետևողական ամրապնդում:

[37] Երկամյա առաջընթացի առաջին զեկույց, http://env.am/storage/files/bur-report-eng.pdf
[38] Երկամյա առաջընթացի երկրորդ զեկույց, http://env.am/storage/files/2bur-eng-final.pdf
[39] Երկամյա առաջընթացի երրորդ զեկույց, http://env.am/storage/files/bur3-armenia.pdf
[40] Հայաստանի Հանրապետության ջերմոցային գազերի ազգային կադաստրի 1990-2019թթ հաշվետվություն, http://env.am/storage/files/nir-2019-eng.pdf
[41] «Հայաստանի Հանրապետության ջերմոցային գազերի ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ ռազմավարությունը (մինչև 2050 թվական) հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 2318-Լ որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=188021
[42] «Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների ազգային մակարդակով սահմանված գործողությունները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի թիվ 610-Լ որոշում, https://www.e-gov.am/gov-decrees/item/36064/

Կատարողական

Ընդունվել է ՀՀ կառավարության 1 որոշում[43] և նախարարի 1 հրաման[44]: Մշակվել է կառավարության որոշման 1 նախագիծ[45] և 1 օրինագիծ[46]: Որպես ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի հավելված 1-ում չընդգրկված կողմ՝ Հայաստանը թափանցիկության գործող կարգավորումների շրջանակում արդեն ստեղծել է ՉՀՀ ազգային համակարգ: Նշանակվել է պաշտոնական համակարգող մարմին (ՇՄՆ), ինչպես նաև գործընթացում ներգրավված են այլ մարմիններ, ստեղծվել է հորիզոնական միջգերատեսչական համակարգման և ստուգման մեխանիզմ[47]:

Բացթողումներ

«Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2023-2030 թվականների ազգային մակարդակով սահմանված գործողությունների իրականացման ծրագիրը, ֆինանսավորման ռազմավարությունն ու ներդրումային պլանը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագիծը և «Կլիմայի մասին» օրենքի նախագիծը դեռևս չեն ընդունվել:

Մեղմմանն ուղղված գործողությունների հավաքման ընթացակարգ մշակված չէ:

Եզրակացություն

Միջոցառումը կատարվել է մասնակիորեն:

[43] «Ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2024 թվականի հունվարի 11-ի թիվ 54-Ն որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=188713

[44] «Ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման որակի ապահովման ընդհանուր ծրագիրը և դրանից բխող տարեկան պլանը հաստատելու մասին» ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2024 թվականի օգոստոսի 1-ի թիվ 310-Լ հրաման, http://env.am/storage/files/hraman310-l_1.pdf

[45] «Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2023-2030 թվականների ազգային մակարդակով սահմանված գործողությունների իրականացման ծրագիրը, ֆինանսավորման ռազմավարությունն ու ներդրումային պլանը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ (2023թ.), https://www.e-draft.am/projects/5672/about

[46] «Կլիմայի մասին» օրենքի նախագիծ, https://www.e-draft.am/projects/7726

[47] «Հայաստանի համար ջերմոցային գազերի ազգային արտանետումների գույքագրման գործուն ազգային համակարգի և մոնիթորինգի, հաշվետվությունների ներկայացման և ստուգման համակարգի մշակման ճանապարհային քարտեզ», https://drive.google.com/file/d/1SeZ8l7HmFFNjbS1x7BX13VX5hyzGUv7f/view

ՀՀ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՂՄՄԱՆ ԵՎ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը համաշխարհային մասշտաբով ջերմոցային գազերի ամենացածր արտանետումներով երկրներից է՝ ընդամենը 0.02%: Սակայն երկիրը խիստ խոցելի է ԿՓ նկատմամբ: Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տվյալներով՝ եթե մինչև 2016 թվականը Հայաստանում նախաարդյունաբերական շրջանի (1929թ.) հետ համեմատ գրանցվել էր ջերմաստիճանի աճ 1.23°C-ով, ապա 2022 թվականին ջերմաստիճանը նորմայից բարձր էր 1.7°C-ով, 2023 թվականին՝ 1.6°C-ով, իսկ 2024 թվականին՝ դարձյալ 1.7°C-ով: Վերջին տարիներին նկատվում է կլիմայական ռիսկերի աճ, այդ թվում՝ ձնածածկույթի նվազում, մթնոլորտային տեղումների նվազում և ջրային սթրեսի աճ: Զգալիորեն աճել են ծայրահեղ եղանակային երևույթների և դրանցից բխող վտանգավոր բնական երևույթների՝ սելավների, ջրհեղեղների, առատ տեղումների, անտառային հրդեհների, կարկուտի, ցրտահարության և երաշտի հաճախականությունը և ուժգնությունը, ինչպես նաև սեզոնային եղանակային անոմալիաները, որոնք բացասաբար են անդրադառնում էկոհամակարգերի, տնտեսության, մարդու գործունեության և առողջության վրա:

Այս գլխում քննվում է Հայաստանի ԿՓ մեղմման և հարմարվողականության քաղաքականության իրականացումը «Անտառ», «Գյուղատնտեսություն», «Էներգետիկա» և «Թափոն» (կոշտ թափոնների կառավարում, կեղտաջրեր) ոլորտներում:

I. «Անտառ» ոլորտ (ՀԸԳՀ 52-րդ հոդվածի «b» կետ, 54-րդ հոդվածի «c» և «d» կետեր, ՀԸԳՀ ճանապարհային քարտեզի 130-րդ միջոցառում):

Հայաստանի անտառային ծածկույթի վերաբերյալ տարբեր աղբյուրներից ստացված տվյալները տարբեր են: ՀՀ անտառային պետական ֆոնդն ամենավերջին՝ 1993 թվականի հաշվառման արդյունքներով կազմում է երկրի տարածքի մոտ 11.2%-ը՝ 460.000 հեկտար, որից 334.100 հեկտարն անտառածածկ տարածքներն են (այս թվերը չեն ներառում անտառային տարածքների փոփոխությունները հետագա տարիներին):

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության «Հայաստանում կենսաբազմազանության ինտեգրված կառավարում» ծրագրի կողմից 2011 թվականին հեռազննման մեթոդներով ստացված տվյալների համաձայն՝ Հայաստանի անտառային ֆոնդը կազմում է 332.332 հեկտար կամ երկրի ընդհանուր տարածքի մոտ 11.17%-ը[48]:

1990-2019թթ. համար ՀՀ ջերմոցային գազերի արտանետումների ազգային կադաստրի հաշվետվության համաձայն՝ «Անտառկառավարում և այլ հողօգտագործում» ոլորտից CO_2-ի կլանման ծավալները նվազել են՝ 2010թ. -550.1 Գգ CO_2 համարժեքից մինչև 2019թ. -373.0 Գգ CO_2 համարժեք:

Հայաստանի կլիմայական քաղաքականության մեջ անտառային ոլորտը դիտարկվում է ինչպես հարմարվողականության, այնպես էլ մեղմման տեսանկյունից:

[48] ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կայք՝ http://env.am/shrjaka-mijavayr/yndhanur-texekutyunner-antar

Անտառկառավարման ԿՓ հարմարվողականության ծրագիրը, որը նախատեսվել է Հայաստանի կառավարության կողմից 2021 թվականի մայիսի 13-ի թիվ 749-Լ որոշմամբ, չի ընդունվել: Դրա փոխարեն որոշվել է այն նախ ներառել անտառների կառավարման ռազմավարության մեջ, իսկ ավելի ուշ՝ ներկայումս մշակվող շրջակա միջավայրի ռազմավարության մեջ:
Ըստ Վիճակագրական կոմիտեի 2024 թվականի հաշվետվության[49]՝ 2021-ից 2023 թվականներին անտառային հողերի և անտառածածկ տարածքների մակերեսը նվազել է:

Անտառային հողերն՝ ըստ ՀՀ ՎԿ-ի



Եզրակացություն

1993 թվականի անտառային պետական ֆոնդի հաշվառումից երեսուն տարի անց անտառային հողերը կրճատվել են 126.200 հեկտարով: Միայն 2021-2023 թվականների ընթացքում դրանք նվազել են 200 հեկտարով:

Անտառածածկ տարածքներն՝ ըստ ՀՀ ՎԿ-ի

[49]Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2024, Շրջակա միջավայր և բնական պաշարներ, https://armstat.am/file/doc/99552323.pdf



Եզրակացություն

1993 թվականի հաշվառումից երեսուն տարի անց անտառածածկ տարածքները նվազել են 45.000 հեկտարով:

Հայաստանի պարտավորությունները.

- Ըստ ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 41-11 որոշման[50]՝ անտառածածկը հասցնել 20.1% (տնկել **266.500** հեկտար անտառ):
- Ըստ ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի թիվ 610-Լ որոշման[51]՝ անտառածածկը հասցնել 12.9% (տնկել **50.000** հեկտար անտառ):
- Ըստ ՋԳ-ՑԱՁԵՌ-ի մասին ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 2318-Լ որոշման[52]՝ անտառածածկը հասցնել մինչև **450.000** հեկտարի:

ՎԿ տվյալները Հայաստանում ապօրինի անտառահատումների, անտառային հրդեհների և անտառվերականգնման վերաբերյալ[53]

[50]«ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի ներքո Հայաստանի Հանրապետության ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողություններին/ ներդրումին» հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 41-11 արձանագրային որոշում, https://www.e-gov.am/protocols/item/544/

[51]«Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների ազգային մակարդակով սահմանված գործողությունները հաստատելու մասին» ՀՀ կառավարություն 2021 թվականի ապրիլի 22-ի թիվ 610-Լ որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=151985

[52] «Հայաստանի Հանրապետության ջերմոցային գազերի ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ ռազմավարությունը (մինչև 2050 թվական) հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 2318-Լ, որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=188021

[53]Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2024, Շրջակա միջավայր և բնական պաշարներ, https://armstat.am/file/doc/99552323.pdf

Տարի	Ապօրինի հատված ծառերի քանակը	Հրդեհված անտառածածկ տարածքը, հա	Անտառ-վերականգնումը, հա
2021թ.	19674	890	3,3
2022թ.	17193	1099,4	6,1
2023թ.	13973	179	0
Ընդհանուր	50641	2168	63,4

Եզրակացություն

Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ 3 տարվա ընթացքում հրդեհված անտառածածկ տարածքը 2104.6 հա-ով գերազանցում է վերականգնված անտառածածկ տարածքին:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության տվյալները 2021-2024 թվականներին ՀՀ անտառտնտեսություններում ապօրինի անտառահատումների և անտառային հրդեհների, անտառվերականգնման և անտառմշակույթների տնկման վերաբերյալ

Տարի	«Հայանտառ» ՊՈԱԿ-ի անտառտնտեսու-թյուններում հայտնաբերված ապօրինի հատված ծառերի քանակը	Հրդեհված անտառա-ծածկ տարածքը, (հա)	Անտառվերա-կանգնում/կոճղա-շիվային վերահ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տարածքներում, (հա)	Անտառմշակույթնե-րի հիմնադրում «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տարածքում (հա)
2021թ.	11962	150,205	93	118,3
2022թ.	2692	199,2364	77	167,3
2023թ.	13644	147,552	96	344,2
2024թ.	9062 (ներառյալ ԲՀՊՏ-ները)	31,867	124,6	194,0
Ընդհա-նուր	40960	528,8604	390,6	823,8

2021-2024 թվականներին ԲՀՊՏ-ներում հայտնաբերվել է 4109 ապօրինի հատված ծառ, հրդեհված տարածքի մակերեսը կազմել է 982,236 հեկտար, իսկ անտառվերականգնման աշխատանքներ իրականացվել են մոտ 50 հեկտարի վրա:

Պետական մարմիններից բացի, անտառվերականգնման աշխատանքներ իրականացնում են նաև տարբեր ՀԿ-ներ, սակայն նրանց կողմից տնկված անտառների մասնաբաժինը փոքր է:

2020-2022 թվականներին անտառվերականգնման և անտառների բնական վերաճի օժանդակման միջոցառումների վերաբերյալ անցկացված ուսումնասիրության արդյունքում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և

մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ[54]-ը «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից կառավարվող 13 անտառտնտեսություններում հայտնաբերել է հետևյալ խնդիրները.

- Անհամապատասխանություն անտառապատման պլանավորված և փաստացի տարածքների միջև
- Տեղական կենսակլիմայական պայմաններին անհամապատասխան ծառատեսակների ընտրություն
- Տնկված ծառերի կենսունակության ցածր մակարդակ (միջինում 40%)
- Տնկված ծառերի անբավարար խնամք
- Ոռոգման համակարգի բացակայություն
- Ցանկապատերի անբավարար վիճակ (վատ որակի ցանկապատեր կամ դրանց բացակայություն)

Եզրակացություն

1. Հայաստանի անտառների վերաբերյալ տարբեր աղբյուրներից ստացված տվյալները տարբերվում են և չեն կարող օգտագործվել անտառածածկի ավելացման նպատակով նոր կլիմայական թիրախներ սահմանելու համար:

2. Հրդեհված անտառածածկ տարածքի մակերեսը գերազանցում է վերականգնված անտառների մակերեսը: Հայաստանի Հանրապետության 2030թ. ազգային մակարդակով սահմանված գործողություններով նախատեսված 50,000 հեկտար նոր անտառից 2021-2024թթ. տնկվել է ընդամենը մոտ 1,64%-ը: Հաշվի առնելով այն փաստը, որ այս ժամանակահատվածում այրվել է 528,8604 հեկտար անտառային տարածք, իսկ ապօրինի անտառահատումների քանակը հասել է 40,960 ծառի, անտառների համար կլիմայական թիրախներին հասնելը չափազանց դժվար կլինի:

3. Պետական մարմինները չեն օգտագործում միատեսակ ցուցանիշներ անտառների վիճակը գնահատելու համար, ինչը բարդացնում է կլիմայական միջոցառումների արդյունավետության գնահատումը:

Առաջարկություն ԵՄ-ին

- Առաջնորդվելով ՀԸԳՀ-ի 52-րդ հոդվածով՝ աջակցել Հայաստանին անտառային տարածքների գույքագրում իրականացնելու գործում:

Առաջարկություն ՀՀ արդարադատության նախարարությանը

- Քրեական պատասխանատվություն սահմանել անտառածածկ տարածքների ոչնչացման, անտառների ոչնչացման համար:

[54] Տեղեկագիր ՀՀ շրջակա միջավայրի վիճակի մասին, 2022թ., «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ, https://armmonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekanq/tarekan/annual-2022-1.pdf

Առաջարկություններ ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը

- Անցկացնել Հայաստանի անտառային տարածքների գույքագրում՝ անտառային տարածքների իրական վիճակի ճշգրիտ պատկերը ստանալու և իրատեսական թիրախներ սահմանելու համար: Այս միջոցառումների ֆինանսավորումն ապահովելու համար դիմել ՀՀ կառավարությանը և միջազգային դոնոր կազմակերպություններին:
- Ուժեղացնել անտառային տարածքների նկատմամբ վերահսկողությունը՝ մարդածին անտառային հրդեհները բացառելու նպատակով:
- Փայտանյութի ապօրինի տեղափոխման վերահսկողության վեկտորն ուղղել անտառներում ապօրինի անտառահատումների կանխարգման միջոցառումներին:
- Շրջակա միջավայրի ռազմավարությունը մշակելիս հաշվի առնել անտառային ոլորտի համար ՀՀ կառավարության ՋԳ-ՑԱՋԵՌ-ի մասին թիվ 2318-Լ որոշմամբ սահմանված թիրախները և ներառել դրույթներ համայնքային նշանակության անտառային հողերի անտառապատման և անտառվերականգնման մասին:
- Նոր անտառների տնկումից հետո ապահովել դրանց պահպանության համար անհրաժեշտ միջոցառումները:
- Բարելավել անտառային մոնիթորինգի առկա համակարգը:
- Մշակել անտառային համակարգերի վիճակի գնահատման միասնական ցուցանիշներ, ներառյալ կլիմայական ցուցանիշները:

Առաջարկություններ տեղական ինքնակառավարման մարմիններին

Մեծացնել համայնքային անտառների տարածքը հետևյալ մեխանիզմներով.

- Անտառային կոոպերատիվների ստեղծում, որոնց անդամները կարող են օգտվել ՀՀ անտառային օրենսգրքի 5-րդ հոդվածով նախատեսված իրավունքներից և արտոնություններից:
- Համայնքային անտառների համար տարածք հատկացնելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման ընդունում:
- Համայնքային անտառների տնկման համար համայնքի բյուջեում առանձին միջոցների նախատեսում:
- Անցկացնել միջոցառումներ անտառային հրդեհների վերաբերյալ հանրության իրազեկվածությունը բարձրացնելու և հրդեհային անվտանգության կանոնները սովորեցնելու նպատակով, տեղադրել հրդեհային անվտանգության վերաբերյալ տեղեկատվական վահանակներ:
- Անտառների վրա ճնշումը նվազեցնելու նպատակով համայնքի մակարդակով զարգացնել վերականգնվող էներգետիկան:

II «Գյուղատնտեսություն» ոլորտ (ՀԸԳՀ 52-րդ հոդվածի «b» կետ, 54-րդ հոդվածի «c» և «d» կետեր, ՀԸԳՀ ճանապարհային քարտեզի 130-րդ միջոցառում)

ԿՓ համատեքստում գյուղատնտեսության ոլորտը ներգրավված է ինչպես հարմարվողականության, այնպես էլ մեղմման միջոցառումներում:

ՎԿ տվյալների համաձայն՝ գյուղատնտեսական նշանակության հողատարածքները 2021 թվականից մինչև 2023 թվականը նվազել են 1,1 հազար հեկտարով՝ 2042,5 հազար հեկտարից դառնալով 2041,4 հազար հեկտար[55]: Այս նվազումը պայմանավորված է հողերի կատեգորիայի փոփոխությամբ՝ գյուղատնտեսական նշանակությունից արդյունաբերական, էներգետիկ և այլ նշանակության: Այս գործընթացը հեշտացվել է ՀՀ կառավարության 2021 թվականի թիվ 987-Ն որոշմամբ[56], որը թույլ է տալիս գյուղատնտեսական նշանակության հողերը փոխադրել այլ նշանակության հողերի՝ առանց բացառիկ դեպքեր սահմանելու:

Առաջարկություն ՀՀ կառավարությանը և էկոնոմիկայի նախարարությանը

- Փոփոխություններ և լրացումներ կատարել ՀՀ կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» թիվ 987-Ն որոշման մեջ՝ սահմանելու գյուղատնտեսական նշանակության հողերի նշանակության փոխադրումը բացառող դեպքեր:

Գյուղատնտեսական նշանակության առկա հողերը ջրի սուր պակաս ունեն, ինչն անհնար է դարձնում դրանց լիարժեք օգտագործումը:

ՀՀ ջրային կոմիտեի տարեկան հաշվետվությունների համաձայն[57]՝ երկրում ոռոգման ջրի հիմնական մատակարար «Ջրառ» ՓԲԸ-ն 15 ջրօգտագործողների ընկերությունների հետ միասին ջուր է մատակարարել հետևյալ մշակովի հողատարածքների ոռոգման համար.

- 2021 թվականին 481,5 հազար հեկտար վարելահողերից և բազմամյա տնկարկներից ոռոգվել է 87,3 հազար հեկտարը (18,13%)
- 2022 թվականին 481,9 հազար հեկտարից ոռոգվել է 90,2 հազար հեկտարը (18,72%)
- 2023 թվականին 481,8 հազար հեկտարից ոռոգվել է 87,36 հազար հեկտարը (18.13%)

Համայնքային մատակարարները ոռոգման համակարգում փոքր մասնաբաժին են կազմում, ինչն առանձնապես չի բարձրացնում այս ցուցանիշը:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տվյալներով[58]՝ «Ջրառ» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում ոռոգման համակարգերից ջրի հոսակորուստը 2021 թվականին կազմել է 19,2%, 2022 թվականին՝ 19,2%, 2023 թվականին՝ 19,2% և 2024 թվականին՝ 18,6%:

[55] Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2024, Գյուղատնտեսություն, https://armstat.am/file/doc/99552343.pdf

[56] «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի թիվ 987-Ն որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=153709

[57] ՀՀ ջրային կոմիտեի հաշվետվություններ. https://www.scws.am/am/reports/annual-report

[58] Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հաշվետվություններ, https://www.psrc.am/contents/fields/water/water_reports

ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրով[59] նախատեսված է 15 նոր փոքր և միջին ջրամբարների կառուցում, սակայն դրանցից ոչ մեկը դեռ չի կառուցվել:

Գյուղատնտեսական նշանակության հողերի անմշակ մնալու պատճառներից մեկը հողերի մասնատվածությունն է (անհատների կողմից սեփականաշնորհված փոքր հողակտորներ, ինչը թույլ չի տալիս դրանք արդյունավետ օգտագործել գյուղատնտեսական նպատակներով): Այս խնդիրը լուծելու համար կառավարությունը նախատեսել է միջոցառումներ, ներառյալ հողերի խոշորացումը և գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծումը, սակայն այս միջոցառումները կամ չեն իրականացվել, կամ էլ գրանցվել է աննշան առաջընթաց:

Եզրակացություն

Հաշվետու ժամանակահատվածում հողերի անմշակ մնալու հիմնական պատճառները, այդ թվում՝ ոռոգման ջրի անհասանելիության, ջրամբարներում ջրի անբավարար կուտակման և հողերի մասնատվածության խնդիրները մնացել են չլուծված:

Առաջարկություն ՀՀ կառավարությանը

- «Գյուղատնտեսություն» ոլորտում ԿՓ մեղմման և հարմարվողականության քաղաքականության արդյունավետությունը բարձրացնելու համար հարկավոր է ներդնել ջրամբարների կառուցման և գյուղատնտեսական նշանակության հողերի խոշորացման խրախուսման պետական համակարգ:

Չնայած ոլորտում ՀՀ կառավարության կողմից տարբեր ծրագրերի իրականացմանը, 2021-2024 թվականներին «Գյուղատնտեսություն» ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ում նվազել է: 2021 թվականին կազմել է 11,1%[60], 2022 թվականին՝ 10,4%[61], 2023 թվականին՝ 8,4%[62], իսկ 2024 թվականին՝ 7,9%[63]:

[59] ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագիր, https://www.gov.am/files/docs/4586.pdf
[60] ՀՀ վիճակագրական կոմիտե, 2021 թվականի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) եռամսյակային և տարեկան նախնական տվյալներ, https://armstat.am/file/doc/99528978.pdf
[61] ՀՀ վիճակագրական կոմիտե, 2022 թվականի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) եռամսյակային և տարեկան նախնական տվյալներ https://armstat.am/file/doc/99536113.pdf
[62] ՀՀ վիճակագրական կոմիտե, 2023 թվականի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) եռամսյակային և տարեկան նախնական տվյալներ, https://armstat.am/file/doc/99545118.pdf
[63] ՀՀ վիճակագրական կոմիտե, 2024 թվականի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) եռամսյակային և տարեկան նախնական տվյալները, https://armstat.am/file/doc/99556063.pdf



Գյուղատնտեսության ոլորտի զարգացման ռազմավարությունը և 2020-2030 թվականների գործողությունների ծրագիրը հաստատվել են 2019 թվականին[64]: 2023 թվականին ռազմավարության գործողությունների ծրագիրը թարմացվել է, և դրանում ներառվել են կլիմայի փոփոխության հարմարվողականության նոր միջոցառումներ[65]:

Գյուղատնտեսության ոլորտի ռազմավարության ԿՓ հարմարվողականության միջոցառումները և դրանց իրականացումը

1. ՀՀ 6 մարզերում ապահովագրության համակարգի մշակում և ներդնում

Կատարողական

ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 1485-Լ որոշմամբ[66] 2019-2023 թվականների համար 6 մարզերում նախատեսվում էր 3 ռիսկեր (կարկուտ, հրդեհ և ցրտահարություն) ընդգրկող ապահովագրության համակարգ:

[64] 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N 1886-Լ որոշում «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարությունը և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության կատարմանն ուղղված 2020-2022, 2023-2026 թվականների միջոցառումների ծրագիրը և ժամանակացույցը հաստատելու մասին», https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=180657

[65] Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հուլիսի 20-ի թիվ 1222-Լ որոշում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 1886-Լ որոշման մեջ լրացումներ կատարելու մասին», https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=180654

[66] Հայաստանի Հանրապետության կառավարության «Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1485-Լ որոշում, 2019 թվականի հոկտեմբերի 24-ի, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=135781

2021 թվականին կնքվել է 4278 պայմանագիր, որով ապահովագրվել է 5832 հեկտար հողատարածք, 2022 թվականին՝ 5091 պայմանագիր, որով ապահովագրվել է 6444 հեկտար[67]: Էկոնոմիկայի նախարարությունից 2025 թվականի փետրվարի 19-ին ստացված թիվ 09.9.9/3102-2025 պատասխանի համաձայն[68]՝ 2023 թվականին կնքվել է 10192 պայմանագիր, որով ապահովագրվել է 11662 հեկտար հողատարածք: Նախարարության նույն պատասխանում նշվում է, որ 2023 թվականին գրանցված խոշոր վնասների պատճառով վերաապահովագրական ընկերությունը 2024 թվականին դուրս է եկել հայկական շուկայից, և ապահովագրական ընկերությունների ռիսկերը մեղմելու նպատակով այս պատասխանատվությունը ստանձնել է ՀՀ կառավարությունը: Արդյունքում 2024 թվականի գյուղատնտեսական տարվա համար կնքվել է 27 ապահովագրական պայմանագիր, որով ապահովագրվել է ընդհանուր առմամբ 247 հեկտար հողատարածք:



ՀՀ ՎԿ և ՀՀ էկոնոմիկայի նախարարության տվյալների համեմատությամբ պարզվել է հետևյալը.

• 2021 թվականին վարելահողերի և բազմամյա տնկարկների ընդհանուր 481,5 հազար հեկտարից ապահովագրվել է 5.832 հազար հեկտարը, որը կազմում է ընդհանուր հողատարածքների 1,21%-ը:
• 2022 թվականին վարելահողերի և բազմամյա տնկարկների ընդհանուր 481.9 հազար հեկտարից ապահովագրվել է 6.444 հազար հեկտարը, որը կազմում է ընդհանուր հողատարածքների 1,34%-ը:

[67] Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Գյուղատնտեսության աջակցության ծրագրերի 2022 թվականի տարեկան հաշվետվություն, https://mineconomy.am/media/22735/2022.pdf
[68] Տե՛ս Հավելված 3

• 2023 թվականին վարելահողերի և բազմամյա տնկարկների ընդհանուր 481.8 հազար հեկտարից ապահովագրվել է 11.662 հազար հեկտարը, որը կազմում է ընդհանուր հողատարածքների 2,42%-ը:
• 2024 թվականին ապահովագրվել է 247 հեկտար հողատարածք: 481.8 հազար հեկտարից 2024 թվականին ապահովագրված հողերի մակերեսը կազմել է հողատարածքների 0,05%-ը:

Եզրակացություն

Գյուղատնտեսական ապահովագրության համակարգը թույլ է, իրականացված հարմարվողականության միջոցառումներն՝ անբավարար:

Առաջարկություն ՀՀ կառավարությանը

- Ապահովել գյուղատնտեսական նշանակության հողերի ապահովագրության համակարգի կարողությունների զարգացում, ինչը թույլ կտա ավելացնել ապահովագրված հողերի մակերեսը և ներառված մշակաբույսերի տեսականին:

2. Մշակել և ներդնել արդյունավետ հակակարկտային համակարգ

Կատարողական

- Էկոնոմիկայի նախարարության տվյալներով՝ ընդհանուր 3270 հեկտար մակերեսով նոր ինտենսիվ պտղատու այգիներից կարկտապաշտպան ցանցեր են տեղադրվել 729,9 հեկտարում: Տոկոսային արտահայտությամբ սա ինտենսիվ պտղատու այգիների ընդամենը 22,32%-ն է:

Առաջարկություն ԵՄ-ին

Առաջնորդվելով ՀԸԳՀ-ի 52-րդ հոդվածով՝ աջակցել Հայաստանին նոր հակակարկտային տեխնոլոգիաների ներդնման գործում:

Առաջարկություն ՀՀ կառավարությանը

- Խրախուսել կարկտապաշտպան ցանցերի տեղադրումը նոր տարածքներում:

Առաջարկություն ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը

- Ուսումնասիրել ժամանակակից տեխնոլոգիաներով գործող հակակարկտային համակարգերի միջազգային փորձը և տեղայնացնել դրանք Հայաստանում:

3. Ոռոգման առաջադեմ տեխնոլոգիաների ներդնման խթանում և տարածում

Ըստ ռազմավարության՝ պլանավորվում է պետական աջակցությամբ տարեկան մոտ 1000 հա տարածքում խթանել ոռոգման ժամանակակից համակարգերի ներդնումը:

Կատարողական

ՀՀ էկոնոմիկայի նախարարության տվյալներով՝ 2021-2024 թվականների ինտենսիվ այգեգործության զարգացման ծրագրի շրջանակում մոտ 9400 հա տարածքի համար կնքվել է պտղատու այգիների հիմնման և ոռոգման առաջադեմ տեխնոլոգիաների ներդնման հայտ: 4375 հեկտար տարածքում ներդրվել է ոռոգման համակարգ:

Եզրակացություն

Ռազմավարությամբ նախատեսված տարեկան 1000 հեկտար տարածքում ժամանակակից ոռոգման համակարգերի ներդրման թիրախին ուղղված միջոցառումները բավարար են:

ՀՀ ՏԿԵ նախարարությունից 17.02.2025թ. ստացված թիվ ԱԵ/17.1/5513-2025 պատասխանի համաձայն[69]՝ ՄԱԶԾ աջակցությամբ 2024 թվականին իրականացվել է Ճիրակի մարզում գտնվող «Բենիամին» պոմպակայանի և Լոռու մարզում գտնվող երկաստիճան «Այրում-Ճոճկան» և «Ճոճկան» պոմպակայանների արդիականացումը:

«Ոռոգման համակարգի վերականգնման» ծրագրի շրջանակում 2021-2024 թվականներին իրականացվել է 15 վերականգնողական գործողություն, որոնցից 8-ը դեռևս ընթացքի մեջ են:

2021-2023 թվականներին 15 ջրօգտագործողների և «Ջրառ» ՓԲԸ-ի սպասարկման տարածքներում իրականացվել են ջրաչափական կետերի կառուցման և ջրաչափերի տեղադրման աշխատանքներ:

4. Վտանգավոր հիդրոօդերևութաբանական երևույթների կանխատեսման և վաղ նախազգուշացման համակարգի ստեղծում

Կատարողական

2022 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 1176-Լ հրամանով Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենը հաստատել է կլիմայական կանխատեսումների և վաղ նախազգուշացման համակարգերի բարելավմանն ուղղված միջոցառումների ծրագիրը և դրա իրականացման ժամկետները: Ըստ Շրջակա միջավայրի նախարարությունից ստացված թիվ 5/07.3/1741 պատասխանի[70]՝ ծրագիրն ընդգրկվել է 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի հայտում:

[69] Տե՛ս Հավելված 4
[70] Տե՛ս Հավելված 3

Եզրակացություն

Միջոցառումը դեռևս գործնականում չի իրականացվել:

5. Գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային և արդյունավետ օգտագործման մեխանիզմների ներդրում/գյուղատնտեսական նշանակության հողերի չօգտագործման և մասնատվածության մակարդակի նվազեցում, մասնավորապես՝ 2023թ.՝ 200 հա, 2024թ.՝ 500 հա, 2024թ.՝ 500 հա/:

Կատարողական

Ըստ Էկոնոմիկայի նախարարությունից ստացված պատասխանի[71]՝ «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության 2023-2025 թվականների ծրագրի» շրջանակում ծրագրի մեկնարկից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 30-ը կնքվել է 13 պայմանագիր մոտ 530 հա հողատարածքի միավորման համար, սակայն գործնականում դեռևս որևէ հողատարածք միավորված չէ:

Եզրակացություն

Միջոցառման իրականացումը բավարար չէ:

Առաջարկություն ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը

- Մշակել ֆերմերային տնտեսություններում կոոպերատիվների խրախուսման մեխանիզմներ և ներդնել դրանք համայնքներում:
- Վերանայել գյուղատնտեսության ոլորտի ռազմավարությունը՝ հաշվի առնելով գյուղատնտեսության ոլորտի համար ՀՀ կառավարության կողմից ՋԳ-ՑԱՋԵՌ-ով սահմանված թիրախները:

6. Փոփոխվող բնակլիմայական պայմաններում ըստ գյուղատնտեսական գոտիների մշակաբույսերի արդյունավետ մշակության հնարավորությունների գնահատում/ Ըստ գյուղատնտեսական գոտիների մշակաբույսերի արդյունավետ մշակության հնարավորությունների գնահատում՝ ելնելով փոփոխվող բնակլիմայական պայմաններից, առաջարկվող մշակաբույսերի արդյունավետ մշակության վերաբերյալ մշակված ուղեցույցներ/

Կատարողական

Ըստ Էկոնոմիկայի նախարարությունից ստացված պատասխանի՝ «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՓԲԸ-ն սելեկցիոն աշխատանքներ է կատարում փոփոխվող կլիմայական պայմաններին հարմարեցված նոր սորտերի մշակման ուղղությամբ:

[71] Տե՛ս Հավելված 3

Բանջարաբոստանային մշակաբույսերի ներմուծված 20 և ավելի սորտերի փորձարկման աշխատանքները կշարունակվեն նաև 2025 թվականին: Բանջարաբոստանային մշակաբույսերի տեղական արտադրության, փոփոխվող կլիմայական պայմաններին հարմարված (չորադիմացկուն, տոթադիմացկուն) թվով 16 սորտ ներկայացվել են տարբեր բնակլիմայական գոտիներում շրջանցման:

Եզրակացություն

Միջոցառման կատարողականը բավարար է:

7. Տոհմային անասնաբուծության, թռչնաբուծության և ձկնաբուծության զարգացում՝ տոհմային կենդանիների ձեռքբերման աջակցության ծրագրի իրականացում, տոհմային կենդանիների կադաստրի վարում: Գյուղատնտեսական կենդանիների պահվածքի արդյունավետ տեխնոլոգիաների կիրառմանն աջակցություն

Թիրախն է՝ կենդանիների ընդհանուր գլխաքանակում տոհմային կենդանիների մասնաբաժինն ավելացնել 1,5-2%-ով՝ 2023-2026 թվականներին տարեկան ձեռք բերելով 500-600 տոհմային խոշոր և մանր եղջերավոր անասուններ:

Կատարողական

ՀՀ էկոնոմիկայի նախարարության 2024 թվականի հաշվետվության[72] համաձայն՝ 2021-2024 թվականների համար Հայաստանում խոշոր և մանր եղջերավոր անասունների ներմուծման ցուցանիշները հետևյալն են.

Տարի	Խոշոր եղջերավոր անասուններ	Մանր եղջերավոր անասուններ
2021թ.	**750**	**123**
2022թ.	**334**	**331**
2023թ.	**369**	**301**
2024թ.	**269**	**63**

Աշխատանքները շարունակվում են, ինչի մասին վկայում է 2024 թվականի օգոստոսի 22-ին ընդունված «Հայաստանի Հանրապետությունում անասնաբուծության խթանման ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1392-Լ որոշումը[73]:

Եզրակացություն

[72] ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Գյուղատնտեսության ծրագրերի պետական աջակցության 2024 թվականի տարեկան հաշվետվություն, https://mineconomy.am/media/32614/Hashvetvutyun2024..%20%285%29.pdf

[73] «Հայաստանի Հանրապետությունում անասնաբուծության խթանման ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2022 թվականի օգոստոսի 22-ի թիվ 1392-Լ որոշում, https://mineconomy.am/media/30195/1392.pdf

Խոշոր և մանր եղջերավոր անասունների ներմուծման ցուցանիշները համապատասխանում են ռազմավարությամբ սահմանված թիրախներին:

8. Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցություն

Ռազմավարությամբ սահմանվել է 2023 թվականին 21, 2024 թվականին՝ 10, 2025 թվականին՝ 10 և 2026 թվականին՝ 2 «խելացի» անասնաշենքի կառուցման թիրախ:

Կատարողական

Էկոնոմիկայի նախարարության 2024 թվականի հաշվետվության համաձայն՝ 2021-2024 թվականներին կառուցվել է 45 «խելացի» անասնաշենք: Էկոնոմիկայի նախարարությունից ստացված պատասխանի համաձայն՝ ծրագրի մեկնարկից ի վեր փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագրի շրջանակում շահագործման է հանձնվել 58 անասնաշենք: Բացի այդ, իրականացվում է «անասնաբուծության ճյուղում իրականացվող ներդրումային ծրագրերին աջակցության տրամադրման» փորձնական ծրագիրը, որի շրջանակում նախատեսվում է ստեղծել 7 խոշոր անասնապահական համալիր:

Եզրակացություն

Միջոցառման կատարումը բավարար է և համահունչ է գուղատնտեսության ոլորտի ռազմավարությանը:

9. Առավել վտանգավոր հիվանդությունների և վնասատուներով վարակի բռնկումներին արագ արձագանքման համակարգի ստեղծում / ԿՓ-ի ռիսկերի կանխարգելման և կառավարման համակարգի մշակում և ներդնում

Կատարողականի չափում

Ըստ Էկոնոմիկայի նախարարությունից ստացված պատասխանի՝ մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Բուսասանիտարիայի մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ: Նախագծի նպատակն է՝ իրավական հիմք ստեղծել խիստ վտանգավոր հիվանդությունների և վնասատուներով վարակի բռնկումների դեպքում արագ արձագանքման համակարգի ներդնման համար աշխատանքային խումբ ստեղծելու և դրա աշխատանքային կարգը հաստատելու վերաբերյալ իրավական ակտի մշակման համար: «Բուսասանիտարիայի մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ուժի մեջ մտնելուց հետո նախատեսվում է շրջանառության մեջ դնել արդեն իսկ մշակված որոշման նախագիծ՝ առավել վտանգավոր հիվանդությունների և վնասատուներով վարակի բռնկումների դեպքում արագ արձագանքման համակարգի ներդնման համար աշխատանքային խումբ ստեղծելու և դրա աշխատանքային կարգը հաստատելու մասին:

Եզրակացություն

Միջոցառման իրականացումը սկսվել է:

10. ԿՓ պայմաններում հիվանդությունների և վնասատուների ներթափանցման և տարածման դեմ կանխարգելիչ միջոցառումներ /ՀՀ սահմանային կետերում իրականացվող վերահսկողության որակի բարելավում/:

Կատարողական

Ըստ Էկոնոմիկայի նախարարությունից ստացված պատասխանի՝ 2024 թվականի հունվարի 17-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում պատկան մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի է ունեցել քննարկում ԿՓ համատեքստում հիվանդությունների և վնասատուների ներթափանցման և տարածման դեմ կանխարգելիչ միջոցառումների լիարժեք իրականացման վերաբերյալ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետական սահմանի անցման կետերում պետական վերահսկողության գործառույթները վերապահված են մաքսային մարմիններին, քննարկման արդյունքում Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի կողմից առաջարկվել է սույն միջոցառման համար որպես պատասխանատու մարմին դիտարկել Պետական եկամուտների կոմիտեին: Քննարկման արդյունքները նախարարության 2024թ. հունվարի 19-ի թիվ 01/1034-2024 գրությամբ ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:

Եզրակացություն

Միջոցառման իրականացումը դեռևս քննարկման փուլում է, և կատարողականը դեռևս պարզ չէ:

Առաջարկություն Էկոնոմիկայի նախարարությանը

Փոփոխություններ և լրացումներ կատարել ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 19-ի «ՀՀ գյուղատնտեսության ոլորտի 2020-2030 թվականների տնտեսական զարգացման ուղղությունները և ՀՀ գյուղատնտեսության ոլորտի 2020-2022 և 2023-2026 թվականների տնտեսական զարգացման ուղղությունների իրականացման միջոցառումների ծրագիրը և դրանց հետ կապված ժամանակացույցը հաստատելու մասին» թիվ 1886-Լ որոշման մեջ՝ դրանում գյուղատնտեսության ոլորտի համար ՁԳ-ՑԱՁԵՌ-ով սահմանված թիրախների ներառումն ապահովելու, ինչպես նաև համայնքներին և ֆերմերային տնտեսություններին ԿՓ հարմարվողականության միջոցառումների և ծրագրերի իրականացման գործում աջակցելու, խորհրդատվություն տրամադրելու և գյուղատնտեսական կոոպերատիվների գործունեությունը խթանելու վերաբերյալ դրույթներ ներառելու համար:

III «Էներգետիկա» ոլորտ (ՀԸԳՀ 52-րդ հոդվածի «b» կետ, 54-րդ հոդվածի «c» և «d» կետեր, ՀԸԳՀ ճանապարհային քարտեզի 130-րդ միջոցառում)

«Էներգետիկա» ոլորտը Հայաստանում ջերմոցային գազերի արտանետումների ամենամեծ աղբյուրն է և, համաձայն ՋԳ արտանետումների վերջին գույքագրման, այս ոլորտին բաժին է ընկել դրանց 64%-ը:

«Էներգետիկա» ոլորտում ԿՓ մեղմման միջոցառումներն արտացոլված են ՋԳ-ՑԱՋԵՌ փաստաթղթում: Համապատասխանաբար, «Էներգետիկա» ոլորտում ՋԳ արտանետումների կրճատումը նախատեսվում է իրականացնել վերականգնվող և միջուկային էներգետիկայի նոր հզորությունների շահագործման միջոցով:

Ըստ Հայաստանի ԱՍԳ-ի՝ վերականգնվող էներգետիկայի մասնաբաժինը ընդհանուր էներգետիկ հաշվեկշռում նախատեսվում է կրկնապատկել մինչև 2030 թվականը:

Ըստ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1827-Լ որոշման[74]՝ ընդհանուր առմամբ մինչև 2040 թվականը արևային և հողմային կայանների հզորությունը նախատեսվում է հասցնել առնվազն 2000 ՄՎտ-ի, իսկ փոքր ՀԷԿ-երի հզորությունը՝ 380 ՄՎտ-ից հասցնել 430 ՄՎտ-ի: Կանխատեսվում է, որ արդյունքում վերականգնվող էներգիայի աղբյուրներից արտադրված էլեկտրաէներգիայի մասնաբաժինը էլեկտրաէներգիայի ընդհանուր վերջնական սպառման մեջ մինչև 2030 թվականը կհասնի մոտ 50%-ի, ներառյալ խոշոր ՀԷԿ-երը, իսկ մինչև 2040 թվականը՝ մոտ 60%-ի:

2021-2024 թվականների ընթացքում խոշոր ՀԷԿ-երի, արևային կայանների և փոքր ՀԷԿ-երի կողմից արտադրված էլեկտրաէներգիայի ընդհանուր մասնաբաժինը էլեկտրաէներգետիկ հաշվեկշռում աճել է:

Վերականգնվող էներգիայի աղբյուրներից արտադրված էլեկտրաէներգիայի մասնաբաժինը էներգետիկ հաշվեկշռում 2021-2024 թվականներին՝ ըստ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տվյալների

Տարի	Մեծ ՀԷԿ-երի, փոքր ՀԷԿ-երի և արևային էլեկտրակայանների կողմից արտադրված էլեկտրաէներգիայի մասնաբաժինը, %	Փոքր ՀԷԿ-երի և արևային էլեկտրակայանների կողմից արտադրված էլեկտրաէներգիայի մասնաբաժինը, %	Փոքր արևային էլեկտրակայանների (մինչև 30 ՄՎտ) կողմից արտադրված էլեկտրաէներգիայի մասնաբաժինը, %
2021թ.	29,87	8,57	1,17
2022թ.	24,57	11,81	2,71
2023թ.	24,01	12,87	4,52
2024թ.	30,9	19,4	5,3

Եզրակացություն

[74] 2023 թվականի հոկտեմբերի 26- ի թիվ 1827-Լ որոշում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի թիվ 48-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=184420

Եթե այս միտումները շարունակվեն, Հայաստանի կառավարությունը կարող է հասնել 2030 թվականի համար սահմանված 50% թիրախին: Այս նպատակին հասնելու համար Հայաստանում կառուցվում են արդյունաբերական մասշտաբի արևային էլեկտրակայաններ: ՏԿԵ նախարարությունից ստացված պատասխանի համաձայն՝ 55 ՄՎտ հզորությամբ «Մասրիկ 1» արևային էլեկտրակայանը շահագործման կհանձնվի 2025 թվականին, իսկ 200 ՄՎտ հզորությամբ «Այգ 1» արևային էլեկտրակայանը՝ 2027 թվականին:

ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի թիվ 749-Լ որոշմամբ նախատեսված «Էներգետիկայի ոլորտում ԿՓ հարմարվողականության ծրագիրը» չի հաստատվել:

ՀՀ փոխվարչապետի 2023 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 02.1/03.8/31094 հանձնարարականի և ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի 2022 թվականի դեկտեմբերի 26-ի նիստի թիվ ԿԱ/382 արձանագրության համաձայն՝ էներգետիկայի ոլորտի հարմարվողականության ծրագիրը պետք է ներառվի այս ոլորտի զարգացման ռազմավարության մեջ:

Առաջարկություն ՀՀ ՏԿԵ նախարարությանը

- «Էներգետիկա» ոլորտի հարմարվողականության միջոցառումները սահմանել ՀՀ կառավարության առանձին որոշմամբ կամ առաջնահերթություն տալ «Էներգետիկա» ոլորտի զարգացման նոր ռազմավարության ընդունմանը, որը կներառի ոլորտում ինչպես ԿՓ հարմարվողականության, այնպես էլ մեղմման համապարփակ միջոցառումներ:

Էներգետիկ աղքատություն

Ըստ ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 24-ի թիվ 398-Լ որոշման[75]՝ Հայաստանի տնային տնտեսությունների կեսից ավելին՝ 58,6%-ը, չի կարողանում ցուրտ ամիսներին բավարար չափով ջեռուցել իրենց տները: Եվրոստատի սահմանման համաձայն՝ նրանք կարող են համարվել էներգետիկ աղքատ:

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ն առաջարկել է, որ ՏԿԵ նախարարությունը «Էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով սահմանի «էներգետիկ աղքատություն» եզրույթը, սահմանի էներգետիկ աղքատության հաղթահարման պահանջներ և մշակի այս հարցի կարգավորման մեխանիզմներ: Ի պատասխան նախարարությունից նամակով հայտնել են՝ «Էլեկտրաէներգետիկայի մասին» օրենքի նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել ՀԸԳՀ-ով սահմանված

[75] ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 24-ի թիվ 398-Լ որոշում «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագրին, էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագրի առաջին փուլի (2022-2024 թվականներ) իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցին հավանություն տալու մասին», https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=161408

դիրեկտիվները, որտեղ էներգետիկ աղքատության վերաբերյալ կարգավորումներ ներկայացված չեն [76]:

Առաջարկություն ԵՄ-ին

- ԵՄ դիրեկտիվներում ներառել «էներգետիկ աղքատության» չափման հստակ ցուցանիշներ և մշակել դրա հաղթահարմանն ուղղված գործիքակազմ:

Քանի որ «Էներգետիկա» ոլորտը բազմաշերտ է, այս հետազոտության շրջանակում մենք շեշտը դրել ենք միայն վերականգնվող էներգետիկայի զարգացման գծով առաջընթացի վրա, իսկ մնացած բաղադրիչների մասով անհրաժեշտ է լրացուցիչ ուսումնասիրություն:

IV «Թափոն» ոլորտ (կոշտ թափոնների կառավարում, կեղտաջրեր) (ՀԸԳՀ 52-րդ հոդվածի «b» կետ, 54-րդ հոդվածի «c» և «d» կետեր, ՀԸԳՀ ճանապարհային քարտեզի 130-րդ միջոցառում)

2020 թվականի դրությամբ Հայաստանում քարտեզագրվել է սանիտարական չափանիշներին չհամապատասխանող և օրինական աղբավայրի կարգավիճակ չունեցող 298 աղբավայր: ՏԿԵՆ-ի տվյալներով՝ Հայաստանի առաջին սանիտարական աղբավայրը, որը նախատեսվում է շահագործման հանձնել 2025 թվականին, կառուցվել է Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում:

ՀՀ ՎԿ տվյալներով[77]՝ 2021-2023 թվականներին աղբավայրեր տեղափոխված կոշտ կենցաղային թափոնների ծավալները հետևյալն են՝

- 2021թ.՝ 487.400 տոննա թափոն
- 2022թ.՝ 532.700 տոննա թափոն
- 2023թ.՝ 433.300 տոննա թափոն

Վնասազերծվել և ոչնչացվել է՝

- 2021թ.՝ 28,8 տոննա ոչ վտանգավոր թափոն
- 2022թ.՝ 20.930,6 տոննա ոչ վտանգավոր թափոն
- 2023թ.՝ 190,9 տոննա ոչ վտանգավոր թափոն

Ըստ ՏԿԵ նախարարության տվյալների՝ ներկայում Հայաստանում գործում է թափոնների վերամշակման 22 գործարան: Կենցաղային թափոնների չեզոքացման և կիզման գործարաններ հանրապետությունում չեն գործում:

ՀԸԳՀ-ի «Թափոնների կառավարման» մասին 3-րդ հավելվածի հիմնական պահանջները չեն կատարվել.

[76] «ՏԿԵՆ-ի դիտարկումները՝ էներգետիկայի և կլիմայի փոփոխության քաղաքականություններում Էկոլուրի առաջարկությունների վերաբերյալ», https://www.ecolur.org/en/news/energy/15835/
[77] Թափոնների կառավարում, ՀՀ վիճակագրական կոմիտե, https://armstat.am/file/article/eco_book_2023_9.pdf

- Թափոնների կառավարման հնգաստիճան ստորակարգությանը (կրճատում, վերաօգտագործում, վերամշակում, վերականգնում, հեռացում) և թափոնների առաջացման կանխարգելման ծրագրերի կազմում:
- Հեռացման կամ վերականգնման գործողություններ իրականացնող հաստատությունների/ձեռնարկությունների համար թույլտվությունների տրամադրման համակարգի ստեղծում՝ վտանգավոր թափոնների կառավարման գծով հատուկ պարտավորությունների սահմանմամբ (IV գլուխ):
- Թափոնների հավաքման և փոխադրման հաստատությունների եւ ձեռնարկությունների ռեեստրի ստեղծում (IV գլուխ):
- Աղբավայրեր տեղափոխվող կենսաբանորեն քայքայվող քաղաքային տնտեսության թափոնների քանակը նվազեցնող ազգային ռազմավարության մշակում (5-րդ հոդված) «Աղտոտողը վճարում է» եւ արտադրողների ընդլայնված պատասխանատվության սկզբունքներին համապատասխան՝ ծախսերի ամբողջական փոխհատուցման մեխանիզմի սահմանում (14-րդ հոդված) Թափոնների թաղման վայրերի դասակարգում:

Հայաստանում չկան աղբավայրերի վերաբերյալ տվյալների բազաներ և գրանցամատյաններ: Շրջակա միջավայրի և ՏԿԵ նախարարությունների կողմից իրականացվող աղբավայրերի մշտադիտարկումը թերի է: Աղբի տեսակավորման գործընթացը դեռևս սկզբնական փուլում է:

Եզրակացություն

Թափոնների տեսակավորման և վերամշակման փոքր ծավալների պատճառով համայնքային կոշտ թափոնների մեծ մասը տեղափոխվում է աղբավայրեր: Թափոնների տեսակավորման և վերամշակման տնտեսական մեխանիզմները բավարար չեն այս ոլորտում ներգրավված բիզնեսներին խրախուսելու համար: Նման իրավիճակում ԱՍԳ-ով սահմանված թիրախներին հասնելը քիչ հավանական է:

ՀԸԳՀ-ի 3-րդ հավելվածի «Թափոնների կառավարում» բաժնի պահանջների հիմնական մասը չի կատարվել:

Առաջարկություն ՀՀ կառավարությանը

- Նոր մշակվող ՀԸԳՀ ճանապարհային քարտեզով նախատեսել ՀԸԳՀ հավելված 3-ի «Թափոնների կառավարում» բաժնի պահանջների համապատասխանությունն ապահովող միջոցառումների իրականացման հստակ մեխանիզմներ:

Կեղտաջրեր

Հայաստանում ջրամատակարարման և կեղտաջրերի կառավարման հիմնական օպերատորը 2017 թվականից «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն է:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից չսպասարկվող մոտ 580 բնակավայրում չկա կոյուղու համակարգ:

2021 թվականին Հայաստանում գոյացել է 310 միլիոն մ³ համայնքային կեղտաջուր, որից 91.94%-ը չի մաքրվել, 7.93%-ը ենթարկվել է մեխանիկական մաքրման և միայն 0.13%-ն է ենթարկվել կենսաբանական մաքրման: Այս միտումը շարունակվում է:

2022 թվականին ՀՀ կառավարության որոշման նախագիծ է մշակվել «Կեղտաջրերի հեռացման բնագավառի զարգացման հայեցակարգը հաստատելու մասին»[78], սակայն չի ընդունվել:

Ըստ նախագծի՝ վերջին տարիներին կառուցվել և ներկայում գործում է կեղտաջրերի մաքրման վեց կայան, որոնք սպասարկում են Փարաքար, Գավառ, Մարտունի, Վարդենիս, Ջերմուկ և Դիլիջան քաղաքները, ինչպես նաև մոտակա գյուղերը: Սակայն նախկինում կառուցված 21 մաքրման կայանների մեծ մասն այլևս չի գործում:

Երևանի «Աերացիա» կեղտաջրերի մաքրման կայանում կատարվում է միայն խոշոր մասնիկների մեխանիկական մաքրում: 2013-2017 թվականներին Երևանում կառուցվել է նոր մաքրման կայան, սակայն այն դեռևս շահագործման չի հանձնվել:

Ծիրակում, Վանաձորում և մի շարք այլ բնակավայրերում գոյություն ունեցող մաքրման կայանների տարածքներն օտարվել են:

Կոյուղու համակարգեր թափվող կեղտաջրերի քանակական կամ որակական մոնիթորինգ առևտրային կազմակերպությունների կողմից չի իրականացվում:

Ջրառի, ջրահեռացման և կեղտաջրերի ծավալները Հայաստանում 2021-2023 թվականների համար՝ ըստ ՀՀ ՎԿ տվյալների[79]

Տարի	Ընդհանուր ջրառի ծավալը, միլիոն մ³	Հեռացված կեղտաջրերի ծավալը, միլիոն մ³	Ջրառի և առաջացած կեղտաջրերի տոկոսային հարաբերակցությունը	Աղտոտված կեղտաջրերի ծավալը, միլիոն մ³
2021թ.	2966,5	803	27,6%	286
2022թ.	3077,8	888	28,9%	750
2023թ.	2917,6	722	24,7%	155

Եզրակացություն

[78] «Կեղտաջրերի հեռացման բնագավառի զարգացման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, https://www.e-draft.am/projects/5036/about

[79] Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2024, Շրջակա միջավայր և բնական պաշարներ, https://armstat.am/file/doc/99552323.pdf

Առաջացած կեղտաջրերի և ջրառի հարաբերակցությունը ցույց է տալիս, որ մատակարարվող ջրի մեծ մասը չի մտնում կոյուղու ցանց: Կեղտաջրերից շրջակա միջավայրի աղտոտման և ջերմոցային գազերի արտանետումների ծավալները չեն գնահատվել: Կեղտաջրերի մաքրման կայաններից կենսագազ չի հավաքվում: 580 բնակավայրում չկա կոյուղու համակարգ:

Առաջարկություն ՀՀ կառավարությանը

Ընդունել կեղտաջրերի հեռացման ոլորտի զարգացման ծրագիր: Փաստաթուղթը պետք է. - Հաշվի առնի կեղտաջրերի ոլորտից ՋԳ արտանետումները կրճատելու՝ պետության պարտավորությունները - Ներառի դրույթներ Հայաստանի ԱՍԳ-ով նախատեսված ՋԳ արտանետման կրճատման միջոցառումների իրականացման համար - Միջոցառումներ ձեռնարկի կոյուղու համակարգ անցկացնելու համար այն 580 բնակավայրերում, որոնք ներկայում զուրկ են նման ենթակառուցվածքներից: - Ապահովի կենսագազի հավաքման ենթակառուցվածքների ներառում գործող և նախատեսվող կեղտաջրերի մաքրման կայաններում:

Առաջարկություն ՀՀ ՏԿԵ նախարարությանը

Փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի թիվ 143-Լ որոշման մեջ[80] ՝ թափոնների կառավարման համակարգի ռազմավարությունը համապատասխանեցնելով ՋԳ-ՑԱՋԵՌ-ով սահմանված թիրախներին:

[80] ՀՀ կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի թիվ 143-Լ որոշում, https://www.arlis.am/hy/acts/203154

ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքներում ԿՓ մեղմման և հարմարվողականության քաղաքականության տեղայնացման մակարդակը որոշելու համար ուսումնասիրվել են Փամբակ (Լոռու մարզ), Դիլիջան (Տավուշի մարզ), Մարտունի (Գեղարքունիքի մարզ) և Եղեգիս (Վայոց ձորի մարզ) խոշորացված համայնքների 2021-2024 թվականների սուբվենցիոն և զարգացման ծրագրերը, և գրավոր հարցումներ[81] են ուղարկվել տեղական ինքնակառավարման մարմիններ:

Եզրակացություն

Արդյունքում հայտնաբերվել է հետևյալը.

- Չնայած որոշ համայնքների սուբվենցիոն և զարգացման ծրագրեր կլիմայական ուղղվածություն ունեն, դրանց կլիմայի ազդեցության բաղադրիչը չի գնահատվում:
- Սուբվենցիոն ծրագրերը չեն դիտարկվում, գնահատվում կամ պլանավորվում ջերմոցային գազերի արտանետումների կրճատման տեսանկյունից: Համայնքները կամավոր կերպով նման պարտավորություններ չեն ստանձնել:
- Համայնքները կլիմայական ռիսկի գնահատում չեն իրականացրել և ԿՓ ազդեցության մեղմման և հարմարվողականության ծրագիր/ ռազմավարություն չեն մշակել:
- Համայնքներում ԿՓ մեղմման, հարմարվողականության և էներգետիկ անցման հետ կապված ծրագրեր մշակելու համար մասնագետներ և կարողություններ չկան:
- Համայնքային սահմանափակ բյուջեները բավարար չեն նոր նախաձեռնություններ ֆինանսավորելու համար:

Առաջարկություններ տեղական ինքնակառավարման մարմիններին

- Էներգետիկ աղքատությունը նվազեցնելու, բնական և մարդածին աղետների, ինչպես նաև ԿՓ հետևանքները մեղմելու, դրանց հարմարվելու և դրանք կանխելու համար ստեղծել մասնագիտական աշխատանքային խումբ: Սահմանել խմբի լիազորությունների, պարտականությունների և հաշվետվողականության հստակ շրջանակ: Նախաձեռնել համայնքապետարանները էներգետիկայի և կլիմայի ոլորտի փորձագետների աշխատատեղերով համալրելու գործընթացը: Սա կխթանի համայնքային մակարդակում կլիմայական քաղաքականության մեջ ներգրավվմանը և կլիմայական բաղադրիչի ներառմանը համայնքի տարեկան աշխատանքային ծրագրերում, զարգացման ծրագրերում և սուբվենցիոն ծրագրերում:
- Համայնքային բյուջեի ծախսերի բաժնում ներառել «Բնապահպանական, կլիմայական և էներգետիկ տարեկան ծրագրերի, ինչպես նաև աղետների ռիսկի

[81] Տե՛ս Հավելված 5

նվազեցման միջոցառումների իրականացման ծախսերի» տող՝ հիմք ստեղծելով համայնքի տարեկան բյուջեում կլիմայական ծախսերի նշագրման համար:

- Համայնքապետարանի աշխատակազմում ձևավորել ֆոնդ՝ միջազգային ծրագրերին մասնակցության համար տարվող աշխատանքները մասնագիտական կառույցներին պատվիրակելու համար:
- Իրականացնել կլիմայական ռիսկի գնահատում և մշակել ԿՓ մեղմման և հարմարվողականության գործողությունների ծրագիր կամ ռազմավարություն:
- Համայնքային անտառներ տնկելու, պահպանելու և ընդլայնելու նպատակով համայնքում ստեղծել անտառային կոոպերատիվներ՝ թույլ տալով կոոպերատիվի անդամներին օգտվել ՀՀ անտառային օրենսգրքի 5-րդ հոդվածով նախատեսված իրավունքներից և արտոնություններից:
- Մասնագետների և դոնոր համայնքների հետ համագործակցությամբ սահմանել հատուկ գոտիներ համայնքային անտառների և կանաչ տարածքների ստեղծման և ընդլայնման համար՝ հաշվի առնելով առաջարկվող տարածքների աշխարհագրական դիրքը և ջրի հասանելիությունը: Բացի այդ, սահմանափակել շինարարությունը այն տարածքներում, որտեղ հնարավոր է համայնքային անտառների ստեղծումը:
- Բնակչության շրջանում իրականացնել հրդեհային անվտանգության կանոնների պահպանման և անտառների վրա հրդեհների վնասակար ազդեցության վերաբերյալ իրազեկման աշխատանքներ, բուսածածկ տարածքներում և անտառներում տեղադրել հրդեհային անվտանգության տեղեկատվական վահանակներ: Անտառների վրա ճնշումը նվազեցնելու նպատակով համայնքի մակարդակով զարգացնել վերականգնվող էներգետիկան:
- Համայնքի ինգամյա զարգացման և սուբվենցիոն ծրագրերը մշակելիս հաշվի առնել՝
    - ԿՓ մեղմման և հարմարվողականության ազգային քաղաքականության տեղայնացումը
    - ՄԱԿ-ի Կայուն զարգացման հայեցակարգը
    - Բնակչության իրական կարիքները
    - Ջրամատակարարման, մասնավորապես՝ ոռոգման համակարգում առաջադեմ և ջրարդյունավետ համակարգերի ներդնումը
    - Համայնքում հակակարկտային համակարգերի ծածկույթի մեծացմանը աջակցելը
    - ԵՄ քաղաքապետերի դաշնագրին միանալու ուղղությամբ աշխատանքների իրականացումը
    - Տարերայնորեն ձևավորված աղբանոցների վերացումը:

Առաջարկություն ՀՀ ՏԿԵ նախարարությանը

- «ՀՀ պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 1708-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկություն ներկայացնել ՀՀ կառավարություն ԿՓ հարմարվողականության և մեղմման, Էներգախնայողության և էներգաարդյունավետության ծրագրերի իրականացման դեպքում համայնքների

կողմից ավելի ցածր համաֆինանսավորման մասնաբաժին ունենալու վերաբերյալ:

Այս միջոցառումը կծառայի որպես խրախուսման միջոց կլիմայական ծրագրերի խթանման և երկրի միջազգային պարտավորությունների կատարման համար:

- «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում կատարել լրացում՝ ջերմոցային գազերի տարեկան հաշվետվության, մթնոլորտից ջերմոցային գազերի կլանման ցուցանիշների և ԿՓ մեղմման միջոցառումների մոնիթորինգի վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան լիազորություններն ու պարտականությունները սահմանելու համար՝ ՀՀ կառավարության 2024 թվականի հունվարի 11-ի «Ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման կարգը հաստատելու մասին» թիվ 54-Ն որոշման պահանջների կատարման ապահովման նպատակով:
- Աջակցել համայնքապետարանների աշխատակազմում էներգետիկայի և կլիմայի ոլորտների մասնագետների թափուր աշխատատեղերի լրացման գործընթացին: Սա կնպաստի տեղական մակարդակում կլիմայական քաղաքականության տեղայնացմանը, կուժեղացնի համայնքի կարողությունները և կապահովի այդ մասնագետների օգնությամբ կլիմայական բաղադրիչի ներառումը համայնքի տարեկան աշխատանքային ծրագրերում, հնգամյա զարգացման ծրագրերում և սուբվենցիոն ծրագրերում:

ԸՆԴՈՒՆՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-522-Ն, 2022 թվականի դեկտեմբերի 7)

Բացթողումներ

«Արտանետումների թույլտվություն» հասկացությունը օրենքում չի ներառում «ջերմոցային գազերի արտանետումների թույլտվություն» եզրը, ինչպես նաև չի պահանջում նման թույլտվություն ստանալ ՋԳ արտանետումների համար:

Առաջարկություն ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը

Փոփոխություններ և լրացումներ կատարել «Մթնոլորտային օդի պաշտպանության մասին» օրենքում.

Փոփոխել 4-րդ հոդվածի 19-րդ կետը՝ ներմուծելով անշարժ աղբյուրներից ջերմոցային գազերի և այլ աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների միասնական թույլտվության հասկացությունը: Սա կազմակերպություններին հնարավորություն կտա ստանալ մթնոլորտ վնասակար նյութերի և ջերմոցային գազերի արտանետումների միասնական թույլտվություն՝ խուսափելով կրկնօրինակումից:

2. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-150-Ն օրենքը:

Բացթողումներ

Օրենքում պահանջվող կլիմայի փոփոխության վրա ազդեցություն ունեցող գործոնների և կլիմայի փոփոխության մեղմմանն ու հարմարվողականությանն ուղղված միջոցառումների գործնական գնահատման գործիքակազմը սահմանված չէ: Գործիքակազմի բացակայությունը հնարավորություն չի տալիս կատարել նախատեսվող գործունեության, հայացեկարգի կամ ռազմավարության վրա կլիմայի փոփոխության ազդեցության գնահատում, ինչպես նաև այդ գործունեությունների իրականացման ժամանակ կլիմայի մեղմմանն ուղղված միջոցառումների արդյունավետության գնահատում:

Առաջարկություն շրջակա միջավայրի նախարարությանը

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-150-Ն օրենքում կատարել փոփոխություններ և սահմանել օրենքով պահանջվող կլիմայի փոփոխության վրա ազդեցություն ունեցող գործոնների և կլիմայի փոփոխության մեղմմանն ու հարմարվողականությանն ուղղված միջոցառումների գործնական գնահատման գործիքակազմ:

3. «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, 07.07.22թ., ՀՕ-316-Ն

Բացթողումներ

Լիազոր մարմնի գործառույթները սահմանող 10-րդ հոդվածում բացակայում են.

- ջրային ոլորտում կլիմայական բացասական ազդեցությունների մեղմման, կլիմայի փոփոխման տեսանկյունից ջրօգտագործման հայտերի գնահատման մեխանիզմներ սահմանելու լիազորությունը
- ջրային ռեսուրսների խոցելիության ու կլիմայի փոփոխության հարմարվողականության գնահատման, անտրոպոգեն ազդեցությամբ պայմանավորված ջրային պաշարի նվազման չափորոշիչների ընդունման լիազորությունը:

2. Օրենսգրքում բացակայում են ջրի կրկնակի օգտագործման համար իրավական հիմքեր պարունակող և դրա խթանմանը նպաստող դրույթներ:

Առաջարկություններ ՇՄՆ-ին

1. ՀՀ ջրային օրենսգրքում կատարել լրացումներ, ամրագրելով.

- կլիմայի փոփոխությամբ կամ անտրոպոգեն ազդեցությամբ պայմանավորված «ջրային պաշարի նվազման չափորոշիչներ», ինչը հնարավորության կտա կիրարկելու օրենքի 33.1 հոդվածը, որը սահմանում է ջրօգտագործման թույլտվությունների վերանայման դեպքերը
- ջրային ոլորտում կլիմայական բացասական ազդեցությունների մեղմման, կլիմայի փոփոխման տեսանկյունից ջրօգտագործման հայտերի գնահատման մեխանիզմների վերաբերյալ դրույթներ
- ջրի կրկնակի կամ վերօգտագործման արդյունավետ իրականացման և դրա խթանմանը նպաստող դրույթներ, որոնք կապահովեն ջրի ռացիոնալ օգտագործում և ջրախնայողություն:

4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունվարի 11- ի թիվ 54-Ն որոշումը «Ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման կարգը հաստատելու մասին»

Բացթողումներ

Որոշմամբ հաստատված 4-րդ ձևով պահանջվում է տեղեկատվություն տրամադրել համայնքային աղբավայրեր ուղարկված թափոնների ծավալի մասին: Սակայն «համայնքային աղբավայր» եզրը «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» և «Թափոնների մասին» ՀՀ օրենքներում բացակայում է:

- Համայնքների վարչական տարածքներում բացի «համայնքային աղբավայրից» առկա են նաև ինքնակամ աղբակույտեր, որոնց վերաբերյալ տվյալների

հավաքագրում կարգով նախատեսված չէ, ինչը չի ապահովի աղբավայրերից արտանետվող մեթանի ծավալի ճշգրիտ հաշվարկ:

- Ձև 2-ի 2.8 կետով պահանջվող «արձանագրված ապօրինի ծառահատումների թվի» վերաբերյալ տեղեկատվությունը լիարժեք չէ գնահատելու համար CO_2 գազի կլանվող քանակություններն անտառային ոլորտից, քանի որ չի արտացոլում ապօրինի ծառահատումների իրական թիվը:
- Կարգը չի նախատեսում ջերմոցային գազերի վերաբերյալ հաշվետվություն չներկայացնելու դեպքում պատասխանատվության միջոցներ:

Առաջարկություններ շրջակա միջավայրի նախարարությանը

Փոփոխել և լրացնել որոշումը՝ ներառելու հետևյալը.

- **«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում փոփոխություն կատարելու դրույթ, ինչը կապահովի կարգի պահանջի կիրարկումը՝ պատասխանատվություն սահմանելով ջերմոցային գազերի վերաբերյալ հաշվետվությունները չներկայացնելու համար դրույթ:**
- «Համայնքային աղբավայրեր»-ում տեղադրվող կենցաղային կոշտ թափոնների ծավալների և ապօրինի ծառահատումների մասով սահմանել իրատեսական ցուցանիշներ ջերմոցային գազերի հաշվարկի լիարժեքության համար
- **«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» և «Թափոնների մասին» ՀՀ օրենքներում կատարել լրացում՝ սահմանելով «համայնքային աղբավայր» հասկացությունը՝ ապահովելու Ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման կարգը հաստատելու մասին» N 54-Ն որոշման համահունչությունը, պահանջվող «համայնքային աղբավայրեր»-ից արտանետվող ջերմոցային գազերի վերաբերյալ հաշվետվողականության իրավական հիմքը:**

5. Հայաստանի Հանրապետության կառավարություն 2021 թվականի ապրիլի 22-ի թիվ 610-Լ որոշում «Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների ազգային մակարդակով սահմանված գործողությունները հաստատելու մասին»

Բացթողումներ

- ԱՍԳ-ում ջերմոցային գազերի կրճատման որոշ թիրախների ընտրությունը հիմնավորված չէ, քանի որ հաշվարկների հիմքում բացակայել է անտառների ելային մակերեսը, հաշվի չեն առնվել ինքնակամ աղբակույտերից արտանետվող ջերմոցային գազերը:

Առաջարկություններ ՀՀ կառավարությանը

- Սահմանել ԱՍԳ 2.0-ի կատարողականի գնահատման ցուցանիշներ, ըստ դրանց գնահատել ԱՍԳ 2.0-ի կատարողականը և ապահովել դրա հանրայանցումը:
- ԱՍԳ 3.0-ի մշակման ժամանակ սահմանել իրատեսական թիրախներ՝ հաշվի առնելով ինչպես ԱՍԳ 2.0-ի կատարողականը, այնպես էլ հաշվարկների իրական հիմքերը, ՀՀ կարողությունները:
- Ընդունել «Ջերմոցային գազերի արտանետումների մեղմման քաղաքականությունների և միջոցառումների չափման, մշտադիտարկման, գնահատման և հաշվետվողականության մասին» ՀՀ կառավարության որոշում

6. «Կլիմայի մասին» օրենքի նախագիծ

Բացթողումներ

- Օրինագծում նախատեսված կլիմայի փոփոխության նկատմամբ խոցելի համայնքներին պետական աջակցության երաշխավորման գործիքակազմը բացակայում է, ինչը չի ապահովում երաշխավորի հասցեականություն և օրենքի կիրառելիություն այս հարցում:
- Նախատեսված չէ համայնքներին ջերմոցային գազերի արտանետումների կրճատման ու կլանիչների ընդլայնման հարցերում աջակցության դրույթ, ինչն անհրաժեշտ է պետական քաղաքականության ձախողում թույլ չտալու համար:
- Օրենքի նախագծով սահմանվող՝ համայնքային բյուջեի կլիմայական նշագրման պահանջն իմպերատիվ չէ:
- Բացակայում է ՏԻՄ-երի կողմից ստացված և անհրաժեշտ կլիմայական ֆինանսավորման, տեխնոլոգիաների փոխանցման և կարողությունների զարգացման ոլորտում նախատեսվող մշտադիտարկումների կատարման և դրանց վերաբերյալ երկամյա պարբերականությամբ լիազոր մարմնին տվյալների ներկայացման համապատասխան գործիքակազմը:
- Բացակայում է օրինագծի 15-րդ հոդվածի 2-րդ մասով համայնքի վրա ուղղակի կամ անուղղակի ազդեցություններ ունեցող կլիմայի փոփոխության մեղմման ու հարմարվողականության բաղադրիչներ ներառող իրավական ակտերի մշակման գործընթացին ՏԻՄ-ի մասնակցության և դրա վերաբերյալ գրավոր դիրքորոշման ներկայացման ընթացակարգերը:
- Օրինագծի պահանջները խախտելու դեպքում պատասխանատվություն կիրարկելու համար օրենքը չի նախատեսում «Իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու պահանջ:

Առաջարկություններ Շրջակա միջավայրի նախարարությանը

- Սահմանել օրենքի նախագծում նախատեսված խոցելի համայնքներին աջակցության երաշխավորման գործիքակազմը՝ ապահովելու երաշխավորի հասցեականություն և օրենքի կիրառելիություն այս հարցում:
- Ավելացնել ջերմոցային գազերի արտանետումների կրճատման ու կլանիչների ընդլայնման հարցերում համայնքներին աջակցության ցուցաբերման դրույթ:

- Օրենքի նախագծով սահմանվող՝ համայնքային բյուջեի կլիմայական նշագրման պահանջը դարձնել իմպերատիվ:
- Նախատեսել ՏԻՄ-երի կողմից ստացված և անհրաժեշտ կլիմայական ֆինանսավորման, տեխնոլոգիաների փոխանցման և կարողությունների զարգացման ոլորտում նախատեսվող մշտադիտարկումների կատարման և դրանց վերաբերյալ երկամյա պարբերականությամբ լիազոր մարմնին տվյալների ներկայացման համապատասխան գործիքակազմ:
- Ավելացնել համայնքի վրա ուղղակի կամ անուղղակի ազդեցություններ ունեցող կլիմայի փոփոխության մեղմման ու հարմարվողականության բաղադրիչներ ներառող իրավական ակտերի մշակման գործընթացին ՏԻՄ-ի մասնակցության և դրա վերաբերյալ գրավոր դիրքորոշման ներկայացման ընթացակարգերը:
- Օրենքի նախագծի փաթեթում նախատեսել «Իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին դրույթ:

7. «Ջրային ռեսուրսների ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2022 թվականի նոյեմբերի 3-ի N 1692 - Լ որոշում

Բացթողումներ

- Որոշման մեջ հստակ սահմանված չեն ոլորտում լիազորություններ ունեցող պետական գերատեսչությունների միջև ոլորտային քաղաքականություններում փոխհարաբերությունների կարգավորումները, բացառությամբ Ջրային կոմիտեի հետ տեղեկատվության փոխանակման դրույթի:
- Բացակայում են «Ջրային ռեսուրսների հիդրոլոգիական և քիմիական կանխատեսումների բազիսային, լավատեսական և վատատեսական սցենարների կազմում» միջոցառումը, որը դժվարացնում է կլիմայի փոփոխության պայմաններում ջրային ոլորտի ռիսկերի կառավարումը:
- Քաղաքացիական հասարակական կազմակերպությունների մասնակցությունը սահմանափակված է միայն ԿՓ տեղական ազդեցությունների դիտորդմամբ: Բացակայում է ջրային ոլորտի հարմարվողականության միջոցառումների իրականացման արդյունավետության գնահատման ցուցանիշներում քաղհասարակության և համայնքների կարծիքի բաղադրիչը:
- 26 միջոցառումների կատարման ժամկետները և պահանջվող գումարները ներդրումներն անիրատեսական են, քանի որ ծրագիրը հաստատվել է 2022թ. նոյեմբերին, և 3 տարում այդ միջոցառումների կատարման փաստը հետևյալ է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռիսկերը:

Առաջարկություններ ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը

- «Ջրային ռեսուրսների հիդրոլոգիական և քիմիական կանխատեսումների, բազիսային, լավատեսական և վատատեսական սցենարների կազմում» միջոցառումը, որը կնպաստի կլիմայի փոփոխության պայմաններում ջրային ոլորտի ռիսկերի կառավարմանը

- ոլորտում լիազորություններ ունեցող պետական գերատեսչությունների միջև փոխգործակցության դրույթ, ինչը կապահովի ջրային ոլորտի հարմարվողականության միջոցառումներում տարբեր իրավասու պետական գերատեսչությունների գործառույթների ներդաշնակեցում

- ջրային ոլորտի հարմարվողականության միջոցառումների իրականացման արդյունավետության գնահատման ցուցանիշներում ներառել նաև քաղաքացիական հասարակության կարծիքների բաղադրիչ, ինչը կապահովի միջոցառումների գնահատման ներառականությունը:
- Սահմանել ծրագրի իրականացման միջոցառումների իրատեսական ժամկետներ՝ հաշվի առնելով ֆինանսական հնարավորությունները, ինչը կապահովի միջոցառումների կատարումը սահմանված ժամկետներում:

8. ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 20-ի որոշումը «ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 1886-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»:

Բացթողումներ

- Միջոցառումներում բացակայում է տեղական մակարդակում՝ համայնքների, ֆերմերային տնտեսությունների կողմից ԿՓ հարմարվողականությանը միտված միջոցառումների և ծրագրերի ներկայացման պարագայում դրանց իրագործման համար լիազոր մարմնի օժանդակության, խորհրդատվության ցուցաբերման վերաբերյալ դրույթ:

Առաջարկություն ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը

1. Փոփոխություններ և լրացումներ կատարել ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 19-ի «ՀՀ գյուղատնտեսության ոլորտի 2020-2030 թվականների տնտեսական զարգացման ուղղությունները և ՀՀ գյուղատնտեսության ոլորտի 2023-2026 թվականների տնտեսական զարգացման ուղղությունների իրականացման միջոցառումների ծրագիրը» թիվ 1886-Լ որոշման մեջ՝ ապահովելով.

- համայնքների, ֆերմերային տնտեսությունների կողմից ԿՓ հարմարվողականությանը միտված միջոցառումների և ծրագրերի ներկայացման պարագայում լիազոր մարմնի կողմից դրանց օժանդակության, խորհրդատվության ցուցաբերման վերաբերյալ դրույթների ներառում, գյուղատնտեսության ոլորտում՝ ՋԳ-ՑԱԶԵՌ-ով նախանշվող թիրախներին ռազմավարության համապատասխանեցում:

2. Մշակել գյուղատնտեսական կոոպերատիվների խթանման մեխանիզմներ և ներդնել դրանք համայնքներում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մասնակիորեն իրականացվել են ՀԸԳՀ ճանապարհային քարտեզի 121-րդ, 123-րդ և 130-րդ միջոցառումները: 122-րդ միջոցառման իրականացումը կարելի է համարել մեկնարկած: 2021-2024 թվականների ընթացքում ԿՓ մեղմման և հարմարվողականության վերաբերյալ ՀԸԳՀ հոդվածների շրջանակում ընդունվել է 3 օրենք, ՀՀ կառավարության 7 որոշում, ՀՀ վարչապետի 1 որոշում և 4 նորմատիվ ակտ: Բացթողումներ են հայտնաբերվել 14 օրենքներում, և մշակվել են այդ բացթողումները լրացնելու առաջարկություններ:

«Անտառ» ոլորտ

- Հայաստանի անտառների վերաբերյալ տարբեր աղբյուրներից ստացված տվյալները տարբերվում են և չեն կարող օգտագործվել անտառածածկի ավելացման նպատակով նոր կլիմայական նպատակներ սահմանելու համար:
- ԱՍԳ-ով մինչև 2030թ. նախատեսված անտառածածկի մինչև 12,9% ավելացման համար անհրաժեշտ 50,000 հա նոր անտառից 2021-2024թթ. տնկվել է ընդամենը մոտ 1,64%-ը:
- 1993թ. անտառային հողերի պետական գույքագրումից երեսուն տարի անց անտառային հողերը կրճատվել են 126,200 հեկտարով: Միայն 2021-2023թթ. դրանք նվազել են 200 հեկտարով: Անտառածածկ հողերը նվազել են 45,000 հեկտարով: Միայն 2021-2023թթ. դրանք նվազել են 100 հեկտարով:
- Պետական մարմիններն անտառային համակարգերի վիճակը գնահատելու համար միասնական ցուցանիշներ չեն կիրառում, ինչն իջեցնում է նախատեսված միջոցառումների, այդ թվում՝ կլիմայական միջոցառումների արդյունավետությունը:
- 1990-2019թթ. համար ՀՀ ջերմոցային գազերի արտանետումների ազգային կադաստրի հաշվետվության համաձայն՝ «Անտառկառավարում և այլ հողօգտագործում» ոլորտից CO_2-ի կլանման ծավալները նվազել են՝ 2010թ.-550.1 Գգ CO_2 համարժեքից մինչև 2019թ. -373.0 Գգ CO_2 համարժեք:

«Գյուղատնտեսություն» ոլորտ

- Միայն 2021-2023թթ. ընթացքում գյուղատնտեսական նշանակության հողատարածքները նվազել են 1,1 հազար հեկտարով:
- Կլիմայի փոփոխության նկատմամբ դիմակայունություն ապահովող համակարգերը, ինչպիսիք են հակակարկտային համակարգերը, ապահովագրությունը, ոռոգումը, վտանգավոր հիդրոօդերևութաբանական երևույթների կանխատեսման և վաղ նախազգուշացման համակարգերը, բավականաչափ զարգացած չեն:
- 2021-2023թթ. ընթացքում «Ջրառ» ՓԲԸ-ի կողմից ոռոգվել է ոռոգելի հողերի միջինում 18.5%-ը:
- Հաշվետու ժամանակահատվածում հողերի անմշակ մնալու հիմնական պատճառները, այդ թվում՝ ոռոգման ջրի անհասանելիությունը, ջրամբարներում ջրի անբավարար կուտակումը և հողերի մասնատվածությունը, մնացել են չլուծված:
- 2021-2024թթ. ընթացքում գյուղատնտեսության ոլորտի (ներառյալ անտառային տնտեսությունը և ձկնորսությունը) մանաբաժինը ՀՆԱ-ում 2021թ. 11,1%-ից նվազել է մինչև 2024թ. 7,9%:

- Խոշոր և մանր եղջերավոր անասունների ներմուծման ցուցանիշները համապատասխանում են գյուղատնտեսական ռազմավարությամբ սահմանված նպատակներին:

«Էներգետիկա» ոլորտ

- Հայաստանը կարող է հասնել ԱՍԳ-ով սահմանված՝ վերականգնվող էներգիայի մասնաբաժնի կրկնապատկման թիրախին, քանի որ փոքր հիդրոէլեկտրակայանների և արևային էլեկտրակայանների կողմից արտադրված էլեկտրաէներգիայի մասնաբաժինը էներգետիկ համակարգում 2021-2024թթ. ընթացքում 8,57%-ից աճել է մինչև 19,4%:
- Ըստ Եվրոստատի սահմանման՝ Հայաստանի տնային տնտեսությունների 58,6%-ը էներգետիկ աղքատ է: ՀԸԳՀ-ում էներգետիկ աղքատության վերաբերյալ հատուկ կանոնակարգեր ներառված չեն:

«Թափոն» ոլորտ

- ՀԸԳՀ հավելված 3-ի «Թափոնների կառավարում» բաժնի պահանջների մեծ մասը չի կատարվել:
- Թափոնների տեսակավորման և վերամշակման փոքր ծավալների պատճառով համայնքային կոշտ թափոնների մեծ մասը տեղափոխվում է աղբավայրեր: Թափոնների տեսակավորման և վերամշակման տնտեսական մեխանիզմները բավարար չեն այս ոլորտում ներգրավված բիզնեսներին խրախուսելու համար: Նման իրավիճակում ԱՍԳ-ով սահմանված թիրախներին հասնելը քիչ հավանական է:
- Հայաստանում ջրառի մեծ մասը չի մտնում կոյուղու համակարգ: Կեղտաջրերի մաքրման կայաններից կենսագազ չի հավաքվում, ինչը հանգեցնում է ջերմոցային գազերի արտանետումների աճի:
- 580 բնակավայրում կոյուղու համակարգերի անցկացման հետ կապված խնդիրները մնում են չլուծված:
- Հայաստանը չունի կեղտաջրերի կառավարման ոլորտի զարգացման ծրագիր:

Համայնքներ

- Համայնքները կլիմայական ռիսկի գնահատում չեն իրականացրել և ԿՓ մեղմման և հարմարվողականության ծրագիր/ ռազմավարություն չեն մշակել:
  Օրենսդրական դաշտի թերությունները, գործիքների պակասը, իրավական ակտերի միջև հակասությունները խոչընդոտում են համայնքներում կլիմայական թիրախներին հասնելուն:
- Առկա է տեխնիկական ռեսուրսների և մասնագետների պակաս:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջարկություններ ԵՄ-ին

- ԵՄ հրահանգներում ներառել «էներգետիկ աղքատության» չափման հստակ ցուցանիշներ և մշակել դրա հաղթահարմանն ուղղված գործիքակազմ:
- Առաջնորդվելով ՀԸԳՀ-ի 52-րդ հոդվածով՝ աջակցել Հայաստանին նոր հակակարկտային տեխնոլոգիաների ներդնման և անտառային տարածքների գույքագրման գործում:

Առաջարկություններ ՀՀ կառավարությանը

- Սահմանել ԱՍԳ 2.0-ի իրականացման կատարողականի ցուցանիշներ, գնահատել դրա կատարողականն այդ ցուցանիշների հիման վրա և ապահովել դրա թափանցիկությունը:
- ԱՍԳ 3.0-ը մշակելիս սահմանել իրատեսական թիրախներ՝ հաշվի առնելով ինչպես ԱՍԳ 2.0-ի կատարողականը և հաշվարկների իրական հիմքերը, այնպես էլ երկրի կարողությունները:
- Ընդունել «Ջերմոցային գազերի արտանետումների մեղմման քաղաքականությունների և միջոցառումների չափման, մշտադիտարկման, գնահատման և հաշվետվողականության մասին» ՀՀ կառավարության որոշումը:
- ՋԳ-ՑԱՋԵՌ-ի ոլորտային սցենարներում նշված միջոցառումները ներառել էներգետիկայի, արդյունաբերության, գյուղատնտեսության, թափոնների կառավարման և անտառների ոլորտային զարգացման ռազմավարություններում, ինչը կապահովի ԿՓ մեղմման և հարմարվողականության թիրախներին հասնելու հստակ պլանավորումը:
- Մշակել և ներդնել համայնքային ինքնավար արևային էլեկտրակայանների ընդլայնման պետական աջակցության մեխանիզմներ՝ նպատակ ունենալով աստիճանաբար կրճատել հեղուկ գազի օգտագործումը տնային տնտեսություններում և ջերմոցային գազերի արտանետումները:
- Ապահովել գյուղատնտեսական նշանակության հողերի ապահովագրության համակարգի կարողությունների զարգացումը՝ ոլորտի կլիմայական դիմակայունությունը բարձրացնելու նպատակով:
- Խրախուսել կարկտապաշտպան ցանցերի տեղադրումը նոր տարածքներում:

Առաջարկություններ Շրջակա միջավայրի նախարարությանը

- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ 4-րդ հոդվածի 19-րդ կետում սահմանելով անշարժ աղբյուրներից ջերմոցային գազերի և այլ աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների միասնական թույլտվության հասկացությունը: Սա թույլ կտա կազմակերպություններին ստանալ մթնոլորտ վնասակար նյութերի և ջերմոցային գազերի արտանետման մեկ միասնական թույլտվություն՝ խուսափելով կրկնօրինակումից:

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-150-Ն օրենքում կատարել փոփոխություններ և սահմանել օրենքով պահանջվող կլիմայի փոփոխության վրա ազդեցություն ունեցող գործոնների և կլիմայի փոփոխության մեղմմանն ու հարմարվողականությանն ուղղված միջոցառումների գործնական գնահատման գործիքակազմ:
- ՀՀ ջրային օրենսգրքում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ հետևյալը ներառելու համար.
  - «ԿՓ կամ մարդածին ազդեցության հետևանքով ջրային ռեսուրսների կրճատման չափանիշներ», ինչը հնարավոր կդարձնի օրենքի 33.1 հոդվածի կիրարկումը, որով սահմանվում են ջրօգտագործման թույլտվությունների վերանայման դեպքերը:
  - ԿՓ տեսանկյունից ջրօգտագործման թույլտվությունների դիմումների գնահատման մեխանիզմների և ջրային ոլորտում ԿՓ բացասական ազդեցությունը մեղմելու մեխանիզմների վերաբերյալ դրույթներ:
  - Ջրի արդյունավետ վերաօգտագործումն ապահովող և խթանող դրույթներ, որոնք կնպաստեն ջրի ռացիոնալ օգտագործմանը և պահպանմանը:
- Փոփոխություններ և լրացումներ կատարել «ՀՀ կառավարության 2024 թվականի հունվարի 11-ի «Ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման կարգը հաստատելու մասին» թիվ 54-Ն որոշման մեջ»՝ ներառելով հետևյալը.

- «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում փոփոխություն կատարելու դրույթ, ինչը կապահովի կարգի պահանջի կիրարկումը՝ պատասխանատվություն սահմանելով ջերմոցային գազերի վերաբերյալ հաշվետվությունները չներկայացնելու համար դրույթ:
- «Համայնքային աղբավայրեր»-ում տեղադրվող կենցաղային կոշտ թափոնների ծավալների և ապօրինի ծառահատումների մասով սահմանել իրատեսական ցուցանիշներ ջերմոցային գազերի հաշվարկի լիարժեքության համար:
- «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» և «Թափոնների մասին» ՀՀ օրենքներում կատարել լրացում՝ սահմանելով «համայնքային աղբավայր» հասկացությունը՝ ապահովելու Ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման կարգը հաստատելու մասին» N 54-Ն որոշման համահունչությունը, պահանջվող «համայնքային աղբավայրեր»-ից արտանետվող ջերմոցային գազերի վերաբերյալ հաշվետվողականության իրավական հիմքը:

- «Ջրային ռեսուրսների ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագիրը» հաստատելու մասին ՀՀ կառավարության 2022թ. նոյեմբերի 3-ի թիվ 1692-Լ որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.
  - Ջրային ռեսուրսների հիդրոլոգիական և քիմիական կանխատեսումների, բազիսային, լավատեսական և վատատեսական սցենարների կազմում» միջոցառումը, որը կնպաստի կլիմայի փոփոխության պայմաններում ջրային ոլորտի ռիսկերի կառավարմանը:Ներառել ոլորտում լիազորություններ ունեցող պետական գերատեսչությունների միջև փոխգործակցության դրույթ, ինչը կապահովի ջրային ոլորտի հարմարվողականության

միջոցառումներում տարբեր իրավասու պետական գերատեսչությունների գործառույթների ներդաշնակեցում:
- Ջրային ոլորտի հարմարվողականության միջոցառումների իրականացման արդյունավետության գնահատման ցուցանիշներում ներառել նաև քաղաքացիական հասարակության կարծիքների բաղադրիչ, ինչը կապահովի միջոցառումների գնահատման ներառականությունը:
- Սահմանել ծրագրի իրականացման միջոցառումների իրատեսական ժամկետներ՝ հաշվի առնելով ֆինանսական հնարավորությունները, ինչը կապահովի միջոցառումների կատարումը սահմանված ժամկետներում:

- «Կլիմայի մասին» օրենքի նախագծում մեջ կատարել հետևյալ լրացումները.
- Սահմանել օրենքի նախագծում նախատեսված խոցելի համայնքներին աջակցության երաշխավորման գործիքակազմը, ապահովելու երաշխավորի հասցեականություն և օրենքի կիրառելիություն այս հարցում:
- Ավելացնել ջերմոցային գազերի արտանետումների կրճատման ու կլանիչների ընդլայնման հարցերում համայնքներին աջակցության ցուցաբերման դրույթ:
- Օրենքի նախագծով սահմանվող՝ համայնքային բյուջեի կլիմայական նշագրման պահանջը դարձնել իմպերատիվ:
- Նախատեսել ՏԻՄ-երի կողմից ստացված և անհրաժեշտ կլիմայական ֆինանսավորման, տեխնոլոգիաների փոխանցման և կարողությունների զարգացման ոլորտում նախատեսվող մշտադիտարկումների կատարման և դրանց վերաբերյալ երկամյա պարբերականությամբ լիազոր մարմնին տվյալների ներկայացման համապատասխան գործիքակազմ:
- Ավելացնել համայնքի վրա ուղղակի կամ անուղղակի ազդեցություններ ունեցող կլիմայի փոփոխության մեղմման ու հարմարվողականության բաղադրիչներ ներառող իրավական ակտերի մշակման գործընթացին ՏԻՄ-ի մասնակցության և դրա վերաբերյալ գրավոր դիրքորոշման ներկայացման ընթացակարգերը:
- Օրենքի նախագծի փաթեթում նախատեսել «Իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին դրույթ:

- Բնապահպանական ռազմավարությունը մշակելիս հաշվի առնել ՋԳ-ՑԱՋԵՌ-ով սահմանված թիրախները և ներառել դրույթներ համայնքային նշանակության անտառային հողերում անտառապատման և անտառվերականգնման աշխատանքների վերաբերյալ:
- Անցկացնել ՀՀ անտառային տարածքների զույգագրում՝ անտառային տարածքների իրական վիճակի ճշգրիտ պատկերը ստանալու և իրատեսական թիրախներ սահմանելու համար: Այս միջոցառումների ֆինանսավորումն ապահովելու համար դիմել ՀՀ կառավարությանը և միջազգային դոնոր կազմակերպություններին:
- Ուժեղացնել անտառային տարածքների նկատմամբ վերահսկողությունը՝ մարդածին անտառային հրդեհները բացառելու նպատակով:
- Փայտանյութի ապօրինի տեղափոխման վերահսկողության վեկտորն ուղղել անտառներում ապօրինի անտառահատումների կանխարգման միջոցառումներին:
- Նոր անտառների տնկումից հետո ապահովել դրանց պաշտպանության համար անհրաժեշտ միջոցառումները:

- Բարելավել անտառային մոնիթորինգի առկա համակարգը:
- Մշակել անտառային համակարգերի վիճակի գնահատման միասնական ցուցանիշներ, ներառյալ կլիմայական ցուցանիշները:

Առաջարկություն Արդարադատության նախարարությանը

- Քրեական պատասխանատվություն սահմանել անտառածածկ տարածքների ոչնչացման, անտառների ոչնչացման համար:

Առաջարկություն Էկոնոմիկայի նախարարությանը

- Փոփոխություններ և լրացումներ կատարել ՀՀ կառավարության 2021թ. հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» թիվ 987-Ն որոշման մեջ՝ սահմանելով գյուղատնտեսական նշանակության հողերի նշանակությունը փոփոխությունը բացառող դեպքերը:
- Փոփոխություններ և լրացումներ կատարել ՀՀ կառավարության 2019թ. դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարությունը և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության կատարմանն ուղղված 2020-2022 թվականների միջոցառումների ծրագիրը և ժամանակացույցը հաստատելու մասին» թիվ 1886-Լ որոշման մեջ՝ դրանում գյուղատնտեսության ոլորտի համար ՁԳ-ՑԱԶԵՌ-ով սահմանված թիրախների ներառումն ապահովելու, ինչպես նաև համայնքներին և ֆերմերային տնտեսություններին ԿՓ հարմարվողականության միջոցառումների և ծրագրերի իրականացման գործում աջակցելու և խորհրդատվություն տրամադրելու և գյուղատնտեսական կոոպերատիվների գործունեությունը խթանելու վերաբերյալ դրույթներ ներառելու համար:
- Ուսումնասիրել ժամանակակից տեխնոլոգիաներով գործող հակակարկտային համակարգերի միջազգային փորձը և հարմարեցնել դրանք Հայաստանում օգտագործման համար:

Առաջարկություններ ՏԿԵ նախարարությանը

- «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում կատարել լրացում՝ ջերմոցային գազերի տարեկան հաշվետվության, մթնոլորտից ջերմոցային գազերի կլանման ցուցանիշների և ԿՓ մեղմման միջոցառումների մոնիթորինգի վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան լիազորություններն ու պարտականությունները սահմանելու համար՝ ՀՀ կառավարության 2024 թվականի հունվարի 11-ի «Ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման կարգը հաստատելու մասին» թիվ 54-Ն որոշման պահանջների կատարումն ապահովման նպատակով:

- «ՀՀ պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 1708-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկություն ներկայացնել ՀՀ կառավարություն ԿՓ հարմարվողականության և մեղմման, Էներգախնայողության և էներգաարդյունավետության ծրագրերի իրականացման դեպքում համայնքների կողմից ավելի ցածր համաֆինանսավորման մասնաբաժին ունենալու վերաբերյալ:
- Փոփոխություններ կատարել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի թիվ 143-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման մեջ՝ թափոնների կառավարման համակարգի ռազմավարությունըՋԳ-ՑԱՋԵՌ-ով սահմանված թիրախների համահունչ դարձնելու համար:
- Առաջնահերթություն տալ էներգետիկ ոլորտի զարգացման նոր ռազմավարության ընդունմանը, որը կներառի ԿՓ հարմարվողականության համապարփակ միջոցառումներ:
- Մշակել կեղտաջրերի հեռացման ոլորտի զարգացման ծրագիր: Փաստաթուղթ պետք է.
  - հաշվի առնի կեղտաջրերից ջերմոցային գազերի արտանետումները կրճատելու՝ պետության պարտավորությունները
  - ներառի դրույթներ Հայաստանի ԱՍԳ-ով սահմանված ջերմոցային գազերի արտանետումների կրճատման միջոցառումների իրականացման համար
  - միջոցառումներ ձեռնարկի կոյուղու համակարգերի անկացման համար այն 580 բնակավայրերում, որոնք ներկայում զուրկ են նման ենթակառուցվածքներից
  - Ապահովի կենսագազի հավաքման ենթակառուցվածքների ներդնում գործող և նախատեսվող կեղտաջրերի մաքրման կայաններում:
- Աջակցել համայնքապետարանների աշխատակազմում էներգետիկայի և կլիմայի ոլորտի փորձագետների թափուր աշխատատեղերի լրացման գործընթացին: Սա կհզորացնի տեղական մակարդակում կլիմայական քաղաքականության տեղայնացումը, համայնքի կարողությունները և կապահովի այդ մասնագետների օգնությամբ կլիմայական բաղադրիչի ներառումը համայնքի տարեկան աշխատանքային ծրագրերում, հնգամյա զարգացման ծրագրերում և սուբվենցիոն ծրագրերում:

Հավելված 1

ՀՀ շրջակա միջավայրի նախարար
պարոն Հակոբ Սիմիդյանին
GOPA-PACE կազմակերպության կողմից իրականացվող
«Աջակցություն Հայաստանին ՀԸԳՀ-ի իրականացման,
մշտադիտարկման և տեղեկացվածության բարձրացման»
ծրագրի փորձագետ Վիկտորյա Բուռնազյանից

ՀԱՐՑՈՒՄ

Հարգելի պարոն նախարար,

համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն, թե ՀՀ կառավարության 2019 թվականի հունիսի 1-ի N 666-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» (ՀԸԳՀ/CEPA) ճանապարհային քարտեզի 121-րդ միջոցառման ապահովման համար ազգային, տարածաշրջանային և միջազգային համագործակցության շրջանակներում կանխատեսումների ներպետական համակարգի ստեղծման և համապատասխան ինստիտուցիոնալ կարողությունների հզորացման համար ինչ տեխնիկական աջակցություն է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը ստացել 2021-2024թթ. ժամանակահատվածում:

Խնդրում եմ տեղեկատվությունը տրամադրել հետևյալ ձևաչափով:

հ/հ	Տեխնիկական աջակցություն ցուցաբերած կազմակերպության/ծրագրի անվանումը	Տեխնիկական աջակցությամբ ձեռք բերված գործիքը/գործիքակազմը	Գործիքակազմի նպատակային նշանակությունը	Այլ, լրացուցիչ տեղեկատվություն
1.				
2.				
3.				

Հարգանքով՝

Վիկտորյա Բուռնազյան
Բջջ.
էլ. հասցե՝ vicaburnazyan@gmail.com
Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան,
10.01.2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
REPUBLIC OF ARMENIA
DEPUTY MINISTER OF ENVIRONMENT
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ

№ 3/18.15/618

«____» «_____» 2025թ.

GOPA-PACE կազմակերպության կողմից իրականացվող
«Աջակցություն Հայաստանին ՀԸԳՀ-ի իրականացման,
մշտադիտարկման և տեղեկացվածության բարձրացման»
ծրագրի փորձագետ
տիկին Վիկտորյա Բուռնազյանին

Հարգելի տիկին Բուռնազյան

Ի պատասխան Ձեր 2025 թվականի հունվարի 10-ի հարցման՝ հայտնում եմ, որ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 666-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» (ՀԸԳՀ/CEPA) ճանապարհային քարտեզի 121-րդ միջոցառման՝ Կլիմայի փոփոխությանն առնչվող ջերմոցային գազերի արտանետումների (ներառյալ ավիացիոն արտանետումների) գույքագրման ազգային համակարգի ստեղծման, քաղաքականությունների, միջոցների և կանխատեսումների ներպետական համակարգի ստեղծման և համապատասխան ինստիտուցիոնալ կարողությունների հզորացման նպատակով շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը 2021-2024թ-ին տեխնիկական աջակցություն չի ստացել:

X _____

Հարգանքով՝

Տիգրան Գաբրիելյան

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ
Անի Մարգարյան, 010 57 62 80

Հավելված 2

ՀՀ շրջակա միջավայրի նախարար
պարոն Հակոբ Սիմիդյանին
GOPA-PACE կազմակերպության կողմից իրականացվող
«Աջակցություն Հայաստանին ՀԸԳՀ-ի իրականացման,
մշտադիտարկման և տեղեկացվածության բարձրացման»
ծրագրի փորձագետ Վիկտորյա Բուռնազյանից

ՀԱՐՑՈՒՄ

Հարգելի պարոն նախարար,

GOPA-PACE կազմակերպության կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանին ՀԸԳՀ-ի իրականացման, մշտադիտարկման և տեղեկացվածության բարձրացման» ծրագրի շրջանակներում պետք է պատրաստվի զեկույց «Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» կատարողականի վերաբերյալ: Ես ներկայացնելու եմ կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ու մեղմմանը վերաբերող միջոցառումների մշտադիտարկման արդյունքները: Այդ նպատակով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

1. 2021-2024թթ. Շրջակա միջավայրի նախարարության կողմից ՀՀ-ում ջերմոցային գազերի արտանետումների քվոտաների ներդրման ուղղությամբ ի՞նչ քայլեր են ձեռնարկվել:

2. 2021-2024թթ. ընթացքում ՀՀ անտառային և բնության հատուկ պահպանվող տարածքներում քանի՞ հա անտառ է տնկվել և քանի՞ հա տարածքում է անտառվերականգնման աշխատանքներ իրականացվել, քանի՞ տոկոս է կազմել տնկիների կպչողականությունը (Ցանկալի է տվյալները տալ ըստ յուրաքանչյուր անտառտնտեսության և յուրաքանչյուր բնության հատուկ պահպանվող տարածքի):

3. 2021-2024թթ. հրդեհների արդյունքում քանի՞ հա անտառ է այրվել և ի՞նչ աշխատանքներ են կատարվել դրանց վերականգնման ուղղությամբ:

4. 2021-2024թթ. ապօրինի քանի՞ ծառ է հատվել:

5. Ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացներում երբվանի՞ց է կիրառվում կլիմայի փոփոխության ազդեցության գործոնը:

6. Ի՞նչ փուլում է շրջակա միջավայրի երկարաժամկետ ռազմավարության մշակման գործընթացը:

7. «Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիրը և 2021-2025 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ

կառավարության 2021թ. մայիսի 13-ի N 749-Լ որոշման 9-րդ գլխի միջոցառումներից կատարվե՞լ են արդյոք հետևյալ միջոցառումները.

- Կլիմայի փոփոխության ուղղությամբ պետական և մասնավոր հատվածի կատարած ծախսերի բացահայտման նպատակով բյուջեի կլիմայական նշագրման համակարգի մշակում

- ՀԱԾ գործընթացի համար ռեսուրսների մոբիլիզացման մոտեցումների և իրականացման ծրագրի մշակում

- Կլիմայական կանխատեսումների և վաղ ազդարարման համակարգի բարելավմանն ուղղված գործողությունների ծրագրի մշակում:

Եթե մշակվել են, խնդրում ենք տրամադրել համապատասխան հղումները:

8. 2024թ.Շրջակա միջավայրի նախարարության բյուջեի ծախսային մասում կատարվել է կլիմայական նշագրում, և եթե այո, ապա որքա՞ն է այն կազմում:

Հարգանքով՝

Վիկտորյա Բուռնազյան
ԲՋՋ.
Էլ. հասցե՝ vicaburnazyan@gmail.com
Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն,
06.02.2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
REPUBLIC OF ARMENIA
SECRETARY GENERAL OF MINISTRY OF ENVIRONMENT
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ГЕНЕРАЛЬНЫЙ СЕКРЕТАРЬ МИНИСТЕРСТВА ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ

№ 5/07.3/1741
«_____» «_____» 2025թ.

«Աջակցություն Հայաստանին ՀԸԳՀ-ի իրականացման,
մշտադիտարկման և տեղեկացվածության բարձրացման» ծրագրի
փորձագետ Վիկտորյա Բուռնազյանին

Հարգելի տիկին Բուռնազյան

Ի պատասխան Ձեր 2025 թվականի փետրվարի 06-ի գրության՝ ներկայացնում եմ գրությամբ բարձրացված հարցերի պատասխանները:

Առդիր՝ 6 թերթ և 1 խտանիշ:

X _____

Հարգանքով՝

Սերգո Աթանեսյան

Հասարակայնության հետ կապերի բաժին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

0010, ք.Երևան, Հանրապետության հր., Կառավարական տուն 3
3 Government Bld., Republic Sq., Yerevan, Armenia, 0010
0010, Армения, г.Ереван, Гп. Республики, Дом Правительства 3
100106608le-citizen.am | minenv@env.am | www.env.am
+374 11 818 520 | +374 11 818 506

Էդգար Մեսրոնյան 011 818 555 / 5170 /

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

1-ին հարցի վերաբերյալ.

2023 թվականի դեկտեմբերի 28-ին Կառավարության կողմից հաստատվել է «Հայաստանի Հանրապետության ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ (մինչև 2050 թվական) ռազմավարությունը հաստատելու մասին» N 2318-Լ որոշումը, ինչի մեջ ներառվել է ածխածնի գնագոյացման գործիքների (արտանետումների աղևտրի համակարգ, ածխածնի հարկ, հաշվանցման մեխանիզմներ և արդյունքների վրա հիմնված ածխածնային ֆինանսավորում) ընտրողաբար ներդրման հարցը, ինչպես նաև մշակվել է «Կլիմայի մասին» ՀՀ օրենքը, վերջինիս ընդունմամբ իրավական (ինստիտուցիոնալ) հիմքեր կստեղծվեն ածխածնի աղևտրի համակարգի ներդրման համար,

2-րդ հարցի վերաբերյալ.

շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ենթակայությամբ գործող բնության հատուկ պահպանվող տարածքներում առկա տեղեկատվություն

«Խոսրովի անտառ» պետական արգելոց

Համաձայն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքի հոդված 16-ի և ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի N 925-Ն որոշմամբ հաստատված «Խոսրովի անտառ» պետական արգելոցի կանոնադրության՝ արգելոցի տարածքում չի թույլատրվում իրականացնել անտառտնկման և անտառվերականգնման աշխատանքներ:

«Սևան» ազգային պարկ

2021-2024 թվականների ընթացքում ազգային պարկի տարածքում իրականացվել են անտառվերականգնման աշխատանքներ հա մակերեսի վրա, կպչողականությունը կազմել է շուրջ 50 %:

«Դիլիջան» ազգային պարկ

2021-2024 թվականների ընթացքում ազգային պարկի տարածքում իրականացվել է կաղնու և հաճարենու սերմերի ցանքս՝ 20 հա տարածքում, տնկվել է 3110 տնկի (սոճի, հաճարենի, կաղնի, հացի տեսակների): Տնկիների կպչողականությունը կազմել է 40-45%:

«Արփի լիճ» ազգային պարկ

2021 թվականի ընթացքում ազգայի պարկի տարածքում իրականացվել են անտառվերականգնման աշխատանքներ 2,5 հա տարածքի վրա, տնկվել է 3000 հատ ծառ,

2022 թվականին 1,0 հա տարածքի վրա տնկվել է 1000 հատ ծառ,

2023 թվականին 1,0 հա տարածքի վրա տնկվել է 870 հատ ծառ,

2024 թվականին 1,5 հա տարածքի վրա տնկվել է 1712 հատ ծառ:

Տնկիների կպչողականությունը կազմել է մոտ 60%:

«Զանգեզուր» կենսոլորտային համալիր»

2021 թվականի ընթացքում կենսոլորտային համալիրի տարածքում իրականացվել են անտառվերականգնման աշխատանքներ 0,085 հա տարածքի վրա, տնկվել է 500 հատ տնկի, որոնց կպչողականությունը կազմել է 38%,

2022 թվականի ընթացքում 1 հա-ի վրա տնկվել է 2000 հատ տնկի, որոնց կպչողականությունը կազմել է 41%,

2023 թվականի ընթացքում 1,2 հա-ի վրա տնկվել է 2000 հատ տնկի, որոնց կպչողականությունը կազմել է 35%,

2024 թվականի ընթացքում 0,07 հա-ի վրա տնկվել է 200 հատ տնկի, որոնց կպչողականությունը կազմել է 40%:

«Արգելոցապարկային համալիր»

2021-2023 թվականներին կազմակերպության ենթակայությամբ գործող «Ջրվեժ» անտառապարկում և դենդրոպարկերում իրականացվել են անտառվերականգնման աշխատանքներ 17,01 հա մակերեսով տարածքի վրա: Տնկիների կպչողականությունը կազմել է 70%:

2021-2024 թթ. ընթացքում Նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերում իրականացված **անտառապատման աշխատանքների** վերաբերյալ.

<< մարզեր	2021 թ.		2022 թ.		2023 թ.		2024 թ.	
	Անտառամշակության հեկտարներ (հա)	Տնկանյութ (հատ)	Անտառամշակության հեկտարներ (հա)	Տնկանյութ (հատ)	Անտառամշակության հեկտարներ (հա)	Տնկանյութի քանակ (հատ)	Անտառամշակության հեկտարներ (հա)	Տնկանյութ (հատ)
Լոռի	40	135.000	82.3	245,900	229	687,000	117.5	300,000
Տավուշ	35.8	107,400	26.5	77,500	20	60,000	22	66,000
Սյունիք	10	30,000	30	78,000	46,4	139,140	19.5	44,850
Արագածոտն	6.3	18,900	8	24,000	16.8	50,400	8	24,000
Շիրակ	6.3	18,900	2.5	75,000	12	36,000	10	30,000
Վայոց ձոր			3	9,000	7	21,000	7	21,000
Կոտայք	9.9	29,700	5	15,000	5	15,000	5	15,000
Գեղարքունիք	10	30,000	10	30,000	8	24,000	5	15,000

Տարեկան միջին կպչողականությունը կազմում է 60-65%

<< մարզեր	2021 թ.	2022 թ.	2023 թ.	2024 թ.	2024 թ.	
	Կոնդոլիվանի վիրահատական միջամտումներ (հա)	Կոնդոլիվանի և վիրահատական միջամտումներ բ (հա)	Կոնդոլիվանի վիրահատական միջամտումներ գ (հա)	Կոնդոլիվանի և վիրահատական միջամտումներ դ (հա)	Ընդհանուր սանիտարական պրոցեսներ կոր. լուսնան միջոցով (հա)	Ցիկլոտրոն լուսնան (հա)
Լոռի	20	37	25	22	44.6	26,760
Տավուշ	50		52	26		
Սյունիք		10	5	12		
Արագածոտն						
Շիրակ						
Վայոց ձոր						
Կոտայք	10	20	14	20		
Գեղարքունիք	13	10				

Անտառվերականգնման աշխատանքների վերաբերյալ.

3-րդ հարցի վերաբերյալ.

Նախարարության ենթակայությամբ գործող բնության հատուկ պահպանվող տարածքներում առկա տեղեկատվություն

«Խոսրովի անտառ» պետական արգելոց

2021 թվականին արձանագրվել է հրդեհի 2 դեպք, այրվել է 1,9 հա խոտածածկ տարածք: Հրդեհների բռնկման պատճառը եղել է կայծակը,

2022 թվականին արձանագրվել է հրդեհի 1 դեպք, այրվել 1 հա խոտածածկ տարածք: Հրդեհի բռնկման պատճառը եղել է կայծակը,

2023 թվականին հրդեհի դեպքեր չեն արձանագրվել:

«Լեկն» ազգային պարկ

2021-2023 թվականների ընթացքում ազգային պարկի տարածքի հրդեհների արդյունքում այրվել է շուրջ 30.381 հա չոր խոտածածկ կամ եղեգնապատ տարածք, հրդեհների արդյունքում ծառեր չեն այրվել:

«Դիլիջան» ազգային պարկ

2021-2024 թվականների ընթացքում ազգային պարկի տարածքում հրդեհված տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 218,07 հա, որի 85%-ը՝ խոտածածկ:

«Արփի լիճ» ազգային պարկ

2021-2024 թվականների ընթացքում ազգային պարկի տարածքում հրդեհներ չեն արձանագրվել:

«Զանգեզուր» կենսոլորտային համալիր»

2021 թվականի ընթացքում կենսոլորտային համալիրի տարածքում արձանագրվել է 2 հրդեհի դեպք, այրվել է 718.12 հա տարածք,

2022 թվականի ընթացքում արձանագրվել է 2 հրդեհի դեպք, այրվել է 0,045 հա տարածք,

2023-2024 թվականների ընթացքում հրդեհներ չեն արձանագրվել:

«Արգելոցապարկային համալիր»

2021-2023 թվականների ընթացքում «Ջրվեժ» անտառապարկի տարածքում հրդեհվել է 12,72 հա տարածք,

2024 թվականին հրդեհի դեպք չի արձանագրվել:

2021-2023 թթ. Նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերում տեղի ունեցած հրդեհների վերաբերյալ.

2021 թվականին ընդհանուր՝ 225,607 հա, որից 150,205 հա անտառածածկ, 75,402 հա՝ ոչ անտառածածկ,

2022 թվականին ընդհանուր՝ 251,7424 հա, որից 199,2364 հա անտառածածկ, 52,506 հա՝ ոչ անտառածածկ,

2023 թվականին ընդհանուր՝ 179,852 հա, որից 147,552 հա անտառածածկ, իսկ 32,3 հա՝ ոչ անտառածածկ:

2024 թվականին անտառային հրդեհներն ընդգրկել են 49,6732 հա ընդհանուր տարածք, որից 17,8062 հա՝ անտառածածկ, իսկ 31,867 հա՝ ոչ անտառածածկ տարածք:

4-րդ հարցի վերաբերյալ.

«Խոսրովի անտառ» պետական արգելոց

2021-2023 թվականներին ապօրինի ծառահատման դեպքեր չեն արձանագրվել:

«Սևան» ազգային պարկ

2021-2023 թվականների ընթացքում ազգային պարկի անտառածածկ տարածքներից ապօրինի հատվել է շուրջ 1309 ծառ, հատված ծառերը հիմնականում եղել են ցցաչոր և ցամաքած, վերոնշյալ ապօրինի հատված ծառերի բացահայտման դեպքերը կազմել են գրեթե 40%:

Դիլիջան» ազգային պարկ

2021-2024 թվականների ընթացքում ազգային պարկի տարածքում ապօրինի հատվել է 2672 հատ ծառ:

«Արփի լիճ» ազգային պարկ

2021 թվականի ընթացքում ազգային պարկի տարածքում ապօրինի հատվել է 16 հատ ծառ:

2022-2024 թվականների ընթացքում ապօրինի ծառահատումներ չկան:

«Զանգեզուր» կենսոլորտային համալիր»

2021 թվականի ընթացքում կենսոլորտային համալիրի տարածքում արձանագրվել է ապօրինի ծառահատման 1 դեպք, հատվել է 24 հատ ծառ,

2022 թվականի ընթացքում կենսոլորտային համալիրի տարածքում ապօրինի ծառահատման դեպքեր չեն արձանագրվել,

2023 թվականի ընթացքում կենսոլորտային համալիրի տարածքում արձանագրվել է ապօրինի ծառահատման 1 դեպք, հատվել է 27 հատ ծառ,

2024 թվականի ընթացքում կենսոլորտային համալիրի տարածքում արձանագրվել է ապօրինի ծառահատման 3 դեպք, հատվել է 32 հատ ծառ:

«Արգելոցապարկային համալիր»

2021-2022 թվականների ընթացքում ապօրինի հատվել է 29 հատ ծառ,

2023 թվականին ապօրինի ծառահատման դեպքեր չեն արձանագրվել:

2021-2023 թթ. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի կողմից արձանագրված ապօրինի հատումների վերաբերյալ.

2021 թվականին՝ 11962 ծառ,

2022 թվականին՝ 6292 ծառ,

2023 թվականին՝ 13644 ծառ:

2024 թվականին ՀՀ անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում շրջակա միջավայրի նախարարության էկոպետական ծառայության ՀՀ մարզային վարչությունների տեղամասերի աշխատակիցների կողմից արձանագրվել է 9062 հատ ապօրինի ծառահատման դեպք:

5-րդ հարցի վերաբերյալ.

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացներում կիրառվում է կլիմայի փոփոխության ազդեցության գործոնը 2023 թվականի մայիսի 3-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության, գնահատման և փորձաքննության մասին» փոփոխություն կատարելու մասին» օրենքում ներառվելուց հետո,

Համաձայն Ջրային օրենսգրքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի՝ ջրօգտագործման թույլտվության հայտի գնահատման չափանիշներից է կլիմայի ներկա և կանխատեսվող փոփոխությունների հետևանքով նախատեսվող ջրօգտագործման ազդեցությունը ջրային ռեսուրսների խոցելիության մեծացման վրա:

Համաձայն Ջրային օրենսգրքի 33.1.-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ ջրօգտագործման թույլտվությունները վերանայվում են նաև կլիմայի փոփոխությամբ կամ անտրոպոգեն ազդեցությամբ պայմանավորված՝ ջրային պաշարի նվազման դեպքում:

Ջրային օրենսգրքի 31-րդ և 33.1.-րդ հոդվածների վերը նշված դրույթները ներառվել է Ջրային օրենսգրքում 2022 թվականի հուլիսի 7-ի ՀՕ-316-Ն օրենքով կատարված փոփոխություններով և լրացումներով:

Կլիմայի փոփոխության ազդեցության գործոնը հաշվի է առնվում նաև ջրավազանային կառավարման պլանների մշակման և հաստատման գործընթացի մեկնարկից ի վեր՝ սկսած 2016 թվականից: Ջրավազանային կառավարման պլաններում հաշվարկվում է տվյալ ջրավազանային կառավարման տարածքի ջրատեսությունը, ջրապահանջարկը և կանխատեսվող փոփոխությունները կառավարման վեց տարիների համար՝ հաշվի առնելով կլիմայի փոփոխության կանխատեսման սցենարները,

6-րդ հարցի վերաբերյալ.

Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում կառավարության առնչությամբ ներկայումս ընթանում են մշակման աշխատանքներ, իրականացվում են հավաքագրված նյութերի վերլուծություն և ըստեղի վերհանում: Հաշվի առնելով, որ ներկայումս վարչապետի աշխատակազմի կողմից շրջանառվում է «Կառավարության ոլորտային կառավարման աշխատակարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը, որով սահմանվում է Կառավարության և պետական կառավարման համակարգի մարմինների ոլորտային կառավարման համակարգի նոր ճարտարապետությունը և վերջինիս սպասարկող ընթացակարգերը, Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ, ըստ որի Հավելված 1-ի «Շրջակա միջավայրի նախարարություն» մասի 17.1 կետով սահմանված «Շրջակա միջավայրի պահպանության ոլորտային կառավարությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման ընդունում» միջոցառման կատարման ժամկետը սահմանվել է 2026 թվականի մարտի 3-րդ տասնօրյակը,

7-րդ հարցի վերաբերյալ.

«Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիրը և 2021-2025 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» Կառավարության 2021թ. մայիսի 13-ի N 749-Լ, որոշման 9-րդ գլխի՝ նշված միջոցառումներն իրականացվել են (https://nature-ic.am/hy/projects/armenia's-national-adaptation-plan),

3-րդ ենթակետի վերաբերյալ.

• 2023 թվականի դեկտեմբերի 28-ին կայացած հանրային ներդրումային կոմիտեի 5-րդ նիստի ընթացքում հաստատված «Վտանգավոր հիդրոօդերևութաբանական երևույթների կանխատեսման և վաղօրոք նախազգուշացման համակարգի հիմնում» ծրագիրը ներառվել է 2025-2027թթ. ՄԺԾԾ հայտում, որի իրականացման նպատակով Կառավարության 2024 թվականի № 1064-Ն որոշմամբ հատկացումներ են նախատեսվել 1299176,0 հազար դրամի չափով 2026 թվականի, 1399847,4 հազար դրամի չափով 2027 թվականի բյուջետային տարիների համար,

• «Հայիդրոմետ» ՊՈԱԿ-ի մասնակցությամբ կլիմայի փոփոխության կանխատեսման վերջին գնահատականները Հայաստանի համար արվել են Կլիմայի փոփոխության չորրորդ ազգային հաղորդագրության շրջանակներում, որը հրապարակվել է 2020 թվականին, իսկ Կլիմայի փոփոխության հինգերորդ ազգային հաղորդագրությունը մշակման փուլում է,

8-րդ հարցի վերաբերյալ.

շրջակա միջավայրի նախարարության բյուջեի ծախսային մասում կատարվել է կլիմայական նշագրում 2025 թվականի համար՝ կլիմայական ծախսերի կշիռը գերատեսչության բյուջետային ծախսերում կազմել է 12.9 մլրդ դրամ, ինչը ընդհանուրի մեջ կազմում է՝ 88.9%:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«30» սեպտեմբերի 2022 թվական N 1176-Լ

ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՎԱՂ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի թիվ 749-Լ որոշման հավելվածի 9-րդ գլխի 2.3-րդ կետով և ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի ապրիլի 28-ի N 125-Լ հրամանի 1-ին հավելվածի 29-րդ կետի 8-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել կլիմայական կանխատեսումների և վաղ ազդարարման համակարգի բարելավմանն ուղղված միջոցառումների ծրագիրը և իրականացման ժամկետները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահում եմ ինձ:

Տնօրենի ժամանակավոր
պաշտոնակատար Լ.Ազիզյան

«30» սեպտեմբերի 2022 թվական
ք.Երևան

Հավելված
«Հիդրոօդերևութաբանության և
մոնիթորինգի կենտրոն» պետական
ոչ առևտրային կազմակերպության տնօրենի Ժ/պ-ի՝
2022 թվականի «Դեկտեմբերի» 30 -ի N 1176 Հրամանի

ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՎԱՂ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

հհ	Միջոցառում	Ակնկալվող արդյունքը	Կատարող	Կատարման ժամկետ	Ֆինասավորման աղբյուր
1.	Օդերևութաբանական դիտարկումների ցանցի բարելավում	Տավուշի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում 11 օդերևութաբանական ավանդական դիտակայանների փոխարինում արդիական ավտոմատ օդերևութաբանական դիտակայաններով	ՀՄԿ ՊՈԱԿ	2023թ. 1-ին եռամսյակ	Օրենսդրությամբ չարգելված միջոցներ (միջազգային դոնոր կազմակերպություններ)
2.	Եղանակային, կլիմայական, հիդրոլոգիական և կապակցված բնապահպանական այլ ծառայությունների բարելավում	Եղանակային, կլիմայական, հիդրոլոգիական և կապակցված բնապահպանական ծառայություններում բացերի, կարիքների և առաջնահերթությունների բացահայտում; Շահառուների համար տեղեկատվության հասանելիության բարելավման	ՀՄԿ ՊՈԱԿ	2023թ. 1-ին եռամսյակ	Օրենսդրությամբ չարգելված միջոցներ (միջազգային դոնոր կազմակերպություններ)

		մեխանիզմների, ինչպես նաև դրանց իրականացման համար համապատասխան գործողությունների ծրագրի մշակում			
3.	Հիդրոօդերևութաբանական արբանյակային մոնիտորինգի և գիտահետազոտական կարողությունների հզորացում	«Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի արբանյակային մոնիտորնգի կարողությունների շարունակականության ապահովում	ՀՄԿ ՊՈԱԿ	2023թ. 2-րդ եռամսյակ	Օրենսդրությամբ չարգելված միջոցներ (միջազգային դոնոր կազմակերպություններ)
4.	«Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի միասնական տեղեկատվական համակարգի ստեղծում	Հիդրոօդերևութաբանության պատմական տվյալների ամբողջական թվային բազայի ստեղծում; տվյալների և տեղեկատվական բազայի միասնական թվային համակարգի ստեղծում; հիդրոօդերևութաբանական կանխատեսումների համակարգի հզորացում, վաղ ազդարարման արդիական համակարգի ստեղծում	ՀՄԿ ՊՈԱԿ	2023թ. 2-րդ եռամսյակ	Օրենսդրությամբ չարգելված միջոցներ (միջազգային դոնոր կազմակերպություններ)

5.	«Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի նոր վեբ-կայքի ստեղծում	Եղանակային և կլիմայական արդի տեղեկատվության և կանխատեսումների մասին արագ հասանելիություն ապահովում բնակչության լայն շերտերի և շահագրգիռ կողմերի համար; հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևութների մասին վաղ ազդարարման գործիքակազմի բարելավում	ՀՄԿ ՊՈԱԿ	2023թ. 3-րդ եռամսյակ	Օրենսդրությամբ չարգելված միջոցներ (միջազգային դոնոր կազմակերպություններ)
6.	«Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի հեռախոսային հավելվածի ստեղծում		ՀՄԿ ՊՈԱԿ	2023թ. 3-րդ եռամսյակ	Օրենսդրությամբ չարգելված միջոցներ (միջազգային դոնոր կազմակերպություններ)
7.	«Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի աշխատակիցներին՝ կլիմայական կանխատեսումների արդի միջազգային մոդելների կիրառման վերաբերյալ վերապատրաստումն դասընթացների իրականացում	Կլիմայի փոփոխության նկատմամբ տնտեսության խոցելի ճյուղերի համար կլիմայական կանխատեսումների արդյունքների կիրառում և տնտեսության զարգացման պլանավորման բարելավում	ՀՄԿ ՊՈԱԿ	2023-2025թթ. (պարբերական՝ 2 տարին մեկ անգամ)	Օրենսդրությամբ չարգելված միջոցներ (միջազգային դոնոր կազմակերպություններ)

Հավելված 3

ՀՀ էկոնոմիկայի նախարար
պարոն Գևորգ Պապոյանին
GOPA-PACE կազմակերպության կողմից իրականացվող
«Աջակցություն Հայաստանին ՀԸԳՀ-ի իրականացման,
մշտադիտարկման և տեղեկացվածության բարձրացման»
ծրագրի փորձագետ Վիկտորյա Բուռնազյանից

ՀԱՐՑՈՒՄ

Հարգելի պարոն նախարար,

GOPA-PACE կազմակերպության կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանին ՀԸԳՀ-ի իրականացման, մշտադիտարկման և տեղեկացվածության բարձրացման» ծրագրի շրջանակներում պետք է պատրաստվի զեկույց «Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» կատարողականի վերաբերյալ: Ես ներկայացնելու եմ կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ու մեղմմանը վերաբերող միջոցառումների մշտադիտարկման արդյունքները: Այդ նպատակով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին

1. 2021-2024թթ. ընթացքում ոռոգման համակարգերի արդիականացման քանի՞ ծրագիր է իրականացվել և ի՞նչ արդյունքներ են գրանցվել
2. 2021-2024թթ. ՀՀ ո՞ր համայնքներում են տեղադրվել ջրախնայող տեխնոլոգիաներ:
3. 2021-2024թթ. ՀՀ-ում քանի հեկտարով են ավելացել հակակարկտային համակարգերի ազդեցության տիրույթները և ներկայում որքա՞ն են կազմում այդ գյուղատնտեսական տարածքների մակերեսները:
4. Գնահատվե՞լ է արդյոք հակակարկտային կայանների օգտակար գործողության գործակիցը և որքա՞ն է այն կազմում:
5. Հակակարկտային ի՞նչ այլընտրանքային միջոցառումներ են ներդրվում գյուղատնտեսության մեջ:
6. ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N 1886-Լ, որոշման Հավելված N 3-ով նախատեսված հետևյալ միջոցառումների կատարման ընթացքի մասին.

- Ոռոգման առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման խթանում և տարածում
- Ինտենսիվ այգեգործության զարգացման ծրագրի իրականացում/ Կարկտապաշտպան ցանցերով այգիների տարածքների ավելացում/
- Գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային և արդյունավետ օգտագործման մեխանիզմների ներդրում/գյուղատնտեսական նշանակության հողերի չօգտագործման և մասնատվածության մակարդակի նվազեցում, մասնավորապես՝ 2023թ.՝ 200 հա,2024թ.՝ 500 հա

2024թ.՝ 500 հա/

- Գյուղատնտեսության ապահովագրության փորձնական ծրագրի իրականացում, մոնիթորինգ և գնահատում /Ապահովագրվող մշակաբույսերի տարածքները կկազմեն 2023թ.՝ 10000 հա, 2024թ.՝ 12000 հա, 2025թ.՝ 15000 հա /
- Փոփոխվող բնակլիմայական պայմաններում ըստ գյուղատնտեսական գոտիների մշակաբույսերի արդյունավետ մշակության հնարավորությունների գնահատում/ Ըստ գյուղատնտեսական գոտիների մշակաբույսերի արդյունավետ մշակության հնարավորությունների գնահատում՝ ելնելով փոփոխվող բնակլիմայական պայմաններից, Առաջարկվող մշակաբույսերի արդյունավետ մշակության վերաբերյալ մշակված ուղեցույցներ/
- Տոհմային անասնաբուծության, թռչնաբուծության և ձկնաբուծության զարգացում՝ տոհմային կենդանիների ձեռք բերման աջակցության ծրագրի իրականացում, տոհմային կենդանիների կադաստրի վարում: Գյուղատնտեսական կենդանիների պահվածքի արդյունավետ տեխնոլոգիաների կիրառմանն աջակցություն
- Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցմանը կամ վերակառուցմանը և դրանց տեխնոլոգիական ապահովմանն աջակցություն/ Պետական աջակցությամբ 2023թ.՝ 21, 2024թ.՝ 10, 2025թ.՝ 10, ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած անասնաշենքերի կառուցման խթանում/
- Առավել վտանգավոր հիվանդությունների և վնասատուների բռնկումների վերաբերյալ արագ արձագանքման համակարգի ներդրում/ Կլիմայի փոփոխությամբ պայմանավորված ռիսկերի կանխարգելման և կառավարման համակարգի մշակում և ներդնում/
- Կլիմայի փոփոխության պայմաններում հիվանդությունների և վնասատուների ներթափանցման և տարածման դեմ կանխարգելիչ միջոցառումներ/ ՀՀ սահմանային կետերում իրականացվող վերահսկողության որակի բարելավում /:

Հարգանքով՝

Վիկտորյա Բուռնազյան

Բջջ.
էլ. հասցե՝ vicaburnazyan@gmail.com
Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան,

10.02.2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07, Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№ 09.9.9/3102-2025

«19» 02 2025թ

GOPA-PACE ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՀԸԳՀ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ,
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ»
ԾՐԱԳՐԻ ՓՈՐՁԱԳԵՏ ՎԻԿՏՈՐՅԱ ԲՈՒՌՆԱԶՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Բուռնազյան,

Ի պատասխան Ձեր՝ սույն թվականի փետրվարի 10-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարին (Այսուհետ՝ Նախարար) ուղղված գրության, տեղեկացնում եմ.

Հարց 1. 2021-2024 թթ-ի ընթացքում Ինտենսիվ այգեգործության զարգացման ծրագրի շրջանակում կնքվել այգեհիմնման (ոռոգման պարտադիր բաղադրիչով) և ոռոգման առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման շուրջ 9400 հա-ի հայտ: Փաստացի այս 2 բաղադրիչներով ներդրվել է ոռոգման համակարգեր՝ 4375 հա տարածքում:

Հարց 2. Ջրախնայող տեխնոլոգիաներ տեղադրվել են ՀՀ ողջ տարածքում:

Հարց 3. Ինտենսիվ այգեգործության ծրագրի շրջանակում փաստացի հիմնված այգիներից 729,9 հա-ում ներդրվել է կարկտապաշտպան ցանց:

Հարց 5. Հաշվի առնելով կլիմայական ռիսկերը՝ 2024 թվականին ՀՀ կառավարությունը հաստատեց նոր ծրագիր, ըստ որի կարկտի առավել ակտիվ գոտիներում գտնվող բնակավայրերում կարկտապաշտպան ցանցեր ներդնելու դեպքում կփոխհատուցվի ծախսի 75 տոկոսի չափով:

Հարց 6.

6.1 Պատասխանվել է հարց 1-ի շրջանակում:

6.2. Ինտենսիվ այգեգործության զարգացման ծրագրի շրջանակում հաստատվել է շուրջ 7700 հա-ի այգեհիմնման հայտ, 2024 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ փաստացի հիմնվել է 3270 հա ինտենսիվ այգի:

6. 3 «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության 2023-2025 թվականների» ծրագրի շրջանակում ծրագրի մեկնարկից մինչև 2024 թ-ի դեկտեմբերի 30-ը կնքվել է 13 պայմանագիր շուրջ 530 հա հողերի կոնսոլիդացիայի համար: Սակայն դեռևս փաստացի կոնսոլիդացված հողատարածք չկա:

6. 4 2023 թվականի գյուղատնտեսական տարվա համար ապահովագրվել են ծիրան, խաղող, դեղձ, խնձոր, հացահատիկ (աշնանացան/գարնանացան ցորեն, գարի և վարսակ), սալոր, կարտոֆիլ, ձմերուկ և սեխ, բալ և կեռաս մշակաբույսերը՝ գարնանային ցրտահարում, կարկուտ, հրդեհ և երաշտ ռիսկերից:

Արդյունքում կնքվել է 10192 ապահովագրության պայմանագիր՝ 11662 հա ընդհանուր մակերեսով տարածք ապահովագրելու համար:

2024 թվականին 2023 թվականին գրանցված բարձր վնասաբերությամբ պայմանավորված վերաապահովագրական ընկերությունը դուրս եկավ հայկական շուկայից և ապահովագրական ընկերությունների ռիսկերը մեղմելու նպատակով՝ այդ գործառույթը ստանձնեց ՀՀ կառավարությունը:

Իրավիճակով պայմանավորված 2024 թվականին ապահովագրվել են դեղձ, սալոր, խնձոր, կեռաս, բալ, ձմերուկ, սեխ, կարտոֆիլ՝ կարկուտ ռիսկից, իսկ հացահատիկային մշակաբույսերը (ցորեն/գարի/վարսակ)՝ երաշտ ռիսկից: 2024 թվականի գյուղատնտեսական տարվա համար կնքվել է 27 ապահովագրական պայմանագիր՝ 247 հա ընդհանուր մակերեսով տարածք ապահովագրելու համար:

2025 թվականի գյուղատնտեսական տարում ծրագրի իրականացումն ապահովելու նպատակով ներկայումս քննարկումներ են իրականացվում բոլոր շահագրգիռ կողմերի հետ, ծրագրի լրամշակման և 2025 թվականի գյուղատնտեսական տարում ապահովագրություն իրականացնելու համար:

6. 5 ՀՀ ԷՆ «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՓԲԸ-ում փոփոխվող բնակլիմայական պայմաններին հարմարեցված նոր սորտերի ստեղծման ուղղությամբ ընթանում են սելեկցիոն աշխատանքներ:

Բանջարաբոստանային մշակաբույսերի ներմուծված 20 և ավել սորտերի փորձարկման աշխատանքները կշարունակվեն նաև 2025 թվականին: Բանջարաբոստանային մշակաբույսերի տեղական արտադրության, փոփոխվող կլիմայական պայմաններին հարմարված (չորադիմացկուն, տոթադիմացկուն) թվով 16 սորտեր ներկայացվել են ՀՀ տարբեր բնակլիմայական գոտիներում շրջանացման:

2024 թվականին մեկնարկել է Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Կլիմայական փոփոխություններին հարմարեցվող պարենային անվտանգության բարձրացման ծրագիրը»: Այն նպատակ ունի բարելավել խիստ խոցելի համայնքների պարենային անվտանգությունը, աջակցել վերջիններիս՝ ապրուստի միջոցներ, եկամուտ ստեղծող գործունեությանը և կլիմային հարմարվողական կարողությունների զարգացմանը: Ծրագիրը կմշակի վերականգնվող էներգիայի լուծումներ ՀՀ Շիրակի և Տավուշի մարզերի առնվազն 10 խոցելի համայնքների համար: Ծրագիրը կավարտվի 2026թ-ին, բյուջեն կազմում է շուրջ 3 մլն ԱՄՆ դոլար: Պարենի համաշխարհային ծրագրի կողմից ՀՀ բոլոր մարզերում կատարված ուսումնասիրությունների հիման վրա ներկայացվել է «Կլիմայի փոփոխությունների ազդեցությունը Հայաստանում» վերլուծությունը, որում ներառված են նաև կլիմայի փոփոխությունների մեղմման և հարմարվողականության վերաբերյալ առաջարկություններ:

6. 6 6-րդ պարբերության վերաբերյալ տեղեկացվում է, որ մշակման փուլում են գտնվում ««Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման աջակցության 2025-2028 թվականների» և «Հայաստանի Հանրապետությունում 2025-2029 թվականների տավարաբուծության զարգացման» ՀՀ կառավարության որոշման նախագծերը և շրջանառության փուլում է գտնվում «Տոհմային կարգավիճակ շնորհելու նպատակով տնտեսություններին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

6. 7 Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագրի շրջանակում ծրագրի մեկնարկից շահագործման է հանձնվել 58 անասնաշենք: Բացի այդ, իրականացվում է ՀՀ անասնաբուծության ճյուղում իրականացվող ներդրումային ծրագրերին աջակցության տրամադրման փորձնական ծրագիրը, որի շրջանակում նախատեսվում է հիմնել 7 խոշոր անասնապահական համալիր՝ շուրջ 43 մլրդ դրամի: Ծրագրի մեկնարկից կնքվել է 11 պայմանագիր՝ շուրջ 82.42 մլրդ. դրամ ծավալի ներդրում

կատարելու դիմաց: Ներդրումային ծրագիրն արդեն ավարտվել է, հիմնվել է 1 անասնապահական համալիր, տրվել է 2,3 մլրդ դրամի 1 փոխհատուցում՝ 12,4 մլրդ դրամի ծավալով փաստացի ներդրման դիմաց:

6. 8 Առավել վտանգավոր հիվանդությունների և վնասատուների բռնկումների վերաբերյալ արագ արձագանքման համակարգի ներդրում» կետով սահմանված միջոցառման կատարումն ապահովելու նպատակով մշակվել և շրջանառվել է «Բուսասանիտարիայի մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ «Առավել վտանգավոր հիվանդությունների և վնասատուների բռնկումների վերաբերյալ արագ արձագանքման համակարգի ներդրման նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու և դրա աշխատակարգը հաստատելու մասին» իրավական ակտի մշակման համար համապատասխան իրավական հիմք ունենալու նպատակով: «Բուսասանիտարիայի մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն ուժի մեջ մտնելուց հետո, նախատեսվում է շրջանառել արդեն իսկ մշակված «Առավել վտանգավոր հիվանդությունների և վնասատուների բռնկումների վերաբերյալ արագ արձագանքման համակարգի ներդրման նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու և դրա աշխատակարգը հաստատելու մասին» Նախարարի հրամանի նախագիծը:

6. 9 «Կլիմայի փոփոխության պայմաններում հիվանդությունների և վնասատուների ներթափանցման և տարածման դեմ կանխարգելիչ միջոցառումներ»-ի ամբողջական կատարման հարցի քննարկման նպատակով, 2024թ. հունվարի 17-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում (Այսուհետ՝ Նախարարություն) կայացել է քննարկում՝ շահագրգիռ մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետական սահմանի անցման կետերում պետական վերահսկողության գործառույթները վերապահված են մաքսային մարմիններին, քննարկման արդյունքում՝ Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի կողմից առաջարկվել է սույն միջոցառման համար որպես պատասխանատու մարմին դիտարկել Պետական եկամուտների կոմիտեին: Քննարկման արդյունքները Նախարարության 2024թ. հունվարի 19-ի թիվ 01/1034-2024 գրությամբ ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:

Հարկ է նշել, որ հակակարկտային կայանների և դրանց ազդեցության տիրույթների հարցերը դուրս են Նախարարության գործառույթների շրջանակից:

Հարգանքով՝

գյուղատնտեսական ծրագրերի
իրականացման վարչության պետի
պարտականությունները կատարող ԼՈՒՍԻՆԵ ԱՆԱՆՅԱՆ

Կատարող՝ Պետական աջակցության ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ, Այվարդ Վարդանյան
011530333

Հավելված 4

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
նախարար պարոն Դավիթ Խուդաթյանին
GOPA-PACE կազմակերպության կողմից իրականացվող
«Աջակցություն Հայաստանին ՀԸԳՀ-ի իրականացման,
մշտադիտարկման և տեղեկացվածության բարձրացման»
ծրագրի փորձագետ Վիկտորյա Բուռնազյանից

ՀԱՐՑՈՒՄ

Հարգելի պարոն նախարար,

GOPA-PACE կազմակերպության կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանին ՀԸԳՀ-ի իրականացման, մշտադիտարկման և տեղեկացվածության բարձրացման» ծրագրի շրջանակներում պետք է պատրաստվի զեկույց «Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» կատարողականի վերաբերյալ: Ես ներկայացնելու եմ կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ու մեղմմանը վերաբերող միջոցառումների մշտադիտարկման արդյունքները: Այդ նպատակով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

1. 2021-2024թթ. ընթացքում ոռոգման համակարգերի արդիականացման քանի՞ ծրագիր է իրականացվել և ի՞նչ արդյունքներ են գրանցվել գործնականում
2. 2021-2024թթ. ՀՀ ո՞ր համայնքներում են տեղադրվել ջրախնայող տեխնոլոգիաներ:
3. 2021-2024թթ. էներգախնայողության ոլորտում ի՞նչ ծրագրեր են իրականացվել:
4. 2021-2024թթ. ՀՀ-ում սանիտարական նորմերին համապատասխան քանի՞ աղբավայր է հիմնվել, թափոնների վերամշակման քանի՞ ձեռնարկություն է գործում, վտանգավոր թափոնների չեզոքացման, կիզման քանի՞

ձեռնարկություն է գործում և որքան է նրանց ընդհանուր արտադրական ծավալը։

5. Ո՞ր փուլում են գտնվում «Այգ 1» և «Մասրիկ 1» արևային կայանների ծրագրերը։
6. Ո՞ր փուլում է գտնվում «Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիրը և 2021-2025 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2021թ. մայիսի 13-ի N 749-Լ որոշման 9-րդ գլխի 1.3. կետով նախատեսված «Էներգետիկայի ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունման գործընթացը
7. Ի՞նչ աշխատանքներ են տարվում ՀՀ-ում հողմային էներգետիկայի զարգացման ուղղությամբ։

Հարգանքով՝ Վիկտորյա Բուռնազյան

Բջջ.

Էլ. հասցե՝ vicaburnazyan@gmail.com

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան,

10.02.2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

№ ԱԵ/17.1/5513-2025
17.02.25

«GOPA-PACE» կազմակերպության կողմից իրականացվող
«Աջակցություն Հայաստանին ՀԸԳՀ-ի իրականացման,
մշտադիտարկման և տեղեկացվածության բարձրացման»
ծրագրի փորձագետ
Վիկտորյա Բուռնազյանին
Էլ. հասցե՝ vicaburnazyan@gmail.com

Ի պատասխան Ձեր՝ 10.02.2025 թվականի հարցման

Հարգելի՝ տիկին Բուռնազյան

Ձեզ ենք ներկայացնում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավասության ոլորտներին առնչվող տեղեկատվությունը՝ «Աջակցություն Հայաստանին ՀԸԳՀ-ի իրականացման, մշտադիտարկման և տեղեկացվածության բարձրացման» ծրագրի շրջանակներում կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ու մեղմմանը վերաբերող միջոցառումների մշտադիտարկումն իրականացնելու նպատակով:

Առդիր՝ 1 (մեկ) էլեկտրոնային նյութ:

2/17/2025

X

ԱՐԹՈՒՐ ԵՐԻՑՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: YERITSYAN ARTUR 1609770064

Ա. Երիցյան

Կատարող՝ Միջազգային համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մկրտչյան
Հեռ. +37410511372

Տեղեկատվություն

ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ/CEPA) շրջանակում իրականացված աշխատանքների վերաբերյալ

1. **2021-2024թթ. ընթացքում ոռոգման համակարգերի արդիականացման քանի՞ ծրագիր է իրականացվել և ի՞նչ արդյունքներ են գրանցվել գործնականում:**

2024 թվականին ՀՀ-ում ՄԱԶԾ օժանդակությամբ իրականացված «Անցում ցածրածխածնային ոռոգման տեխնոլոգիաներին Լոռու և Շիրակի մարզերում բարձրացված արտադրողականության, պարենային անվտանգության բարելավված կենսապահովման համար» ծրագրի շրջանակներում իրականացվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում գործող «Բենիամին», Լոռու մարզի «Այրում-Ճոճկան» և «Ճոճկան» երկաստիճան պոմպակայանների արդիականացում՝ էներգաարդյունավետ պոմպակայանի և ցանցին միացված ֆոտովոլտային կայանների տեղադրման միջոցով, որոնք Շիրակի մարզում կնվազեցնեն էներգիայի ծախսերը մինչև 100%-ով և ՀՀ Լոռու մարզում՝ մինչև 90%-ով:

«Ոռոգման համակարգերի հիմնանորոգում» ծրագրի շրջանակներում 2021-2024 թվականներին իրականացվել են թվով 15 հիմնանորոգման աշխատանքներ, որից 8-ը դեռ ընթացքում են: Ոռոգման համակարգերի մայր և երկրորդ կարգի ջրանցքները ջրաչափական սարքավորումներով կահավորելու ծրագրի շրջանակներում 2021-2023 թվականներին 15 ջրօգտագործողների և «Ջրառ» ՓԲԸ-ի սպասարկման տարածքներում իրականացվել են ջրաչափական դիտակետերի կառուցման և ջրաչափական սարքավորումների տեղադրման աշխատանքներ:

2. **2021-2024թթ. ՀՀ ո՞ր համայնքներում են տեղադրվել ջրախնայող տեխնոլոգիաներ:**

ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի կողմից իրականացվող ՀՀ կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 14-ի N 1695-Լ, որոշման՝ «Մինչև 3 հա հողատարածքներում կաթիլային, անձրևացման ոռոգման համակարգերի ներդրման դեպքում ջրօգտագործողներին ոռոգման ջրի վարձավճարի փոխհատուցման» ծրագրի շահառու են դարձել թվով 10 ջրօգտագործող Այգեզարդ, Փոքր Վեդի, Նոր Եդեսիա, Վերնաշեն, Ակնալիճ Արգինա Գառնի, Արծվաբերդ և Դիտավան բնակավայրերից:

3. 2021-2024թթ. էներգախնայողության ոլորտում ի՞նչ ծրագրեր են իրականացվել:

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի կողմից 2022-2024թթ. ընթացքում Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի (EFSD) կողմից ֆինանսավորվող «Էներգաարդյունավետ տարածաշրջաններ. հասարակական շենքերում էներգախնայողության բարձրացման մեխանիզմների գործարկում և աջակցություն «կանաչ էներգետիկայի» զարգացմանը» ծրագրի շրջանակներում իրականացվել են էներգախնայողության միջոցառումներ հետևյալ հանրային օբյեկտներում՝

1. «Երևանի պոլիկլինիկա N 8»,
2. «Երևանի գեղասահքի և հոկեյի մարզադպրոց»,
3. Գյումրու քաղաքապետարանի «Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա»,
4. Գյումրու քաղաքապետարանի «Գրիգոր Նարեկացու անվան պոլիկլինիկա»,
5. Ալավերդու բժշկական կենտրոն,
6. Լոռու քաղաքապետարան,
7. Երևանի քաղաքապետարանի «Երքաղլույս» ՓԲԸ,
8. Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն,
9. «Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ,
10. «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան», 9-րդ մասնաշենք,
11. «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան», Գյումրու մասնաճյուղ,

12. «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ, «Արարատ» մասնաճյուղ,
13. «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան», 21-րդ մասնաշենք:

4. 2021-2024թթ. ՀՀ-ում սանիտարական նորմերին համապատասխան քանի՞ աղբավայր է հիմնվել, թափոնների վերամշակման քանի՞ ձեռնարկություն է գործում, վտանգավոր թափոնների չեզոքացման, կիզման քանի՞ ձեռնարկություն է գործում և որքա՞ն է նրանց ընդհանուր արտադրական ծավալը:

ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքում կառուցվել է ՀՀ-ում առաջին սանիտարական աղբավայրը: Գործարկումը նախատեսվում է 2025 թվականին՝ կապված աղբավայրը և փոխաբեռնման կայանները շահագործող հատուկ տեխնիկայի մատակարարման ժամկետների հետ: Նախարարությունում առկա տեղեկատվության համաձայն՝ հանրապետությունում գործում է 22 վերամշակման ձեռնարկություն: Կենցաղային թափոնների չեզոքացման և կիզման գործարաններ հանրապետությունում չեն գործում:

5. Ո՞ր փուլում են գտնվում «Այգ 1» և «Մասրիկ 1» արևային կայանների ծրագրերը:

«Մասրիկ-1»

«Մասրիկ-1» արևային էլեկտրակայանի կառուցման աշխատանքներն ավարտված են: Ներկայումս իրականացվում է կայանի կառուցման աշխատանքների ավարտը կիրառելի օրենքների համաձայն փաստաթղթավորելու գործընթացը:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2024թ. նոյեմբերի 27-ի №381-Ա որոշմամբ «Մասրիկ-1» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգվել է մինչև 2025թ. մարտի 1-ը:

«Այգ-1»

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը նախատեսում է ձևավորել աշխատանքային խումբ «Այգ-1» արևային էլեկտրակայանի կառուցման ծրագրի շրջանակում «Masdar»-ի հետ

բանակցությունների շարունակման և համապատասխան համաձայնությունների ապահովման նպատակով: ՀՀ ՏԿԵ նախարարության համապատասխան ներկայացուցիչն առաջադրվել է պլանավորվող աշխատանքներում մասնակցություն ունենալու համար:

«Այգ-1» 200 ՄՎտ հզորության արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման աշխատանքների ավարտն երկարաձգվել է մինչև 2027թ. դեկտեմբեր:

6. **Ո՞ր փուլում է գտնվում «Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիրը և 2021-2025 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2021թ. մայիսի 13-ի N 749-Լ որոշման 9-րդ գլխի 1.3. կետով նախատեսված «Էներգետիկայի ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունման գործընթացը:**

ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը ներկայացրել է «Ազգային մակարդակով սահմանված գործողությունների (այսուհետ՝ ԱՍԳ) ԱՍԳ գործընկերների աջակցության համակարգման պլան» փաստաթուղթը, ինչը մշակվել է Կառավարության կողմից ընդունված շուրջ 20 իրավական ակտի վրա:

Այս փաստաթղթի նպատակն է Հայաստանի Հանրապետության կառավարության և շահագրգիռ կողմերի համար ծառայել որպես պլանավորման, համակարգման և մշտադիտարկման գործիք կլիմայի փոփոխության մեղմմանը և հարմարվողականությանն առնչվող ոլորտներում՝ բացահայտելով կլիմայական կարիքները և ներգրավելով միջազգային աջակցություն՝ նպատակ ունենալով իրականացնել ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության ստանձնած հանձնառությունները:

2024 թվականի հոկտեմբերի 11-ին տեղի ունեցած «ԱՍԳ գործընկերների աջակցության համակարգման պլանի» շնորհանդեսին նվիրված աշխատաժողովում փաստաթուղթը ներկայացվել է ազգային շահագրգիռ կողմերին և միջազգային գործընկերներին:

7. Ի՞նչ աշխատանքներ են տարվում ՀՀ-ում հողմային էներգետիկայի զարգացման ուղղությամբ:

Էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրով (մինչև 2040թ.) նախատեսվում է հողմային կայանների կառուցում՝ փոքր և համակարգային նշանակության մինչև 500 ՄՎտ հզորությամբ՝ մրցակցային սակագնային առաջարկների առկայության դեպքում: Հողմային էներգիայի ներուժի գնահատման և հողմակայաններ կառուցելու համար ներդրումային փաթեթների ձևավորման աշխատանքների իրականացման նպատակով Ասիական զարգացման բանկը տրամադրել է տեխնիկական աջակցություն:

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը հանդիսանում է հողմային էներգիայի ծրագրի իրականացնող կողմ: Նախատեսվում է իրականացնել նորագույն տեխնոլոգիաներով քամու ներուժի չափումներ, հաշվարկներ և վերլուծություններ:

Ծրագիրն իրականացման փուլում է. երկու չափիչ կայաններն արդեն տեղադրված և գործում են, երրորդ չափիչ կայանի տեղադրումն ընթացքի մեջ է:

Իրականացվում է նաև ներդրումային փաթեթի մաս կազմող բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման պլանի պատրաստում:

Հավելված 5

ՀՀ Լոռու մարզի Փամբակի համայնքապետ
պարոն Սուրեն Կոստանդյանին
GOPA-PACE կազմակերպության կողմից իրականացվող
«Աջակցություն Հայաստանին ՀԸԳՀ-ի իրականացման,
մշտադիտարկման և տեղեկացվածության բարձրացման»
ծրագրի փորձագետ Վիկտորյա Բուռնազյանից

ՀԱՐՑՈՒՄ

Հարգելի պարոն Կոստանդյան,

GOPA-PACE կազմակերպության կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանին ՀԸԳՀ-ի իրականացման, մշտադիտարկման և տեղեկացվածության բարձրացման» ծրագրի շրջանակներում պետք է պատրաստվի զեկույց «Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» կատարողականի վերաբերյալ: Ես ներկայացնելու եմ կլիմայի փոփոխության հարմարվողականության ու մեղմմանը վերաբերող միջոցառումների մշտադիտարկման արդյունքները: Այդ նպատակով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

- Փամբակ համայնքի 2021-2024թթ. սուբվենցիոն ծրագրերում արդյո՞ք ներառված են կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման միջոցառումներ: Եթե առկա են նման միջոցառումներ, խնդրում ենք նշել այդ միջոցառումների անվանումները:
- Փամբակ համայնքի 2021-2024թթ. համայնքային զարգացման ծրագրում արդյո՞ք ներառված են կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման միջոցառումներ: Եթե առկա են նման միջոցառումներ, խնդրում ենք նշել այդ միջոցառումների անվանումները:
- Գործող իրավակարգավորումներն արդյո՞ք բավարար են կլիմայական ծրագրերի կազմման համար:
- Համայնքն իրականացրե՞լ է կլիմայական ռիսկերի գնահատում և ունի՞ գնահատման համապատասխան կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման մշակված ծրագիր/ռազմավարություն: Եթե այո, ապա արդյո՞ք այդ աշխատանքները պատվիրակվել են համայնքապետարանի համապատասխան խմբի կամ մասնագետի:
- Ունե՞ք դժվարություններ ՀՀ կառավարության 2024 թվականի հունվարի 11-ի «Ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման կարգը հաստատելու մասին» N 54-Ն որոշմամբ ամրագրված՝ ՏԻՄ-ի կողմից ներկայացվող համապատասխան հաշվետվության կազմման գործում: Եթե այո, ապա խնդրում ենք նշել դրանք:

- 2021-2024թթ. միջազգային կազմակերպությունների աջակցությամբ համայնքում կլիմայական հարմարվողականությանը և մեղմմանն ուղղված ի՞նչ միջոցառումներ կամ ծրագրեր են իրականացվել (անտառտնկում, անտառային տնկարկների հիմնում, տոհմային կենդանիների բուծում, կամ դրան ուղղված պիլոտային ծրագրեր, ոռոգման համակարգերի արդիականացում, համայնքային նշանակության շինությունների էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացում և այլն)։

Հարգանքով՝

Վիկտորյա Բուռնազյան

Բջջ.

Էլ. հասցե՝ vicaburnazyan@gmail.com

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան,

04.02.2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ Լոռու մարզ, գ.Փամբակ, Հեռ. +374 98393131, info@pambak.am

N Ե-0375/25
03 մարտ 2025թ.

**GOPA-PACE ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ,
ԾՐԱԳՐԻ ՓՈՐՁԱԳԵՏ ՎԻԿՏՈՐՅԱ ԲՈՒՌՆԱԶՅԱՆԻՆ**

Ի պատասխան Ձեր 04.02.2025 թ. գրության.

Հայտնում եմ, որ

1. Փամբակ համայնքի 2021-2024թթ. սուբվենցիոն ծրագրերում ներառված են կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման միջոցառումներ: Կից ներկայացված ֆայլում ներկայացված են կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման միջոցառումներ պարունակող 2021-2024թվականներին իրականացված սուբվենցիոն ծրագրերը:

2. Փամբակ համայնքի 2021-2024թթ. համայնքային զարգացման ծրագրում նույնպես ներառված են կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման միջոցառումներ: Կից ներկայացված ֆայլում ներկայացված են կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման միջոցառումներ պարունակող 2021-2024 թվականներին իրականացված համայնքային զարգացման ծրագրերը:

3. Գործող իրավակարգավորումները բավարար չեն կլիմայական ծրագրերի կազմման համար:

4. Համայնքը չի իրականացրել կլիմայական ռիսկերի գնահատում և չունի գնահատման համապատասխան կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման մշակված ծրագիր/ռազմավարություն:

5. ՀՀ կառավարության 2024 թվականի հունվարի 11-ի «Ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման կարգը հաստատելու մասին» N 54-Ն որոշմամբ ամրագրված՝ ՏԻՄ-ի կողմից ներկայացվող համապատասխան հաշվետվության կազմման գործում դժվարություններ չկան:

6. 2021-2024թթ. միջազգային կազմակերպությունների աջակցությամբ համայնքում կլիմայական հարմարվողականությանը և մեղմմանն ուղղված միջոցառումները կամ ծրագրերը (անտառտնկում, անտառային տնկարկների հիմնում, տոհմային կենդանիների բուծում, կամ դրան ուղղված պիլոտային ծրագրեր, ոռոգման համակարգերի արդիականացում, համայնքային նշանակության շինությունների էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացում և այլն) ներկայացված են կից ֆայլում:

Recoverable Signature

X

Signed by: KOSTANDYAN SUREN 1711880647

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ս. ԱՆԱՆՅԱՆ

Կատ. Գլխավոր մասնագետ 2.3- 4՝ Ա. Հովհաննիսյան
+37493749377

2021-2024թթ. միջազգային կազմակերպությունների աջակցությամբ համայնքում կլիմայական հարմարվողականությանը և մեղմմանն ուղղված միջոցառումները կամ ծրագրերը (անտառտնկում, անտառային տնկարկների հիմնում, տոհմային կենդանիների բուծում, կամ դրան ուղղված պիլոտային ծրագրեր, ոռոգման համակարգերի արդիականացում, համայնքային նշանակության շինությունների էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացում և այլն)

Հհ	Բնակավայրի անվանումը	Ծրագրի անվանումը	Իրականացնող կողմերը	Ծրագրի ամսաթիվը
1	Թագում	Ոռոգման խողովակաշարի վերանորոգում	<<ՇԵՆ>> ԲԿ	2023-2024 մայիս
2	Թագում	Պտղատու այգի	<<Ասողիկ>> ԲԿ	2024 մարտ
3	Վահագնի	Ագրոանտառի հիմնում	ՇԵՆ բարեգործական հիմնադրամ	2024-2025
4	Դեբետ	Ծառատունկ	Էյ Թի Փի և Դեբետ զարգացման	2024
5	Լեռնաջուր	անտառտնկման աշխատանքներ՝	«Իմ անտառ Հայաստան» («ՄԱՅՖՈՐԵՍԹ. ԷՅԷՍ») բնապահպանական կազմակերպության	2023

Կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման միջոցառումներ պարունակող 2021-2024թվականներին իրականացված սուբվենցիոն ծրագրերը:

1	Եղեգնուտ Լեռնաջուր	Փամբակ համայնքի Եղեգնուտ և Լեռնաջուր բնակավայրերի կենտրոնական փողոցների լուսավորության համակարգերի կառուցում և նորոգում՝ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրմամբ	Փամբակի համայնքապետարան,Հ Հ կառավարություն	2022
2	Փամբակ,Վահագնաձոր և Թագում	Փամբակ,Վահագնաձոր և Թագում բնակավայրերի կենտրոնական փողոցների լուսավորության համակարգերի նորոգում ՝ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրմամբ	Փամբակի համայնքապետարան,Հ Հ կառավարություն	2024

կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման միջոցառումներ պարունակող 2021-2024թվականներին իրականացված համայնքային զարգացման ծրագրերը

1	Դեբետ, Եղեգնուտ, Մարգահովիտ	Դեբետ, Եղեգնուտ, Մարգահովիտ բնակավայրերի վարչական շենքերի տանիքներին արևային պանելների տեղադրում	«Բնության համաշխարհային հիմնադրամ»	2023
2	Փամբակի	Փամբակի համայնքապետարանի շենք		2023
3	Եղեգնուտ	Եղեգնուտ բնակավայրի ժամանցի կենտրոնում		2022
4	Արջուտ	Արջուտ բնակավայրի մանկապարտեզ		2022
5	Թագում	Թագում բնակավայրի մշակույթի տուն		2023
6	Մարգահովիտ	Մարգահովիտ բնակավայրի մանկապարտեզ		2021
7	Լեռնաջուր	Լեռնաջուր բնակավայրի վարչական շենք		2022
8	Ագնիաձոր	Ագնիաձոր բնակավայրի վարչական շենք		2022

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետ
պարոն Դավիթ Սարգսյանին
GOPA-PACE կազմակերպության կողմից իրականացվող
«Աջակցություն Հայաստանին ՀԸԳՀ-ի իրականացման,
մշտադիտարկման և տեղեկացվածության բարձրացման»
ծրագրի փորձագետ Վիկտորյա Բուռնազյանից

ՀԱՐՑՈՒՄ

Հարգելի պարոն Սարգսյան,

GOPA-PACE կազմակերպության կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանին ՀԸԳՀ-ի իրականացման, մշտադիտարկման և տեղեկացվածության բարձրացման» ծրագրի շրջանակներում պետք է պատրաստվի զեկույց «Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» կատարողականի վերաբերյալ: Ես ներկայացնելու եմ կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ու մեղմմանը վերաբերող միջոցառումների մշտադիտարկման արդյունքները: Այդ նպատակով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

- Դիլիջան համայնքի 2021-2024թթ. սուբվենցիոն ծրագրերում արդյո՞ք ներառված են կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման միջոցառումներ: Եթե առկա են նման միջոցառումներ, խնդրում եմ նշել այդ միջոցառումների անվանումները:
- Դիլիջան համայնքի 2021-2024թթ. համայնքային զարգացման ծրագրում արդյո՞ք ներառված են կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման միջոցառումներ: Եթե առկա են նման միջոցառումներ, խնդրում եմ նշել այդ միջոցառումների անվանումները:
- Գործող իրավակարգավորումներն արդյո՞ք բավարար են կլիմայական ծրագրերի կազմման համար:
- Համայնքն իրականացրե՞լ է կլիմայական ռիսկերի գնահատում և ունի՞ գնահատմանը համապատասխան կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման մշակված ծրագիր/ռազմավարություն: Եթե այո, ապա արդյո՞ք այդ աշխատանքները պատվիրակվել են համայնքապետարանի համապատասխան խմբի կամ մասնագետի:
- Ունե՞ք դժվարություններ ՀՀ կառավարության 2024 թվականի հունվարի 11-ի «Ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման կարգը հաստատելու մասին» N 54-Ն որոշմամբ ամրագրված՝ ՏԻՄ-ի կողմից ներկայացվող համապատասխան հաշվետվության կազմման գործում: Եթե այո, ապա խնդրում ենք նշել դրանք:

- 2021-2024թթ. միջազգային կազմակերպությունների աջակցությամբ համայնքում կլիմայական հարմարվողականությանը և մեղմմանն ուղղված ի՞նչ միջոցառումներ կամ ծրագրեր են իրականացվել (անտառտնկում, անտառային տնկարկների հիմում, տոհմային կենդանիների բուծում, կամ դրան ուղղված պիլոտային ծրագրեր, ոռոգման համակարգերի արդիականացում, արոտավայրերում խմոցների տեղադրում, համայնքային նշանակության շինությունների, փողոցների էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացում, համայնքային արևային կայանի հիմում և այլն)։

Հարգանքով՝

Վիկտորյա Բուռնազյան

Բշջ.

էլ. հասցե՝ vicaburnazyan@gmail.com

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան,

04.02.2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան փ., շ. 55, Հեռ. (060)700131

N 289-25
06 փետրվար 2025 թ.

«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ
ՀԸԳՀ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ,
ՄՇՏԱԴԻՐԿՄԱՆ ԵՎ
ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ
ԾՐԱԳԻՐ
ՓՈՐՁԱԳԵՏ
ՎԻԿՏՈՐՅԱ ԲՈՒՌՆԱԶՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Բուռնազյան.

Ի պատասխան Ձեր 04/02/2025 հարցմանը, կից ներկայացվում է Դիլիջան համայնքում կլիմայի փոփոխության հարմարվողականության ու մեղմման վերաբերյալ տեղեկատվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Կատ.՝ ՀՀ Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի
ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի
առաջատար մասնագետ
Վարդան Մկրտչյան
+37460700134

ՀԱՐՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆ

1. Դիլիջան համայնքի 2021-2024 թթ. սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացվել են կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման միջոցառումներ՝ մասնավորապես 2021 թվականի սուբվենցիաների շրջանակներում իրականացվել է «Դիլիջան քաղաքի 11 բազմաբնակարան բնակելի շենքերի վերանորոգում և էներգաարդյունավետ արդիականացում» ծրագիրը:
2. Դիլիջան համայնքի 2022-2027 թթ. զարգացման ծրագրում ներառված են կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման վերաբերյալ, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պահպանմանը ուղղված տեղեկատվությունը: Զարգացման ծրագրին կարող եք ծանոթանալ այցելելով՝ https://dilijancity.am/Pages/Home/Default.aspx կայքը:
3. Գործող իրավակարգավորումներից՝ ՀՀ կառավարության 13/05/2021 թվականի N 749-Լ որոշումը, որտեղ սահմանված է կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիրը, այդ թվում՝ հաստատված է 2021-2025 թվականների միջոցառումների ցանկը:
4. Համայնքապետարանի համապատասխան մասնագետների կողմից պարբերաբար իրականացվում են կլիմայի ռիսկերի գնահատման մշտադիտարկման աշխատանքներ՝ համայնքի առավել ռիսկային գոտիներում կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման միջոցառումներ կազմակերպելու. հետագա գործողություններն իրականացնելու նպատակով: Ռազմավարությունը դեռ առկա չէ:
5. Դժվարություններ առկա չեն:
6. Դիլիջան համայնքում 2021-2024 թթ. ընթացքում միջազգային կազմակերպությունների աջակցությամբ կլիմայի հարմարվողականության և մեղմման ուղղված միջոցառումների շրջանակներում իրականացվել են մի շարք ծրագրեր, մասնավորապես՝ արևային կայանների հիմնում, խմոցների տեղադրում, ոռոգման ցանցերի արդիականացում, կառուցում և այգիների հիմնում:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետ
պարոն Հովհաննես Հովեյանին
GOPA-PACE կազմակերպության կողմից իրականացվող
«Աջակցություն Հայաստանին ՀԸԳՀ-ի իրականացման,
մշտադիտարկման և տեղեկացվածության բարձրացման»
ծրագրի փորձագետ Վիկտորյա Բուռնազյանից

ՀԱՐՑՈՒՄ

Հարգելի պարոն Հովեյան,

GOPA-PACE կազմակերպության կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանին ՀԸԳՀ-ի իրականացման, մշտադիտարկման և տեղեկացվածության բարձրացման» ծրագրի շրջանակներում պետք է պատրաստվի զեկույց «Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» կատարողականի վերաբերյալ: Ես ներկայացնելու եմ կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ու մեղմմանը վերաբերող միջոցառումների մշտադիտարկման արդյունքները: Այդ նպատակով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

- Մարտունի համայնքի 2021-2024թթ. սուբվենցիոն ծրագրերում արդյո՞ք ներառված են կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման միջոցառումներ: Եթե առկա են նման միջոցառումներ, խնդրում եմ նշել այդ միջոցառումների անվանումները:
- Մարտունի համայնքի 2021-2024թթ. համայնքային զարգացման ծրագրում արդյո՞ք ներառված են կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման միջոցառումներ: Եթե առկա են նման միջոցառումներ, խնդրում ենք նշել այդ միջոցառումների անվանումները:
- Գործող իրավակարգավորումներն արդյո՞ք բավարար են կլիմայական ծրագրերի կազմման համար:
- Համայնքն իրականացրե՞լ է կլիմայական ռիսկերի գնահատում և ունի՞ գնահատմանը համապատասխան կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման մշակված ծրագիր/ռազմավարություն: Եթե այո, ապա արդյո՞ք այդ աշխատանքները պատվիրակվել են համայնքապետարանի համապատասխան խմբի կամ մասնագետի:
- Ունե՞ք դժվարություններ ՀՀ կառավարության 2024 թվականի հունվարի 11-ի «Ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման կարգը հաստատելու մասին» N 54-Ն որոշմամբ ամրագրված՝ ՏԻՄ-ի կողմից ներկայացվող համապատասխան հաշվետվության կազմման գործում: Եթե այո, ապա խնդրում ենք նշել դրանք:

- 2021-2024թթ. միջազգային կազմակերպությունների աջակցությամբ համայնքում կլիմայի փոփոխության հարմարվողականությանը և մեղմմանն ուղղված ի՞նչ միջոցառումներ կամ ծրագրեր են իրականացվել (անտառտնկում, անտառային տնկարկների հիմում, տոհմային կենդանիների բուծում, կամ դրան ուղղված պիլոտային ծրագրեր, ոռոգման համակարգերի արդիականացում, արոտավայրերում խմոցների տեղադրում, համայնքային նշանակության շինությունների, փողոցների էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացում, համայնքային արևային կայանի հիմում և այլն)։

Հարգանքով՝

Վիկտորյա Բուռնազյան

Բջջ.

Էլ. հասցե՝ vicaburnazyan@gmail.com

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան,

04.02.2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

N 187

«07» փետրվարի 2025թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղաք Մարտունի,Շահումյան փողոց 2
☎ 060743401
Էլ. փոստ՝ info@martuni.am

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՀԸԳՀ-Ի
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ
ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ
ՓՈՐՁԱԳԵՏ ՎԻԿՏՈՐՅԱ ԲՈՒՌՆԱԶՅԱՆԻՆ

Հարգելի՝ Բուռնազյան.

Ի պատասխան Ձեր 2025 թվականի փետրվարի 05-ի գրավոր հարցմանը՝ տրամադրում ենք պահանջվող տեղեկատվությունը.

1. Մարտունի համայնքի 2021-2024թթ. սուբվենցիոն ծրագրերով առկա են կլիմայի փոփոխության և հարմարվողականության մեղման միջոցառումներ:
2. Մարտունի համայնքի 2021-2024թթ. համայնքային զարգացման կլիմայի փոփոխության և հարմարվողականության մեղման ծրագրեր են իրականացվել՝ մասնավորապես.
ա/ ոռոգման համակարգերի արդիականացում, բարելավում և նոր ջրագծերի կառուցում,
բ/ հեղեղատարների կառուցում և մաքրում,
գ/ փողոցային լուսավորության համակարգը լեդ լամպերով կահավորում,
դ/համայնքային շենք շինությունների վրա տեղադրվել են արևային ջրատաքացուցիչներ, ինչպես նաև ֆոտովոլտային պանելներ,
ե/ Ծովինար բնակավայրում հիմնվել է 3,5 հա մակերեսով ագրոանտառ:
3. Գործող իրավակարգավորումներն բավարար են կլիմայի ծրագրերի կազմման համար:
4. Համայնքը հնարավորություն չունի իրականացնելու կլիմայի ռիսկերը գնահատելու մեխանիզմ:
5. Համայնքում ջեմոցային տնտեսություններ չկան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա.ՇԱՀԻՆՅԱՆ

Կատարող՝ Հ.Հարությունյան
Գյուղատնտեսության և
բնապահպանության բաժին
Հեռ.՝ 093716713

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիսի համայնքապետ
պարոն Արթուր Ստեփանյանին
GOPA-PACE կազմակերպության կողմից իրականացվող
«Աջակցություն Հայաստանին ՀԸԳՀ-ի իրականացման,
մշտադիտարկման և տեղեկացվածության բարձրացման»
ծրագրի փորձագետ Վիկտորյա Բուռնազյանից

ՀԱՐՑՈՒՄ

Հարգելի պարոն Ստեփանյան,

GOPA-PACE կազմակերպության կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանին ՀԸԳՀ-ի իրականացման, մշտադիտարկման և տեղեկացվածության բարձրացման» ծրագրի շրջանակներում պետք է պատրաստվի զեկույց «Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» կատարողականի վերաբերյալ: Ես ներկայացնելու եմ կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ու մեղմմանը վերաբերող միջոցառումների մշտադիտարկման արդյունքները: Այդ նպատակով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

- Եղեգիս համայնքի 2021-2024թթ. սուբվենցիոն ծրագրերում արդյո՞ք ներառված են կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման միջոցառումներ: Եթե առկա են նման միջոցառումներ, խնդրում ենք նշել այդ միջոցառումների անվանումները:
- Եղեգիս համայնքի 2021-2024թթ. համայնքային զարգացման ծրագրում արդյո՞ք ներառված են կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման միջոցառումներ: Եթե առկա են նման միջոցառումներ, խնդրում ենք նշել այդ միջոցառումների անվանումները:
- Գործող իրավակարգավորումներն արդյո՞ք բավարար են կլիմայական ծրագրերի կազմման համար:
- Համայնքն իրականացրե՞լ է կլիմայական ռիսկերի գնահատում և ունի՞ համապատասխան կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման մշակված ծրագիր/ռազմավարություն: Եթե այո, ապա արդյոք այդ աշխատանքները պատվիրակվել են համայնքապետարանի համապատասխան խմբի կամ մասնագետի:
- Ունե՞ք դժվարություններ ՀՀ կառավարության 2024 թվականի հունվարի 11-ի «Ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման կարգը հաստատելու մասին» N 54-Ն որոշմամբ ամրագրված՝ ՏԻՄ-ի կողմից ներկայացվող համապատասխան հաշվետվության կազմման գործում: Եթե այո, ապա խնդրում ենք նշել դրանք:

- 2021-2024թթ. միջազգային կազմակերպությունների աջակցությամբ համայնքում կլիմայական հարմարվողականությանը և մեղմմանն ուղղված ի՞նչ միջոցառումներ կամ ծրագրեր են իրականացվել (անտառտնկում, անտառային տնկարկների հիմում, տոհմային կենդանիների բուծում, կամ դրան ուղղված պիլոտային ծրագրեր, ոռոգման համակարգերի արդիականացում, արոտավայրերում խմոցների տեղադրում, համայնքային նշանակության շինությունների էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացում, համայնքային արևային կայանի հիմում և այլն)։

Հարգանքով՝

Վիկտորյա Բուռնազյան

Բջջ.

Էլ. հասցե՝ vicaburnazyan@gmail.com

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան,

04.02.2025թ.